






ԳՐԵԳՈՐ
ՆՐԵԿՆԻ

ՏԱՂԵՐ







Գրքուր
ՆԱՐԵԿԱՃԻ
ՏԱՂԵՐ



Հայպետհրատ
Երեվան
1957

**Տեխտի քարգմանությունը,
ներածականն ու ծանոթագրությունները
ԱՐՇԱՎԻՐ ՄԵԻԹԱՐՅԱՆԻ
Խմբագրությամբ՝
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒ**

**ГРИГОР НАРЕКАЦИ
ПЕСНИ
(На армянском языке)
Айпетрат, Ереван, 1957**

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1

Արաբական իշխանության երեք հարյուր տարի տևող ուժեղ ժանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսական-քաղաքական և կուլտուրական կյանքին, բայց խալիֆաթի տիրապետության քայքայման և անկման հետևյալնքով Հայաստանում ուժեղանում են ֆեոդալական մի քանի նախարարություններ, որոնց մեջ առանձնապես պատմական մեծ դեր խաղացին Բագրատունիները: Սկսում է զարգացած ֆեոդալիզմի շրջանը Հայաստանում, որի ընդերքում աճում են նոր արտադրական բուրժուական հարսբերություններ, մեծանում են քաղաքները, զարգանում է արհեստագործությունը և ակտիվանում քաղաքային բնակչության դերը հասարակական կյանքում:

Հայաստանը մինչև սելջուկների արշավանքները և բյուզանդիայի զավթումները Աշոտ Երկրորդից (Երկաթ) հետո ապրեց երկարատև խաղաղության շրջան:

Երկրում թեև մի կողմից ամրանում էր ֆեոդալական-կալվածատիրական իրավունքը, մյուս կողմից ունեզրկված գյուղացիների հաշվին աճում էր քաղաքային բնակչությունը, շատանում էին արհեստավորական-համաքյարական կազմակերպությունները: Գյուղացիության հաշվին մեծացող քաղաքը տնտեսական ուժեղ ազդեցություն էր սկսում ձեռք բերել գյուղատնտեսության, այդ թվում նաև ֆեոդալական կալվածքների վրա: Ուռճացած քաղաքացի բուրժուան (առևտրա-վաշխառուն) իրենից ոչ միայն կախման մեջ էր սկսում պահել գյուղացուն, այլև խոշոր հողատեր ազնվականին:

Արաբական և բյուզանդական պատերազմների հետևանքով դադարել էին գործելուց միջազգային առևտրի հարավային ճանապարհները, և Արևմուտքի ու Արևելքի մեջ առևտուրը կատարվում էր Հայաստանի վրայով: Ապրանքափոխանակության և դրամական հարաբերությունների զարգացման հետևանքով առևտրական բանուկ ուղիների վրա բարգավաճման հասան Հայաստանի ինչպես հին, այնպես էլ նոր քաղաքները, Հայաստանում սկսվում էր շինարարության բուռն վերելք, որպիսին նա դեռ չէր ապրել մինչև այդ շրջանը: Աշոտ 3-րդի ժամանակ (953—977 թ.) Անին դարձավ

համահայկական մայրաքաղաք: Անիում կառուցվեցին պարիսպներ, պալատներ, առևտրական հիմնարկություններ, շուկաներ, արհեստանոցներ, բաղանիքներ, քաղաքային ինքնավարության շենքեր, շքեղ եկեղեցիներ և այլն: Ժամանակակիցների վկայությամբ Անին ունեցել է 100.000 բնակիչ և դարձել ոչ միայն Հայաստանի, այլև Արևելքի կուլտուրական խոշորագույն կենտրոններից մեկը:

Երկրորդ մեծ քաղաքը Դվինն էր, որը հայտնի էր որպես արհեստավորական և առևտրական խոշոր կենտրոն: Հարուստ և առևտրաշահ քաղաքներից էին նաև Արծնը, որի բնակչությունը 10—11-րդ դարերում հաշվվում էր 150 հազար, Վանը, Նախճավանը, Հերը, Բաղեշը, Կարսը, Մանազկերտը, Խլաթը, Մուշը և այլն: Արաբական պատմիչների վկայությամբ Արաքսի գետահովտում կային 1000 քաղաք և գյուղ, իսկ Վասպուրականն ուներ տասը քաղաք, 72 բերդ և ամրոց, 115 վանք և 4000 գյուղ:

10—11-րդ դարերի տնտեսական և կուլտուրական վերելքը թեև որոշ իդեալականացումով, նկարագրում են մեր պատմիչներն ու տարեգիրները: Սմբատ 1-ի ժամանակի մասին (890—914 թ.) Հովհ. Դրասխանակերտցին գրում է, որ ամեն մեկը բնակվեց իր հայրենական կավածքում և «տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց... զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց, լցան գուրք գինոյ ի կութս այգեստանեայց և լերինք ցնձութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց և ճօթ ոչխարաց»¹:

Իսկ Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) իր մեկ վկայությամբ շեշտը դնում է քաղաքային կյանքի զարգացման վրա, որ Աշոտ 1-ի և Սմբատ 1-ի ժամանակ «պարապկաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ ու ընչեղութեամբ, մինչև հովուաց և անզէտրդաց մետաքսեայ զգենուլ պատմուճան»²:

Տնտեսապես հարստացած Հայաստանը աշխույժ ապրանքափոխանակության մեջ էր մտել հարևան պետությունների հետ: Հայաստանից արտահանվում էին արհեստագործական, լեռնային արդյունաբերության ապրանքներ, գյուղատնտեսական մթերքներ, սննդամթերքների այլ տեսակներ, անասուն և այլն: Հայ առևտրականները հասնում էին մինչև Կիևյան Ռուսիա, Մերձվոլգյան մարզեր, Ապենինյան թերակղզի, Պարսկաստան, Միջագետք և այլ վայրեր: Հայաստանի արհեստանոցները ներքին և արտաքին շուկային մատակարարում էին բավական նուրբ և թանկարժեք արտադրանք—բրդե, բամբակե և մետաքսե գործվածքներ, կտորեղեն, հագուստներ, գոտիներ, գլխի փաթթոցներ, ծածկուցներ, բարձերի, բազմոցների երեսներ, վարազույրներ, գորգեր և այլն: Մյուս նուրբ արհեստներից առանձնապես զարգացած էր

1 Հովհ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ. էջ 199:

2 Ստ. Տարոնեցի, «Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 161:

ուսկերչութիւնը, ինչպես և պերճանքի այլ առարկաների արտագրութիւնը:

Ապրանքափոխանակութեան և առևտրական շախուժ հարաբերութիւնների հետեանքով մեծաքանակ դրամական միջոցներ էին կուտակվում երկրում, կապիտալը ձեռք էր բերում իր նախնական կուտակմանը բնորոշ՝ վաշխառուական հատկութիւնը: Նատուրալ հարկերին փոխարինում էին դրամական հարկերը, աշխատավոր ժողովուրդը խիստ կախման մեջ էր ընկնում փողատերերից, աղքատանում և ունեզրկվում, իսկ հարստութիւնը կուտակվում էր փոքրաթիվ մարդկանց ձեռքին: Մատթեոս Ուռհայցիին վկայում է, որ 11-րդ դարի կեսին Արծն քաղաքում ապրող Դավթակ քորեպիսկոպոսի տնից վարի գուրս էր գալիս 2400 զուլգ եզ, և երբ սելջուկները կողոպտում են նրա տունը, «քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա»¹:

Տնտեսական նոր հարաբերութիւնների բեկման և զարգացման հետեւանքով երկրի ներսում է՛լ ավելի խորացան դասակարգային հակամարտութիւնները: Այս կեղերումների մասին 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցիին գրում է, թե արդարութեան օրերնք անիրավութիւն դարձավ, արծաթասիրութիւնն ավելի հարգի եղավ, քան աստվածասիրութիւնը, իշխաններն եղան գողերին գողակից, վրիժառու և արծաթի ծառաներ, իսկ դատավորները կաշառառուներ էին, կաշառքի համար հափշտակում էին իրավունքը:

«Յարգի եղև արծաթասիրութիւն քան զաստուածասիրութիւն, և մամոնայն քան զՔրիստոս... վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ բազմասպտկութիւն... որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գօլ, և որ յափշտակէր՝ ասէր. «Ես հզօր եմ»: Զտունս տնակից աղքատացն, և զասհմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն»²:

Կյանքի նույն պատկերը արտացոլված է նաև Նարեկացու «Ողբերգութեան մատեան»-ում: Նա մարդու կյանքի, կամ դժոխարմատ ծառի դառնութեան պտուղների մեջ նշում է նաև «Վաճառական վատնիչ, շահարար շուսյտեալ, պաշտօնեայ արբեցող, գանձուց ոստիկան երկմիտ... մեծատուն ժխտող: Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ... Արքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգեկործան, իշխան տիրադաւ, զօրավար զրկող, դատաւոր ակնառու...»³:

Աշխատավորական մասսաները, լուռ և անմունչ չէին տանում շահագործման ծանր լուծը: Դասակարգային հարաբերութիւնների սրվածութիւնը առաջին հերթին արտահայտվում էր գլուղացիական ապստամբութիւնների մեջ, որոնք կրում էին թոնդրակյան աղանդավորական անունը:

Պավլիկյանների շարժումը Բյուզանդիայի կողմից Հայաստանում ճնշվելուց անմիջապէս հետո, 9-րդ դարի վերջին սկսվում է մի այլ մասսայական՝

¹ Մատթեոս Ուռհայցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 103:

² Ար. Լաստիվերտցի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1912 թ., էջ 79—80:

³ «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 143:

Թոնդրակյան շարժումը: Այդ շարժման ղեկավարն էր Մմբատ Զարեհավանցին, որը շատ զարգացած մարդ էր, ուսումնասիրել էր աղանդավորական ուսմունքները և հին հունական փիլիսոփայությունը:

Թոնդրակեցիներին չհամակրող Հովհաննես Դրասխանակերտցին գյուղացիական մասսայական ապստամբությունների մասին գրում է, որ «նուազունքն քան զմեծամեծսն ձեռներեց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեսրս տրեխատրեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս՝ խորխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ: Իսկ թագաւորք մեր և պէտք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնքն էին՝ ջանային վարատել և խել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս: Այլ և եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ ի նախանձ և ի շարակնութիւն և ի գրգռութիւն և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին: Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և ի կռիւ պայքարէին. և միշտ սուր յազդեր ունելով՝ բազում ևս քան զթշնամիսն հեղուին ի միմեանց զարեան ճապաղիս. և առհասարակ զբաղաբս և զգեօղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իրեանց քանդէին ձեռօք իրեանց»¹:

Այդպիսի զինված ապստամբություններ բռնկեցին Այրարատում, Վասպուրականում, Սյունիքում և այլ նահանգներում:

«Թոնդրակյան աղանդավորների գաղափարախոսությունը,— գրում է ակադ. Մանանդյանը,— հիմնականում մի սուր բողոք էր ոչ միայն հզփացած ու ալլասերվող տիրող եկեղեցու դեմ, այլ նաև հայկական ֆեոդալիզմի և իշխող դասերի հարստահարությունների ու ճնշման դեմ»²:

Թոնդրակեցիները ժխտում էին հոգևոր պետերի իշխանությունը ստորագասների վրա, Քրիստոսի աստված լինելը, կրոնական սկզբունքների մեծ մասը և պաշտոնական եկեղեցին, «Զեկեղեցի և զեկեղեցույ կարգաւորութիւն բնաւ ոչ ընդունէին»²: Նրանք ձգտում էին վերացնել հարկը, ֆեոդալների իրավունքները գյուղացիների նկատմամբ, նրանց դասային արտոնությունները, քարոզում էին սոցիալական հավասարություն, իրենց կենտրոններում կազմակերպում էին համայնքներ: Նրանք կյանքի նկատմամբ ունեին մատերիալիստական հայեցողություն՝ մերժում էին հանդերձալ աշխարհը և ընդունում էին երկրայինը, որ այս կյանքի վայելքներից և մարդուց դուրս, ուրիշ կյանք և վայելք գոյություն չունի: Թոնդրակեցիները քարոզում էին քաղաքացիական ամուսնություն, կնոջ և տղամարդու իրավահավասարություն, չէին ընդունում սուրբ հոգու գոյությունը, մերժում էին եկեղեցու խորհուրդ-

¹ Հովհ. Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 258—259:

² «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940 թ., էջ 44:

ներն ու ծիսակատարութիւնները—ձեռնադրութիւնը, մկրտութիւնը, ծննդաբնութիւնը, աղոթքը և հաղորդութիւնը:

10-րդ դարի վերջերից եկեղեցու կողմից լայն տարածում էր ստացել վարձով «մեղքերին թողութիւն, հանցանքներին բավութիւն շնորհելը»:

Թոնդրակեցիները ծաղրում էին այդ և նման այլ կեղծիքներ: Նրանք 1011 թ. կործանեցին «մեղքերին թողութիւն տվող» Մանանաղի գավառի Բազմաղբյուր վայրի այդպիսի ուխտատեղիներից մեկը: Նույնպիսի մի այլ դեպք հիշատակում է Գր. Մագիստրոսը, որ թոնդրակեցի առաջնորդներից Կյուրեղը եկեղեցում պատարագի ժամին բացատրում է ժողովրդին հաղորդութիւն կեղծիքը, անարգում է նշխարը և հայհոյում սուրբ Կույսին, իսկ Ստեփանոս Օրբելյանը պատմում է, թե ինչպես Տաթևի վանքի վրա հարձակված ցուցաբերողները վերցնում են սափորով մեռուներ և թափում են ժայռից: Թոնդրակյան գաղափարները լայն արձագանք էին գտնում գյուղի և քաղաքի աշխատավոր մասսաների մեջ: Այդ շարժմանը հարեցին նաև մանր հողատերերը, ստորին հոգևորականները, ինչպես և որոշ բարձրաստիճան եկեղեցականներ: Սոցիալական տարբեր խավերը իրենց հետքն էին թողնում այդ շարժման բնույթի և գաղափարախոսութիւնը վրա: Բացի հետևողական թոնդրակեցիներից, կային նաև մասնակի բարեփոխութիւններ մտցնելու կողմնակիցներ:

Թեֆորմացիայի շրջանում սոցիալական նույնպիսի շարժումներ առաջ եկան Արևմտյան Եվրոպայում և սլավոնական երկրներում: Յ. Էնգելսը, ընդգծելով աղանդավորական շարժումների սոցիալական էությունը, «Գերմանական գյուղացիական պատերազմները» աշխատութիւն մեջ երկու կարգի է բաժանում դրանք—բյուրգերական և գյուղացիական-պլեբեյական, որպիսին եղել է նաև թոնդրակյան շարժումը: Գյուղացիական-պլեբեյական աղանդը ձգտում էր ստեղծել հավասարութիւն հասարակութիւն տարբեր խավերի միջև. «Ազնվականութիւնը հավասարեցումը գյուղացիների հետ, պատրիկների և արտոնյալ քաղաքացիների հավասարեցումը պլեբեյների հետ, կոռային սիստեմի, հողային տուրքերի, հարկերի, արտոնութիւնների և գույքատիրութիւնի գեթ աչքի զարնող տարբերութիւնների իսպառ վերացումն այն պահանջներն էին, որոնք ցուցաբերվում էին առավել կամ նվազ պարզորոշութիւնով և բնորոշվում՝ որպես նախնական քրիստոնեական ուսմունքի անհրաժեշտ հետևութիւններ»¹:

Թոնդրակյան շարժման դեմ ուժեղ հալածանքի դուրս եկան խոշոր ֆեոդալները և եկեղեցին: Նրանք թոնդրակեցիներին ու նրանց ղեկավարներին ոչնչացնում էին ֆիզիկապես, արտաքսում երկրից, բռնագրավում նրանց ունեցվածքը, քարուքանդ անում համայնքները: Սպառնում էին «հավատացյալներին» շխտել թոնդրակեցիների հետ, շմոտենալ նրանց, շմտնել նրանց տները, շամուսնանալ նրանց հետ:

¹ Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940 թ., էջ 49—50:

Հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ձեռնարկած ճնշիչ դաժան միջոցները ղկարողացան վերացնել երկու դար տևող այդ շարժումը, որովհետև շարժման գաղափարախոսությունը ամուր հավատք էր դարձել աշխատավոր մասսաների մեջ: Թոնդրակյան շարժման դեմ պայքարի դուրս եկավ Բյուզանդիան: Գր. Մագիստրոսը կայսրության զորքերի գլուխն անցած՝ սկսեց մասսայաբար ոչնչացնել, տեղահան անել և արտաքսել թոնդրակեցիներին, սակայն նա իր ձեռնարկած հալածանքի թողած տպավորությունը մեղմացնելու համար գրում է, թե իրենից առաջ ուրիշ զորավարներ և պետեր «ի սուր սուների մատնեցին զնոսա և անողորմաբար ոչ խնայեցին ի ծերս և ի մանկունս, որպէս արժան էր նաև մեր քահանայապետք ի կիզումն գիմաց և ի դրոշմ աղուէսակերպ... և զոմանց հրամայեցին փորել զաչս»¹:

Հայաստանում առաջ եկած նոր բուրժուական արտադրահարաբերությունների զարգացմանը մեծապես նպաստեցին սոցիալական այս շարժումները, որովհետև նրանք իրենց սուր ծայրով առաջին հերթին ուղղված էին ֆեոդալական հաստատությունների դեմ: Քաղաքականորեն ակտիվացած բուրժուազիան ևս պայքարի է դուրս գալիս, այդ պայքարի մեջ կոչելով քաղաքային ազգարնակչության տարբեր խավերին և գյուղացիությանը, սակայն բուրժուազիայի շահերը ֆեոդալիզմի դեմ մղած պայքարում ամեն անգամ չէին համընկնում աշխատավորության շահերին, որովհետև «ֆեոդալական ազնվականության և բուրժուազիայի միջև տեղի ունեցող հակամարտության կողքին գոյություն ունեւր մի ընդհանուր ներհակություն շահագործողների և շահագործվողների, հարուստ պորտաբուծների և շրջվոր աշխատավորների միջև»²:

Հասարակական կյանքի այս բարդ պրոցեսը իր արտահայտությունն էր գտնում գրականության, արվեստի և ընդհանրապես գաղափարախոսության տարբեր ձևերի մեջ: Այս մի շրջան էր, երբ արդեն սկսվում է հայ վաղ վերածննդի առաջընթաց շարժումը:

Եթե մի կողմից «արտահայտվեցին հայ ժողովրդի ստեղծագործական մեծ ընդունակությունները կույտուրական շինարարության ու զարգացման բոլոր ասպարեզներում՝ գրականության ու գիտության, արվեստի ու արհեստների և, մանավանդ, ճարտարապետության մեջ»³, սպա մյուս կողմից ֆեոդալական-եկեղեցական գրականությունը ցույց էր տալիս անկման բացահայտ նշաններ: Իշխող են դառնում անկումային տրամադրություններ—հոռետեսություն, աշխարհուրաց քարոզ, մեյամաղձություն, քրիստոնեական դոգմատիզմով սնված միստիկա և այլն:

Բարեպաշտական հավատքի մրմունջներ խլանում էին ոսկու հնչուն ծիծաղի մեջ, հարգի էր արծաթասիրությունը, քան աստվածասիրությունը,

¹ Գր. Մագիստրոս, «Թղթեր» Ալեքսանդրապոլ, 1910 թ., էջ 157—162:

² Ֆ. Էնգելս, «Անտի-Ղյուրինգ», Երևան, 1932 թ., էջ 20:

³ Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940 թ., էջ 13:

մամոնան՝ քան Քրիստոսը: Հոգևոր-եկեղեցական գրականութիւնը ապաստանել էր վանական ճգնաժամական կյանքին: Վանական գրականութեան մեջ արտահայտվում էր մուսլի ու տիւրք մարգարեութիւն աշխարհի վախճանի և ահել դատաստանի մասին: Փարելով աշխարհի և կյանքի ունայնութեան գաղափարին՝ այդ գրականութիւնը փրկութիւնը որոնում էր զգալի աշխարհի և մարմնի ոչնչացման մեջ: Սկսվում էր հին կյանքի աստիճանական կազմալուծման և նրա իդեոլոգիայի վերասերման պրոցեսը: Պատմագրութեան մեջ անգամ հնչում է դժգոհութիւնը նոր դասավորվող հարաբերութիւնների դեմ, մուսլիվում է հայացքը ֆեոդալական հասարակութեան անհեռանկար ապագայի նկատմամբ: Սակայն պատմագրութիւնը իր հիմնական և առաջատար գաղափարներով կապված է մնում կյանքի և իր ժողովրդի վիճակի, նրա պատմական բախտի հեռանկարների հետ: Պատմագրութիւնը, որքան էլ չի խրախուսում դասակարգային պաշարը, բայց խորին վշտով է արձանագրում ժողովրդական մասսաների սոցիալական ծանր և ճնշված վիճակը, դատապարտում իր ժամանակի տիրող դասակարգի հղիացած և շվայտ կյանքը: Պատմագրութիւնը շարունակում է կառված մնալ հայրենիքի հետ, թեև նրա արտահայտած հայրենասիրական գաղափարախոսութեան մեջ շատ բան դեռևս ֆեոդալական է:

Տիրող, բայց անկումային կրոնա-միստիկական գրականութեանը հակադրվում էր աշխատավոր մասսաների ակնկալութիւններն ու ձգտումները արտահայտող բուն աշխարհիկ ժողովրդական՝ թոնդրակյան աղանդավորական գրականութիւնը, որից, ցավոք, հալածանքի է պիտիայից համարյա թե ոչինչ չի հասել մեզ:

Հասարակական կյանքի այդ բեկման շրջանի առաջին և ամենամեծ ներկայացուցիչը դարձավ Գրիգոր Նարեկացին: Նրա ստեղծագործութիւնների մեջ որքան որ առկա են հին գրական բարբերն ու գաղափարախոսութիւնը, նույնքան ուժեղ է արտահայտված վաղ վերծննդի շունչը: Նարեկացին անցման դարազլխի մեծագույն պոետն էր, ինչպես իտալական սկրզբնավորվող վերածննդի մեջ Դանտեն, որի մասին էնգելսը գրում է. «Ֆեոդալական միջնադարի վերջը և կապիտալիստական դարազլխի սկիզբը՝ նշված են վիթխարի մի կերպարանքով: Դա իտալացի Դանտեն է, որ միաժամանակ հանդիսանում է միջին դարերի վերջին պոետը և նոր ժամանակվա առաջին պոետը»¹:

2

10-րդ դարում Հայաստանում հիմնվում են բազմաթիվ վանքեր, որոնց մեջ առանձնապես նշանավոր էին Տաթևի, Աղթամարի և Նարեկա վանքերը: Այս վերջինի հետ է կապվում Գրիգոր Նարեկացու կյանքը և գրական գործունեութիւնը:

¹ «Մարքսը և էնգելսը արվեստի մասին», Երևան, 1934 թ., էջ 124:

Գրիգոր Նարեկացին ծնվել է Նար գյուղում, որը գտնվում է Ռշտունի-րում, Վանա լճի հարավային կողմում մի փոքրիկ արգավանդ դաշտի մեջ:

Նարեկացու հայր խոսրով Անձևացին ձեռնադրվում է Վասպուրականի Անձևացյաց գավառի եպիսկոպոս և Նար գյուղի սահմանի մեջ սրբ. Նշանի և սրբ. Աստվածածնի անվամբ հիմնում է մի վանք, որը հին ձեռագրերի մեջ կոչվում է նաև նրա անվամբ՝ «Խոսրովայ սրբ. Նշանի վանք»։ Նրա երեք որդիները՝ Սահակը, Հովհաննեսը և Գրիգորը հավանաբար նույն վանքումն են ստացել իրենց նախնական կրթությունը, իսկ հետո ուղարկվել են Նարեկա (Սանդուխտի) վանքը՝ ուսանելու խոսրովի աներերը այր, նույն վանքի առաջնորդ և ուսուցիչ Անանիա վարդապետի մոտ:

Գր. Նարեկացին հոր գործերից մեկի («Բացատ. սրբ. պատարագի») հիշատակարանում հոր մասին գրում է. «Շնորհին Աստուծոյ եղև մեկնութիւն այսմ գրոց ի ձեռն խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի... Արդ առաջին սուրբ գրոցս այսորիկ գծագրութիւն եղև ձեռամբ Սահակայ որդւոյ տեառն խոսրովու, այս գրոցս մեկնողի 399+551=950 թ.»:

Այս հիշատակարանից երևում է, որ խոսրովը 950 թվին եղել է եպիսկոպոս, հետևապես Գրիգորը չէր կարող ծնված լինել այդ թվից հետո, ինչպես գտնում է Չամչյանը («Ի թուին Հայոց իբր ն, այսինքն՝ յամի տեառն 951»), որովհետև «անհնար է ժ դարում կանամբի եպիսկոպոս ենթադրել Հայաստանում»¹, գրում է բանասեր Գալուստ Տ. Մկրտչյանը (Միաբան):

Խոսրովի եպիսկոպոս լինելու թվականը նույնպես անստույգ է: Նրա ժամանակակից Անանիա Մոկացի կաթողիկոսը (941—965) 954 թվին բանադրում է խոսրովին որպես աղանդավորի, «Քանզի ի նԳ (=954) թուականիս և ի շորեքտասան ամի մերոյ դիտավորութեանս յարեաւ ոմն եպիսկոպոսաց մերոց խոսրով անուն, որում հաւատացեալ էր նմա զվիճակն Անձևացեացն, այր համեստ և գիտնատր և ալեօք ծերութեամբ զարգացեալ»²:

954 թվին խոսրովը ծերացած է եղել, իսկ 965 թվից շուտ արդեն վախճանված: Քանի որ նրան եպիսկոպոս է ձեռնադրել նույն կաթողիկոսը, ապա 941 թվից առաջ նա օծված չէր կարող լինել, ուրեմն խոսրովը եպիսկոպոս է եղել 941—950 թվերի շրջանում: Հետևաբար Գրիգորի ծնունդը ոչ թե հասնում է մինչև 950 թվը, այլ ընկնում է 940 թվականի թերևս կեսին:

Նույնպես անորոշ է մնում Գրիգորի մահվան ստույգ թվականը: «Մատենանոցը գրութեան» վերջին հատվածներից մեկում (Բան 2Գ) նա գրում է իր հասակի մասին. «Ահա բարդեցան կրտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան...»³, իսկ այդ երկը ավարտվել է 1002 թվականին:

¹ «Արարատ», 1897 թ., № 2:

² Նույն տեղ, № 6:

³ «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 222:

«Ի յաւարտումն կատարման իննեբերակ յորելիինն, ի սկիզբն պսակելոյ մտի տանեկին յարեթական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոյ՝ որ զինի գալստեան ի կայս և ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող և մեծ կայսերն Հոռոմոց Քասլի... Այդ ի յայնմ անդորրութեան միջոցի... կառուցի... զբազմաստղեանս դրուագս»...¹։

Իննեբորդ հորելյանից հետո, այսինքն՝ ինն հիսնամյակի վերջը և 10-րդի սկիզբը հայոց 451 թվականն է (451+551=1002 թ.)։

Չամչյանը Նարեկացու մահը դնում է 1003 թվին, իսկ Զարեհանյալյանը՝ 1011 թվին։

Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հին ձեռագրերից մեկի հիշատակարանում (1391 թ.) վարդան գրիչը Գրիգորի մասին գրում է. «Ս. Հայրս մեր աստուածաշնորհ քահանայ և կրօնաւոր Գրիգոր էր ի Նարեկայ Վանից ի Հայս ի գաւառն Վասպուրականի ի ժամանակի թագաւորացն հոռոմոց Վասլի և Կոստանդեայ, որ տիրէին հայոց աշխարհին։ Իսկ Վասպուրականի թագաւորն էր Սենեքերիմ բարեպաշտ յԱրծրունեաց, ի թուին հայոց ՆԼԲ, ի հայրապետութեան տեանն Վահանայ. և էր սա որդի գստեր եղբօր հօր Անանիայ ճգնաւոր վարժապետի և Նարեկայ վանից առաջնորդի»²։

Այս հիշատակարանում կա ժամանակագրական շփոթություն, որովհետև Վահան կաթողիկոսը (965—970) հիշատակված է Սենեքերիմ թագավորի հետ (1003—1021), իսկ Սենեքերիմի թագավորության թվականը նշված է 983-ը, ուրեմն պիտի լինի ոչ թե ՆԼԲ, այլ ՆՄԲ։ Բացի այդ՝ «Մատեան ողբերգութեան» հիշատակարանից դիտենք, որ Հովհաննես անդրանիկ եղբայր մասնակցություն է ունեցել «Ողբերգութեան» հորինմանը։ «Գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի»³։

Հետևապես Հովհաննեսը չէր կարող մեռած լինել մինչև 1002 թիվը։ Իսկ ըստ վերոհիշյալ հիշատակարանի՝ Հովհաննեսի մահից հետո էլ շարունակել է ապրել Գրիգորը. «...և վախճանեալ եղբայրն մնաց Գրիգոր միայնակ յերկա առաքինութեան և յաշխատութիւն ընթերցման անյազ բաղձանօք»։

Ըստ այս վկայության Գրիգորը եղբոր մահից հետո էլ ապրել է, նրա կյանքը հասնում է Սենեքերիմ թագավորի շրջանը, բայց չի անցնում այդ ժամանակից, հետևաբար գուցե հնարավոր լինի Նարեկացու մահը ենթադրել 1010 թվերին։

Նարեկացին թաղվել է Նարեկա վանքում։ 1867 թվին գերեզմանի վրա դրվել է դամբանագիր ունեցող մարմարե գեղեցիկ տապանաքար։

Նարեկացու ուսուցիչները եղել են հայրը և մորական պապի եղբայր Անանիան, որոնք համարվել են իրենց ժամանակի կրթված ու գիտնական անձնավորություններ։

1 «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 267—268։

2 Հրատարակված չէ։

3 «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 268։

Անանիա Նարեկացու մասին հիացմունքով են խոսել ժամանակակիցները: Նրա աշակերտ Ուստանեսը գրում է. «Վսեմական ի հարս և տիեզերական վարդապետ՝ կենդանախարուկեալ սուրբ և պարկեշտ վարուք, հոգևոր հեղինակ և հռչակաւոր հոետոր», իսկ Ասողիկը նրան համարում է «փիլիսոփայն մեծ»:

Գրիգորը նույնպես պատշաճ ակնածանքով է արտահայտվում իր ուսուցչի մասին «Ներբող սրբոյ աստուածածնին» երկի հիշատակարանում. «Եւ Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի գասեր եղբօր հօր Անանիայի հոգեզարդ և մտավորժ փիլիսոփայի, և ըստ վարուց մաքրութեան կրօնից գովելոյ և հռչակելոյ»¹:

Գրիգորն իր եղբայր Հովհաննեսի հետ միասին մանկութունից ուղարկվել է Նարեկա վանքը՝ Անանիայի մոտ սովորելու Հիշյալ շհրատարակված հիշատակարանի մեջ գրված է. «Սա (Անանիան—Ա. Մ.) զերանելիս Գրիգոր անդրանիկ եղբարր իրով, որոյ անուն Յովհաննէս՝ սնոյց և դաստիարակեաց ի մանկութենէ ընդ աստուածաշունչ գրոց կրթութիւնս»:

Նարեկացին վանքում սովորել է քերականութուն, հոետորութուն, աստվածաբանութուն, երաժշտութուն, մաթեմատիկա, երկրաչափութուն և աստղաբաշխութուն:

Նարեկացին վանքում ձեռնադրվել է քահանա և նշանակվել է ուսուցիչ: Նա իրեն քահանա է հիշատակում և իր կյանքի վերջին շրջանում: «Ողբերգութեան» հիշատակարանում գրում է. «Եւ Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրտսեր վարժապետաց»²:

Վերահիշյալ ձեռագիր հիշատակարանում նույնպես կոչվել է քահանա Ուրեմն Նարեկացին որպես կրօնավոր եղել է քահանա և ոչ թե վարդապետ, ինչպես կարծել են շատերը, բայց նա հետագայում վարդապետ համարվել է ուսուցիչ իմաստով, ինչպես ինքն է իրեն անվանում՝ «վարժապետ», «պետ վարժից»:

Ակադ. Մ. Արեղյանը նկատի ունենալով, որ Գրիգորը իրեն համարում է արթուն. «յւսւազանէ կոչեցայ արթուն», ենթադրում է, թե Գրիգորի մկրտութեան անունը եղել է Արթուն: Ը՛իշտ չէ այս կարծիքը, որովհետև այդ դեպքում նա պիտի կոչվեր նաև հսկող՝ «սորին հսկողի»: Նարեկացու մկրտութեան անունը Գրիգոր է, բայց նա արթուն և հսկող է կոչում իրեն ոչ թե այն պատճառով, որ այդ անվամբ է մկրտվել, այլ՝ հսկող և արթուն բառերը ունեւարեն գրիգոր բառի թարգմանութունն են:

Նարեկացին ոչ միայն հռչակավոր է որպես բանաստեղծ, այլև որպես գիտնական, եղել է իր դարի ամենագտրագացած անավորութուններից մեկը: Նա իր «Ողբերգութեան» և մյուս գործերի մեջ երևում է որպես աստվածաբանական գիտութունների և փիլիսոփայութեան հմուտ գիտակ:

Նարեկացին թե՛ իր ժամանակի և թե՛ հետագայում առաջ է բերել մեծ

¹ «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 422:

² Նույն տեղ, էջ 268:

հմայք: Նրա մասին Սամուել Անեցին գրում է. «Փայլէր իրրև զարեզակն իմաստութեամբ և առաքինութեամբ»³:

Այդպիսի բազմաթիվ բարձր գնահատականներ կան Նարեկացու երկերի ձեռագիր անտիպ հիշատակարաններում, օրինակ՝ 1361 թվին գրիչ Մարգարը գրում է. «Քաջ հոնտոր և բարձրահանձար փիլիսոփայն հայոց»: Սակայն ինքը, հեղինակը միշտ համեստաբար է արտահայտվել իր մասին. «Միշտ ուսանիմ և երբէք ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանիմ»⁴:

3

Նարեկացու էպոսայում թոնդրակյան գաղափարախոսությանը հարեցին իր դարի նշանավոր հոգեորականներից մի քանիսը, օրինակ՝ Հարքացի Հակոբ եպիսկոպոսը, Նարեկացու հայր Խոսրով Անձեացին, վանահայր Անանիա Նարեկացին և ուրիշներ:

Մոկացի կաթողիկոսը համոզում է Նարեկացու հորը հրաժարվել «Ի գիւական հոգւոյն», այսինքն՝ աղանդավորական գաղափարներից, բայց Խոսրովը հետևողական է մնում իր հայացքների մեջ: Կաթողիկոսը անիծում է նրան և բանադրում:

Կաթողիկոսը զբաղվել է նաև վանահայր Անանիայի հարցով: Անանիան, ծանր հիվանդություն մահճում պառկած, հարկադրված է եղել կաթողիկոսից, գրելու թոնդրակեցիների դեմ, այլպես ծերունի վանականը նույնպես կենթարկվեր սոսկալի բանադրանքի ու նզովքի, գուցե և այլ պատժի: Անանիան, որպեսզի ցույց տա իր արդարացի լինելը, գրում է «Գիր խոստովանութեան»:

Անանիայի թուղթը անձնապաշտպանություն է, նա անիծում է միայն արդարանալու համար, որովհետև կաթողիկոսի խոստովանությունը դարձել էր հալածանք, «նեղություն և անձկություն, հալածո՛ւմն և օտարութի՛ւն, բարկություն ո՛չ իրաւացի, և սրտմտություն, ո՛չ բանականաբար բաժին ինձ և վիճակի թլն սահմանեալ»⁵:

Անանիան թղթի մեջ ձգտում է համոզել կաթողիկոսին, որ ինքը ոչ թե բերանով է անիծում, այլ սրտով: Նրա հոգեկան տագնապը վկայում է այն մասին, որ ոմանք թոնդրակեցիներին նզովել են որպես հարկադրանք դաժան ու շար հալածանքներից ազատվելու համար: Բայց եղել են նաև մարդիկ, որոնք ունեցել են հոգու կորով՝ գիմադրելու, ինչպես Սուրենցի և Հարքացի Հակոբները, Խոսրով Անձեացին, Վրվեռ իշխանը և այլն:

Նույնպիսի թուղթ թոնդրակեցիների դեմ գրել է Գրիգոր Նարեկացին: Թղթի գրվելու առիթը եղել է բանաստեղծի, ինչպես իր ուսուցչի, մե-

3 Ս. Անեցի, «Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 103:

1 «Մատենագրությունք», Վենետիկ, 1840 թ., էջ 182:

2 «Արարատ», 1892 թ., № 1:

ղադրվելը թոնդրակյան հայացքներին հարելու մեջ: Հավանաբար Նարեկացու հակառակորդները նրան համարել են ուրացող և հերձվածող:

Նարեկացու «Ողբերգութեան» մեջ մի բանի տեղ հիշատակութուն կա հալածողների մասին, որոնք խոշտանգել ու տանջել են նրա հոգին: Նա կյանքի մեջ չի գտնում մի այնպիսի զորավոր մարդու, որին կարողանար ապավինել նրանցից ազատվելու համար և դիմում է Քրիստոսին. «փրկեա, տէր Յիսուս, աղաչեմ գրեզ, փրկեա, բարերար. կարկառեա առ իս զաջդ ամենագով, և օգնեալ ինձ սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ընդդիմադողաց»¹:

Նարեկացու ուսուցիչը՝ Անանիան գրեց թոնդրակեցիների դեմ, որովհետև նա մեղադրվում էր, իսկ Նարեկացու մասին այդպիսի շարժառիթաներ հայտնի չեն: Սակայն եղած փաստերից պարզվում է մի բան, որ նման թղթերը գրվել են կամ հատուկ հորդորով, կամ պատվերով, կամ թե եղած կասկածանքները փարատելու համար: Այս վերջին իմաստով է գրված Նարեկացու թուղթը, որովհետև նա դիմելով Կճավանքի վանահորը՝ հորդորում է նրան ևս գրել թոնդրակեցիների դեմ, որպեսզի շմեղադրվի, «կամիմք զձեզ անբիծս լինել»: Ըստ ավանդական տեղեկութունների Նարեկացին մեղադրվել է, ինչպես և նա չէր էլ կարող կասկածի չենթարկվել թեկուզ հենց այն պատճառով, որ նրա հայրը բանագրվեց, ուսուցիչը մեղադրվեց, իսկ աշակերտը և որդին պաշտպանեց իր ուսուցչին և հորը՝ վերին աստիճանի հարգանքով ու ակնածանքով արտահայտվելով նրանց մասին այն ժամանակ, երբ նրանցից մեկը արդեն բանագրանքի էր ենթարկվել, իսկ մյուսը՝ հարկադրանքի:

Նարեկացին հոր աղանդավոր լինելը չի ակնարկում, այլ նրան համարում է աստծու պատվիրաններին հույժ հետևող. «Յոյժ հետևողի պատուիրանացն Աստուծոյ... որում շեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան ըստ գրեցելումն»: Իսկապես՝ տարօրինակ է. նա փոխանակ լռելու, առաքիլության մեջ իրեն նույնիսկ անարժան է համարում լինել այլ հոր որդին: Նարեկացին ակնարկելով հոր կրոնական համոզմունքները՝ պարզորոշ նպատակ է ունեցել պաշտպանել նրան, այսինքն՝ մի թոնդրակեցու:

Նարեկացին թղթի մեջ թեև մի կողմից հայհույում է աղանդավորներին, մյուս կողմից կյանքի անարդար լինելու նկատմամբ արտահայտել է իր խորը դժգոհությունը, որը սակայն միատիկ բնույթ ունեւոր: Նրա համար աշխարհը մի մուկ արգելարան է, բանտ, որտեղ տանջվում են ինքը և իր նմանները՝ անապավեն ու անպաշտպան, ճաշակելով հեծում, հոգս, ցավ և տառապանք, մի աշխարհ, որտեղ մրրկում է աղքատության հնոցը. «Աղքատութեան հնոց յամենուստ մասանց մորկի»¹:

Նարեկացին դառնությամբ է արտահայտվում երկրային հզոր ինքնակալների մասին, որոնք ոչ թե մարդուն ապրեցնելու արվեստն են մշակում,

¹ «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 245:

այլ սպանելու արվեստը. «Զմահացուցանելն միշտ արուեստաւորեն, քան զկենսագործելն»¹:

Նրա համար բողոքն էլ հավասար են աստծու առաջ, բայց տեսնելով, «աստծու զավակների» միջև իրական կյանքում եղած խիստ անհավասարութիւնը, հալածանք, աղքատութիւն և զրկանք, տեսնելով, որ իր ժողովուրդը գազանարեկ է եղած, դիմում է աստծուն հույսով և բողոքի շնչատով, թե ե՞րբ կլինի, որ ինձ համար առավոտ ծագի, պիտի տեսնե՞մ արդյոք նորամուտ գարունը, հոգույս արոտի կանաչանալը անձրևի ցողից ու հալածված ժողովրդիս հանգստացած. «Եթէ լինիցի՞ խաւարանունդս մթացելոյ ծագման առաւօտ: Եթէ հասցե՞ տեսանել զտագնապեալս մշտասառոց յեղանակս գարնանն մօտ: Եթէ տեսի՞ց զցօղ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ արօտ: Եթէ իցի՞ արևք նկատել զգազանարեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հօտ»²:

Միտիկ նարեկացիին պայքարող շէր, բայց բողոքող էր, իսկ այդ բողոքն ուղղված էր ֆեոդալիզմի և պաշտոնական եկեղեցու դեմ:

«Ֆեոդալիզմի դեմ ուղղված ռևոլյուցիոն օպորդիցիան նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում: Նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ իբրև միատիկա, մերթ որպես բացորոշ հերետիկոսութիւն, մերթ զինված ապստամբութիւն»³:

Քանի որ աղանդավորական գաղափարախոսութիւնը շէր ժխտում կրօնը՝ միատիկական էր, բայց նրա հիմքում դրված էր աշխարհը վերաշինելու հավասարութեան սկզբունքը, այդ շարիով այն ունեւր ռևոլյուցիոն բնույթ, որովհետև ուղղված էր ֆեոդալական սեփականատիրական հարաբերութիւնների դեմ: Քրիստոնեական միատիկ կրօնի հիմքում ընկած էր զոգմատիկ հավատք աստծու և նրա սահմանած աշխարհային կարգերի մասին, իսկ աղանդավորական-միատիկական գաղափարախոսութիւնն ուղղված էր այդ զոգմատիզմի և պաշտոնականութեան դեմ, ելակետը անհատի ազատագրութիւնն էր, ամեն մի տեսակ արգելքների վերացում մարդու և աստծու միջև, ըստ որում աստծու գաղափարը աղանդավոր միատիկների համար ավելի համայնապարփակ և կենսական ուժ էր, ավելի ռեալ հիմքի վրա դրված, այստեղից էլ այդ միատիցիզմի պանթեիստական բնույթը, որ աստվածը ամեն տեղ է, մարդու բանական իդեալն է կատարյալի մասին, իսկ այդպիսի կատարելութիւն նրանք գտնում էին բնութեան և մարդու մեջ: Այս պանթեիստական-միատիկական գաղափարախոսութիւնը ընդհանրապես լայն տարածում ունեւր Արևելքում, նախքան Արևմուտք անցնելը: Մահմեդական աշխարհում այն հայտնի էր սուֆիզմ անունով, որի զարգացման և տարածման գործում պակաս դեր չխաղացին անտիկ փիլի-

¹ «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ., էջ 129:

² Նույն տեղ, էջ 60:

³ Ֆ. Էնգելս, «Գերմանական գյուղացիական պատերազմները» Երևան, 1934 թ., էջ 47:

ստփայական երկերի թարգմանություններն ու ծանոթությունը նրանց հետ։ Սուֆիզմի դեմ խալիֆաթը նույնպես սկսեց հալածանք։ Օրինակ՝ հայտնի է, որ արաբական նշանավոր պոետ Խալլաջը գլխատվեց 921 թվին այն բանի համար, որ իր անձը աստված էր հռչակում։

Այս բնույթն ունենր միստիցիզմը՝ Նարեկացու երկերում։ Նարեկացին ձգտում է մարդուն աստվածացնել, նրան տեսնելով աստծու մեջ, իսկ աստծուն՝ մարդու Աստվածը մարդու լավագույն հույան է, բանականությունը, ներքին խիղճը, նա գերագույն ճշմարտություն է, որին ձգտում էր հաղորդ լինել Նարեկացին։ Պոետը, ճիշտ է, ձաղկում էր մեղապարտ մարդուն, մեծ մասամբ իր անձը ցուցադրելով որպես այդպիսին, բայց միաժամանակ ձգտում էր փրկել նրան սխոլաստիկ միջնադարից, հոգևոր մեռած կուլտուրայի մղձավանջից, ամբողջ միջնադարի ծանրությունից ու կապանքներից, տանելով նրան դեպի աստվածային լույսը։

Հոգեկան ուժեղ պարունները, ներքին տվյալանքը, գրգռված երևակայությունը, հագուրդ շտապած տեսչը՝ Նարեկացուն դարձնում էին անհավասարակշիռ և ցասկոտ, խղճմտանքը ծառանում էր հենց իրեն՝ հեղինակի դեմ, որովհետև նա ծվատելով իր հոգին և զգացումները, իրեն չէր տեսնում աստվածացած, ազատագրված կյանքից ավելի մռայլ մի այլ աշխարհից՝ քրիստոնեական կրոնի ստեղծած սարսափներից՝ դժոխքից, և իրեն տեսնում էր դատապարտված, մատնված հավերժական տանջանքի։ Այդ հոգեկան պայթարում Նարեկացին մերթ արտահայտում էր իր ցասումն ու բողոքը, մերթ հուսահատ աղաչում էր աստծուն։ Նա ձգտում է հաշտեցնել աստծուն և մարդուն, ստեղծել մի ամբողջականություն ու գոյություն նրանց միջև։ Այս հիման վրա էլ նա դատապարտում է գերագույնին, թե ինչու՞ մարդուց մինչև աստվածը պիտի լինի մի անսահման տարբերություն։

Նարեկացին մեծագույն սքանչացումով է խոսում մարդու մասին։ Նա պաշտպանում է մարդու սոցիալական դատը աստծու առաջ, որովհետև մարդը աստվածային ճոխություն պանծալի նյութն է, նրա պայծառ պատկերի վայելչության զարդը, նրա քաղցրության բարեշնորհ ծաղիկը, և մի՞թե արդյոք աստվածը կարող է նրան լքել կյանքի դժնդակ պայմանների մեջ։

Մարդու այս փառաբանությունն ու գովերգությունը, որ նույնպես արտահայտվում է տաղերի մեջ, որպես վաղ վերածնունդյան շրջանի ամենաէական գծերից մեկը, նրա միստիցիզմը, համալրանքը դեպի ժողովուրդը, ցավը հանդեպ նրա անմխիթար վիճակի, քննադատական վերաբերմունքը դեպի բռնակալությունը, տրտունջի և բողոքի արտահայտությունը ընդդեմ աստծու՝ իր աշխարհայացքի այս կողմերով նա մի կողմից ուրվագծվում է որպես մեծ գրող, մյուս կողմից գաղափարական շփման որոշ կապ է ստեղծվում նրա և թոնդրակյան աշխարհայեցողության միջև։

Ժողովրդական ավանդությունների մեջ պայծառ է եղել Նարեկացու բարոյական կերպարը, նա հակադրվում է բարձրաստիճան հոգևորական-

ներին ու աշխարհիկ իշխանությանը, հալածվում, բայց դառնում է աղքատի ու զրկվածի պաշտպանը, նրա կյանքը մասամբ նմանվում է փոքր Մհերի տրագիկ կյանքին:

4

Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղը ունեն նրա բանաստեղծությունները, որոնք միջնադարյան տերմինոլոգիայով անվանում ենք տաղեր:

Նարեկացու տաղերը որպես մեր պոեզիայի արդյունք կապվում են մեր անցյալի լիրիկայի հետ, որը զարգանում էր երկու ուղղությամբ — ժողովրդական և հոգևոր: Ժողովրդական էպիկական և քնարական երգերը, չնայած ծանր հարվածներին քրիստոնեական կրոնի կողմից, իսպառ չունչացան: Ժողովրդի քնարը հնչում էր ոչ միայն հեթանոսության, այլև քրիստոնեության տիրապետման շրջանում և նույնիսկ այն ժամանակ, երբ, ինչպես ասում է ակադեմիկոս Մառը, քրիստոնեությունը որպես մեռած կուլտուրա «ձգտում էր դեպի ժողովուրդը, որպեսզի ժողովրդազերծ աներ երկրի երգը և ժողովրդի մեջ սպաներ կենդանի, ստեղծագործական գրականությունը»:

Նարեկացու բանաստեղծությունների մի մասի բովանդակությունը ամբողջությամբ կրճատված է, իսկ մեծ մասի մեջ կրճատվածն ու չափքան բովանդակություն է, որքան արտահայտչական միջոց, այլ խոսքով այն ինչ կրճատված է՝ գլխավորապես արտահայտվում է այլաբանությունների, սիմվոլիզմների ու նրանց մեկնությունների սահմաններում, իսկ բուն բովանդակությունը, այս կամ այն չափով, ունի կյանքի ընդգրկում:

Ամբողջապես կրճատված թեմա ունեցող երգերում Նարեկացին նկարագրում է Քրիստոսի կյանքը, որ նա որպես երկնային հոգի, մտավ անապական կույտի մեջ, ծնվեց մարդակերպ, կովեց երկրային շարքի դեմ և հաղթանակեց: Մա ըստ էության, ինչպես և շարականներում, լույսի և խավարի կամ երկու հակոտնյա ուժերի, բարու և չարի պայքարն է, որը որպես հեթանոսական աշխարհայացք՝ մտել է քրիստոնեական գավառանքի մեջ:

Այդ երգերում Քրիստոսը մերթ պատկերացվում է որպես երգող թռչուն, մերթ գլուցազն կամ առյուծ, որի ահեղ մռնչոցը լուծում է մարդկային մարմինը:

Ես ձայն գառիւծուն ասեմ,

Որ գոչէր ի քառաթեվիւն...

Ահեղ ձայնս, որ Ես լուայ,

Սա քակէ զամուրս որ ունիմ:

Նարեկացին նկարագրում է Քրիստոսի խաչվելը, երեքօրյա թաղումը, հարություն առնելը, երկնային ճանապարհորդությունը: Հրեշտակների խմբերը գիմալորում են, միաժամանակ հետաքրքրվում, թե ո՞վ է սա, որ

երկրային կերպարանք ունի և հագած է արլան գուլնի զգեստ, իսկ երբ ճանաչում են, բացում են նրա առաջ հավիտենականության դռները:

Նարեկացու երգերի այս մոտիվը օրինական էր համարվում շարահանների համար, նրանց մեջ ճշմարիտ ներշնչումների, պոետական ուժեղ զգացումների փոխարեն հանդես է գալիս դատողության, հավատքի, կրոնական հուզումների սառն վերացականությունը:

Նարեկացու պատկերացմամբ Քրիստոսը նույնպես օժտված է մարդկային ապրումներով, սակայն արտահայտված ոչ այն ուժով, ինչպես՝ ռուս հաշտնի նկարիչներ Կրամսկու «Քրիստոսն անապատում» և Իվանովի «Քրիստոսի երևալը» հուշակավոր նկարներում: Նարեկացին հուզականություն է նկարագրում «մեհիատես» մարդու (Սիմոն ծերունու) հավատքը և վերաբերմունքը մանուկ Հիսուսի նկատմամբ, բայց մանկան պատկերը սքողված է սրբություն քողով և մնում է մշուշոտ:

Ներբողական և դիդակտիկական այս երգերը մեծ առնչություն ունեն «Ողբերգության» հետ, միատիպիզմի էական գծերը նույնպես արտացոլված են նրանց մեջ: Նարեկացին պատկերացնում է ահեղ դատաստանի օրը: դիմում է Քրիստոսին փրկության հույսով: Մեղ էլ բարձրացրու քեզ մոտ, ասում է նա, որպեսզի մենք (մարդիկս) միանանք «ընդ քեզ քե ընդ սիրոյ հօր և հոգւոյդ»:

Յիշեա՛, յիշեա՛, մի՛ մոռանար,
Սէր խոստացար անսուտ բանի,
Բնդ մեզ լինել զաւուրս կենաց
Մինչ ի կատարած երկրին:

Նարեկացին ձգտում է վերանալ ցավի և վշտի աշխարհից, «տրամական հովտէս» դեպի «գերազանցիկ» լույսը, լույսի փառքը, անէական մի աշխարհ, ապրել հոգեկան կյանքով:



Նարեկացին Հայաստանում, ինչպես Ռանտեն Իտալիայում, դարձավ միջնադարի վերջին և նոր շրջանի առաջին պոետը:

Բնության պատկերները, նրա նկարագիրը մեր անցյալի գրականության մեջ ընդարձակ ծավալով, երբեմն էլ հույակապ վարպետությամբ վերարտադրված է պատմագրության մեջ (Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի, Եղիշե), իսկ հոգևոր պոեզիան ընդհանրապես աղբառ է եղել բնության ամբողջական նկարագրություններից: Ետրականներում բնությունը կապվում է վերացական իդեալի, աստվածության հետ, հանդես է գալիս որպես ընդհանուր ըմբռնում՝ տիեզերք, աշխարհ, երկինք, արև, լույս, իսկ երբ կոնկրետացվում է, դարձյալ նրա վրա մնում է սրբության փալլը. «ազբիր արտասուաց», «արեգականն օթարան», «լուսոյ առաւօտ», «ամպ

թեթև և լուսաւոր», «խնկաբեր ծառ յանուշահոտ», «գերահրաշ ծաղիկ» և այլն:

Ֆեոդալական հարաբերութիւնների ծոցում առաջ եկած նոր կյանքը նպաստեց աշխարհիկ գիտութիւնների զարգացմանը, նույն փոփոխութիւնը, ճիշտ է, ոչ միանգամից, կատարվում էր նաև արվեստի բնագավառում: Արվեստը նոր թեմաներ էր որոնում կյանքի և բնութիւն մեջ, կյանքի ուսումնասիրութիւնն սեւալ ճանաչողութիւն մեթոդը հակադրվում էր արվեստի հին ալեգորիկ և սիմվոլիկական մեթոդներին:

Իրականութիւնը ըմբռնելու ռեալ զգացումով էր նարեկացին մտտե-նում բնութիւնը: Նա բնութիւն սիրահար մեր առաջին մեծ պոետն էր և բնութիւնը զգում էր ոչ միայն որպէս գեղեցկութիւն, այլև կենդանի և կենդանութիւն պարզևող մի մեծ ուժ: Բանաստեղծը գեղեցկութիւն իղնալը որոնում և գտնում էր բնութիւն մեջ, թեկուզ այն արտահայտվի տերեխ, վարդի, արեգակի կամ թե գեղեցիկ կույսի պատկերով: Բնութիւնը դառնալով պոետիայի և ներշնչման աղբյուր, բանաստեղծութիւն հիմնական բովանդակութիւն՝ առաջ էր բերում կյանքի զգացումն արտահայտելու նոր ձև, նոր ոճ: Այս է պատճառը, որ բնութիւնը զգացող պոետի երգերի պատկերները հեռու են շարականներում արտահայտվող բնութիւն ալեգորիկ պատկերներից, բնութիւն սխեմատիկ զգացումից:

Նարեկացին կերտում է թարմ պատկերներ, ամբողջական տեսարաններ, վերատեղծում մեղմ գեղեցկութիւններ — արևաշող ամպը, անձրևի շիթերը, որոնք ցողում են նույնիսկ օդը, լուսինը վերջացնում է իր ընթացքը, ճոխ ճեմում է գիշերավարը (արուսյակը) վառ աստղերի հետ միասին, իջնում է առափնոցան քաղցրիկ ցողը, բարձրանում է գաշտնաբեր արեգակը և սկսվում է ցնծութիւն մի տոն:

Նարեկացու այդ երգերը նույնպէս ունեն կրօնական երանգ, սակայն նրանց մեջ հզոր է բնութիւն շունչը: «Յայտնութեան» տաղում ներկայացված է Հիսուսի հայտնվելը սկսած Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամին ավետիք տալուց, մինչև Հորդանանում մկրտվելը: Նարեկացու՝ բնութիւնը պատկերելու ուժը յայտնող հասնում է վարպետութիւն, նա ոչ միայն հանճարեղ բանաստեղծ է, այլև նկարիչ, նկարագրում է լույսի և դույնների թրթռուն և նուրբ խաղը, «շողշողենի, փողփողենէջ, մանրահեղեղ» լույսի ճառագայթների սիմվոլը:

Աւետիս ծառոց ծաղկանց՝
Բողբոջախիտ, խիտասաղարք,
Իոյն գեղեցիկ պտղիճալէտ,
Ակնանհոյ համ Բողբոջունակ,
Հոտ բուրավուարք, փունջ խոտնեւամ,
Մայրից վարդից փրփրնագարդ,
Թեք տաւածեալ ոսկեհանգէ,
Տեւեախիտ կանաչացեալ:

Բնությունը կենդանանում է, նա կարծես շարժվում է ուժեղ մրրիկից խաղաղ ու անդորր գառնալու համար — ծիծաղող ջրերը ծավալվում են իրենց կարկաչաճուս ընթացքով, հորձանքները ծփում, անցնում են լեռների միջով իրենց բոցն փայլով ծավալվում են ծովի վրա: Սա արևի ծագն է, նրա շողերի հրկեհը՝ Վանա լճի վրա: Հետոնիզմի այս զգացումով է հայրենի բնությունը պատկերված նաև Անանուն Արծրունու պատմության մեջ, մի զգացում, որ երբեք չի համատեղվում քրիստոնեական ասկետ մորալի հետ:

Անանուն Արծրունին նկարագրում է Վասպուրականի բնությունը Աղթամարի շինության առթիվ. «Նաև ծառուվք պողաբերովք սաղարթեալ և այգեւէտ բաղմութեամբք յոյժ վայելչացեալ զարդարի բղխեն և աղբիւրք բարեխառնք շուրջ զքաղաքան... այլ և ի հաւասարակողմն կուսէ ամրոցին մերձ կայ բարձրարերձ լեռոն Արտոս, որ ի ցարնանային եղանակ ամբարեալ պահէ յինրեան զգալարութիւն արմատոց և ծաղկանց... Նաև ի գլխոյ լերինն հոսեալ իջանեն գետք սահանակարկաք յորդահոսք, որով ոռոգանի երկիրն առ հասարակ... Եթէ շարժեսցի ծով յուզեալ ի հողմոց՝ ծաղկաձև ալիքն զբոսացուցանողք վայելուչք երկին. և եթէ մաքուր յօգոյ լինիցի զամենեցուն աչս գրաւէ զիրն տեսանել ծաւալումն»¹:

Երկու հեղինակների մոտ էլ արտահայտվում է հայրենի բնության նկատմամբ եղած հիացմունքը: Նարեկացու հյուսած պատկերները արհեստականորեն են կապվում Հիսուսի հայտնության ավետիքների հետ:

Գրիգոր Նարեկացին բնությունն ըմբռնելով որպես կենդանի մի հզոր օրգանիզմ, որպես երգ, մի հոյակապ ներդաշնակություն, ոչ ամեն դեպքումն է այն կապել աստվածային հայտնության հետ, իսկ եթե փորձել է տալ այդ կապը, ապա աստվածային հայտնությունը կամ դառնում է կենդանի շունչ, ոգի, որն ապրում է բնության մեջ, կամ՝ կյանքի ու բնության միասնության արտահայտություն:

Նարեկացին բնության ամբողջության մեջ է ըմբռնում սիրո մեծ զգացումը՝ որպես շաղկապ ցողի և ամպի, աստղի և արևի, կյանքի ու բնության, որը նրա գրչի տակ մաքրվում է իր միասնական փայլից, արտահայտվում ռեալիստական շլացնող պայծառությունով: Մարդու հոգու ձգտումը դեպի սերը, պոեզիան ու գեղեցկության իդեալը — Նարեկացին նկատում է բնության մեջ: Նորաբաց այգը երգում է նրա սրտի քնարի փուրքը, արևի վրա Առավոտովա պես ու նրա հետ ծագում է սիրո արշալույսը, արուսալը ճեմում է իր կարոտագին ծագմամբ որպես առավոտյան սեր: Նրա շուրջը աստղերը կազմում են շրջան՝ նման տավիղի: Բնություն, սեր և երաժշտություն, ահա մի էրրորդություն, որը խորհրդավոր չէ, այլ բնության և մարդու հոգու ներդաշնակության սիմվոլն է:

Նարեկացու մոտ մարդը բնության հետ կազմում է մի հավերժական

¹ Թովմա Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 475—476:

միասնություն, նա երգում է հրաշակերտ կույսին, որպես աստվածային շքեղ ստեղծագործություն:

«Մեղեդի ծննդի» հույակապ երգի մեջ կերտված է չքնաղ աղջիկը, ուժեղ շափով զգացվում է բանաստեղծի անհատականութունը, վերաբերմունքը, ներքին, հոգեկան հուզական աշխարհը:

Հոգևոր երգերի մեջ (շարականներ) կույսի պատկերը վերացական է, շատ քիչ էր արտահայտվում մարդկային անհատականութունը, որովհետև վանական կյանքը սանձահարում էր զգայական ապրումների արտահայտությունը, իսկ դրա փոխարեն պիտի փառաբանվեր ասկետ մորալը:

Կնոջ պատկերը ժողովրդական երգերի մեջ արտահայտվել է սկսած հեթանոսական շրջանի գուսանական երգերից: Բայց նրա կոնկրետ ու ամբողջական նկարագրի վերաբերյալ մինչև 10-րդ դարը մեր երգերում լրիվ ու ամփոփ գաղափար չունենք, իսկ 10-րդ դարից, Գրիգոր Նարեկացուց սկսած, կնոջ պատկերը ամբողջականանում է, խորանում և մեր միջնադարյան պոետների մոտ ու ժողովրդական երգերի մեջ արտահայտվում իր լիակատար շքեղությամբ: Այս թեման մի շարք էական կողմերով արտահայտվեց Նարեկացու պոեզիայի մեջ: Նարեկացին մեծ նկարիչ հմտությամբ նախ կերտում է կույսի դեմքը, ապա մարմինը և նրա շքեղ զգեստը: Կնոջ սլացիկ հասակը նա համեմատում է գեղաշիտակ ծաղիկների, եղեգնի, նշդարենու հետ, իսկ ծոցը լուսափայլ է, լցված կարմիր վարդերով: Ժողովրդական երգերում նույնպես հասակը շամբի մեջ ճոճվող եղեգն է, «ծաւ. նարնջենի», «նշենի ծաղիկ», ծոցը՝ որպես «շամամ», «առաւօտ նման»:

Նարեկացին չի մնում պատկերացումների այս ընդհանուր սահմաններում, այլ ավելի է կոնկրետացնում իր նկարագիրը: Կույսը կենդանի, վառվռուն, բնության մեջ մեծացած աղջիկն է, որի այտերը նոնենի են, նման «գեղաշիտակ ծալրից ծաղկանց» կամ «սեաւ» է և «գեղեցիկ», ունքերը նուրբ են և կամար, ծով աչքերը ծավալվել են առավոտյան ծիծաղկոտ ծովի վրա «երկու փայլանածև արեգական նման», շրթունքները բոսոր են, նուրբ վարդի թերթերի պես— «բերան երկթերթի վարդն ի շրթաց կաթէք», իսկ գինեգույն եռահյուս վարսերը բոլորել են դեմքը, թևերը դալար են և ճկուն եղեգնի պես, դաստակները նման են մանուշակի փնջերի:

Ժողովրդական երգերի մեջ էլ այտերը համեմատված են նույն հատի կամ գինու գույնի հետ, ունքերը ծիծեռնակի թևերի, աչքերը ծով են, «գետ ճրագի վառ» կամ «աչքունքն էին արեգակունք», մազերը թուխ են, դեղձան ու որպես ապրելու մի փնջեր փարվել են նրա պարանոցին, շուրթերը արմավ ու նուշ են, բարակ՝ ինչպես մետաքսալար, բերանը շիշ է՝ լցված վարդազրով և այլն:

Համեմատությունների այս նմանությունը ցույց է տալիս այն կապը, որ ունեցել է Նարեկացին ժողովրդական արվեստի հետ:

10-րդ դարում քաղաքների զարգացման հետ կապված հակումը դեպի

ձոխութիւնն ու շրեղութիւնը դառնում էր կյանքի պահանջ, հարուստ քաղաքացին ոչ միայն քանդակներով, նկարներով և ընտիր կահ-կարասիով էր զարդարում իր բնակարանը, այլև սիրում էր հագնել վայելուչ և փարթամ: Նրբութիւն և գեղեցկութիւն գգացումները որոշում էին դարի ճաշակը: 10-րդ դարում մեր արհեստանոցները ձգտում էին բավարարել այդ աճող նոր պահանջը, նրանք ներքին և արտաքին շուկային մատակարարում էին բավական նուրբ և թանկարժեք արտադրանք— բրդե, բամբակե և մետաքսե գործվածքներ, հագուստներ, գոտիներ, մետաքսա ընտիր, երփնե-րանգ և ծաղկավոր կտորեղեն, դիպակ և այլն, որոնց գունավորման համար Հայաստանը հարուստ էր նաև հանքային և բուսական ներկերով, առանձնապես մեծ հռչակ էր վայելում «որդան կարմիրը»: Մեր հարուստ մանրանկարչութիւնը զազափար է տալիս այդ դարաշրջանի մանածագործական արտադրանքի ոճավորման մասին, այսինքն՝ մանրանկարչութիւնն ոճը իշխող էր կիրառական արվեստում: Նարեկացու այս երգի մեջ դարձյալ նկարագրված է շրեղ զգեստը, ոսկով, արծաթով և թանկագին սկններով բանված գոտին, այլ խոսքով մանրանկարչութիւնը և պոեզիան սկսում են ռեալիստորեն արտացոլել իրականութիւնն ավելի շրջուցիչ կողմերը: Կույսը զարդարված է կապույտ, ծիրանի, բեհեզյա և որդան կարմիր ոսկեշող գույներ ունեցող գեղեցիկ պատմուճանով, իսկ.

Գոտին արծաթավայլ ոսկէտուռն.

Կամարակալ յականց, յականց շափիղայ

Մաճրամառին յօրինուածով պնենալ:

Թեև կրում է ոսկե մանյակ, լանջը զարդարված է «բառեակ մանեկաւ նշոյլափայլ մարուր ուլանցն յեռմամբ»¹: Երբ նա խոսում է, կարծես հնչում է քաղցրանվագ տավիղը, երբ քայլում՝ ընթացքը նման է մարգարտափայլ գեղեցկութիւն, շարժման ելևէջները հյուսում է միմյանց և շողը որպես կաթիլ նրա ոտքերից ընկնում է վար: Կույսը չի դառնում արեգորիկ կերպարանք, ճշմարտութիւն և բարութիւն անարդյունք սիմվոլ: Բանաստեղծը վերջում փառաբանում է սուտուն, որ ստեղծագործել է այդպիսի գեղեցկութիւն:

Կինը ոչ միայն հայ, այլև համաշխարհային հոգեղոր պոեզիայում գրկվում էր իր իրական գծերից և դառնում վերացական սկզբունքի— սրբութիւն, առաքինութիւն սիմվոլ, աստվածային էակ, զգայական սիրո արտահայտութիւնը համարվում էր հանցանք: Նույնիսկ Իտալիայում «քաջրավուն ոճի» հեղինակներ Գվիդո Գվինիչելլին (1240—1276 թ.), Գվիդո Կավալիկանտին (1259—1300 թ.) և Դանտես (1265—1321 թ.) սերը նույնացնում էին առաքինութիւն, ճշմարտութիւն և բարձրագույն իդեալի հետ, սիրային լիրիկայում ամբողջովին անհետանում էին սիրային ռեալ

¹ «Մատենագրութիւնք», էջ 414:

հարաբերությունները, նրանք ձգտում էին միմյանց հաշտեցնել հոգևորը մարմնականի, իսկ երկնայինը երկրայինի հետ: Այդ պատճառով էլ Դանտեի Բեատրիչեն մերթ իրական է, մերթ վերացական:

Նարեկացին եվրոպական վերածննդից առաջ նկարագրեց կնոջ իրական, բայց շքեղ պատկերը նման հուշակավոր ֆլամանդացի Ռուբենսի տիպերին — ծաղկաբույր ու առողջ մարմինը, փողփողուն զգեստը, մարմնի սեթև-վեթևները, լուսափայլ ծոցը, բոսորագույն այտերը, բայց զուսպ է Ռուբենսից և շի արտահայտում այն մեղկությունը, ինչ որ հատուկ է նրա արվեստին: Նարեկացին չնայած չափազանց նրբացած իր սուբյեկտի զգայնությանը (հատկապես «Ողբերգութեան» մեջ), ուղղակիորեն չի դրսևորում իր վերաբերմունքը, այլ բավարարվում է երգելով հարսի և փեսայի ցնծությունը՝ կրոնական այլաբանությամբ: Եվ այս հասկանալի է՝ նա երգում էր կուլսին, Մարիամ աստվածածնուն, բացի այդ՝ նրա դարում ամեն մի ըմբոստացում ասկես մորալի դեմ դեռևս համարվում էր հերետիկոսություն:

Նարեկացու, ինչպես և աշխարհիկ մարդու, իրենալը արտահայտվում էր նուրբ արվեստի մեջ, որի շենքը սկսում էր բարձրանալ ամուր (կյանքի) հիմքի վրա: Նրա պատկերած կուլսը նման է Ռաֆայելի, Տիցիանի մադոնաներին, որոնք հուշակապ արվեստով ստեղծված աշխարհիկ խարակտերներ էին: Իտալական վերածննդի շրջանում մադոննան դառնում է արվեստագետների ամենասիրելի հերոսուհին:

Նարեկացին որպես հայ վաղ վերածնության շրջանի հումանիստական կուլտուրայի արտահայտիչ ասկես՝ ճգնավորի մորալի սարսափի զգացմամբ չի մոտեցել կնոջը, այլ նա կուլսի մեջ գրել է մարդկային բովանդակություն՝ զգայական գեղեցկություն և հանճար: Այս երգի մեջ առավելությունը տրվում է իրական կյանքին, քան հանդերձյալ աշխարհին, մարմնին՝ քան հոգուն: Նարեկացին պաշտում է այդ կնոջը, սակայն նա սղոշտում է և՛ մարդկային, և՛ աստվածային երկչուլաժողովրդի: Մեր առաջ դեռևս կանգնած է զուսպ զգացումներով ամոթխած բանաստեղծը, որ ստիպված է իր սերը փառաբանել այլաբանական պատկերներով: Դա մի աղջիկ է, որ տանջել է բանաստեղծին և շքեղ փառքով մարմնավորվել կուլսի պատկերի մեջ:

Դարի հասարակական մտայնությամբ բնորոշվող հակասությունը շատ ուժեղ է արտահայտվել Նարեկացու արվեստի մեջ, մի կողմից մենք տեսնում ենք շերմեռանդ աղոթողին, որ փորձում է հեռանալ զգայական աշխարհից, բայց և չի կարող, մյուս կողմից այդ աշխարհը ռեալ և շատ անզգամ պայծառ տրամադրությամբ ընկալողին:



Աշխարհիկ կյանքը, կենցաղը Նարեկացու երգերում արտահայտվում են երկու կերպ — մերթ որպես շքերթ, մերթ՝ ժողովրդական առօրյա կյանք: Առաջինը բնության մեջ կատարվող հեթանոսական մի փառահեղ հանդես է,

իսկ երկրորդը՝ առօրյա կենցաղային տոների նկարագրի: Նարեկացին կյանքն ու բնությունը դիտում է միասնության մեջ, կոչ է անում ապրել բնության պայծառությամբ, զվարճանալ նրա գրկում, վառ կանաչից պսակներ հյուսել հարսանեկան հանդեսի համար:

Նրա պատկերած Քրիստոսի թափորը արքայական մի երթ է, որը նա տեսել է ու նկարագրել: Հիսուսին դիմավորող մանուկները «երփնաթերթ ծաղկանց» — մանուշակի, հազրեվարդի, արմավենու և սոսու սաղարթների՝ ծիածանի գույներ ունեցող փնջեր և ձիթենու տերևներ են փռում նրա ոտքերի տակ: Այս հովվերգական պատկերը ավելի ամբողջական է դառնում, երբ նույն մանուկները խմբերը եռալար տավրիղներով ու քնարներով բարձր հնչեցնում են իրենց զվարթ երգերը գարնանային բնության մեջ: Ժողովրդական կենցաղի հավատքը Նարեկացին նկարագրում է իր նշանավոր «Վարդավառին» տաղի մեջ: Պայծառ կեսօր է, արևի շողերի վրա ծավալվում է ծաղիկների ծովը, շուշանը լցված է «շող շաղով և շար մարգարտով»: Ծաղիկները շարը առել են ամպից, ամպը՝ արեգակից, ծառերը արձակում են վարդագույն ոստեր, հովը ալիբալորում է հրաշակերտ դաշար, լսվում է մեղմ մեղեդիի սոստփը: Բնությունը երգում է զարմանալի, թրթռուն մի երգ, որ եղել է գեղեցիկ ստեղծագործություն վերաբերյալ.

Երգ զարմանալի, երգ շարժվածքին
Տեղի եղև բարեկերտին:

Բնության այդ երգին բանաստեղծը միախառնում է մարդկային մեղեդին — սոսափող տերևը նման է այն տավրին, որով երգում էր հրաշալի Դավիթը:

Այս ընդհանուր և հոյակապ ֆոնի վրա բարձրանում է ծաղիկների թագուհին — արենազույն վարդը:

Ի համատարած ծովէն

Պղպլէր գոյնն այն ծաղկին:

Մնում էր ավելացնել մարդու մասնակցությունը, որպեսզի բնությունը վերածվեր մի զվարթ տոնի: Նարեկացին մարդուն չի անջատել բնությունից և այս փարթամության միջից կարծես բարձրանում է «Մեղեդի ծննդի» տաղում կերտված շքանաղ աղջիկը: Նարեկացին նկարագրելով վարդավառը, խոսափել է տոնին տալու հեթանոսական կենցաղական բնույթ, չնայած ներքուստ զգացել է անպատմելի հիացմունք, չնայած նրա մոտ իր վերածնունդն է ապրում մեր հեթանոսական անցյալը, որովհետև վանական կուլտուրայի մեջ տիրապետող էր աշխարհիկ կյանքն սպանելու ձգտումը: Նարեկացին բավարարելով այդ մտայնությունը, տուրք տալով նրան՝ երգի վերջում ավելացնում է երկու տող, բոլորովին անկասկածաբար բովանդակությունից.

Փառք հօր և որդւոյն յաւէտ,
սուրբ հոգւոյն այժմ և յալիօեանս:

Հեթանոսական շրջանում վարդավառք եղել է Աստղիկ դիցուհու տոնը՝ իսկ նրա պաշտամունքի խորհրդանիշը համարվել է վարդը: Այդ տոնը տոնվել է մեծ հանդեսով և դիցուհուն վարդեր են ձոնել:

Վարդավառ տոնի հեթանոսական բնույթի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում 11-րդ դարի գրական նշանավոր գործիչ Հովհաննես Կողբունը¹:

Բնության բերքի և առատության այս տոնը իր տրագիցիաներով մշտապես վառ է մնացել ժողովրդի կենցաղում: Նարեկացին նկարագրել է վարդավառը հոգու բերկրալից ապրումներով ու խնդությամբ: Այդ երգի մեջ նա փառաբանել է արևը և ամառվա բնության պայծառ պատկերը:

Նարեկացու մյուս երգերում կենցաղի նկարագրի մեջ ակտիվ դեր է կատարում մարդը. ««Սեաւ իմ դեղեցիկ» տաղը, գրված Սողոմոնի «Երգ երդոց»-ի ազդեցութեան տակ՝ հարսի ու փեսայի զովքն է, ուրախութեան և խրախճանքի երգը:

Սողոմոնի՝ հեթանոսական շրջանի աշխարհիկ սիրո պոեզիան նույնպիսի զվարթութեամբ հնչում է Նարեկացու մոտ: Հարսը իր եղբորորդուն (փեսային) նմանեցնում է եղնիկներին ու այծյամներին, իսկ ինքը մասնով և անհաս գեղեցկուհի է, նման է նարդոսի, գմուսի և կինամոնի:

Անկախ երգի աստվածաբանական բացատրությունից, թե հարսը, եվայի սև դուստրը, Երուսաղեմն է, իսկ փեսան՝ Քրիստոսը, Նարեկացին նկարագրում է հարսի և փեսայի ցնծությունը, հարսանեկան հանդեսը աշնանը, հնձան «կոխելու» և գինի պատրաստելու ժամանակ: Նրա աչքից շի վրիպել կենցաղի մանրուքը — հաց թխելը, ուխար մորթելը, խնջուլը, միմյանց բաժակներ մատուցելը՝ ի նշան հրավերի: Ապա զուտ կրոնական մտահոգեմամբ կատարում է թոխը, երբ հանդեսի վայրը դառնում է կեդրոնի ալգին, իսկ «Մեղեդի յարութեան» բանաստեղծությունը չնայած այլաբանությունն է Քրիստոսի վերջին օրերի ընթրիքի, բայց ըստ էության մի տոնախմբություն է, ինչպես Վերոնեզի (1528—1588 թ.) այն նկարները, որոնք վերաբերում են այդ թեմալին:



Նարեկացին առաջինն էր մեր պոեզիայի մեջ, որ երգեց աշխատանքն իր հուշակավոր «Յարութիւն» տաղում: Նկարագրված է դարձյալ Քրիստոսի երթը, սակայն կրոնական թեման էական դեր չի կատարում, և աստվածաբանական մեկնություններն ու համեմատությունները դառնում են վերացական:

¹ Մանրամասնությունը տե՛ս «Գրական թերթ», 1940 թ., № 26:

Նարեկացին նկարագրում է արքայական շքեղութեամբ զարդարված մի սալլ, որի վրա դրված են ծիրանի կերպասեղենով ծածկված աթոռներ ու ոսկեղեն գահույժ: Սալլին բազմել է արքայի որդին (Քրիստոսը) շրջապատված հրեշտակներով, սերովբեններով և քերովբեններով, իսկ նրա առաջ կանգնած են գեղեցիկ մանուկները՝ ձեռներին սաղմոսարան ու քնար: Այս նկարագրերը դարձյալ սերտորեն կապվում են Աղթամարի պալատի պատկերներին մեկի բովանդակության հետ. «Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահույժ, յորս բազմեալ երևի արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ զիրեառ ունելով պատանեակս լուսատեսակս, սպաստորս ուրախութեան, ընդ նմին և դասս գուսանաց և խաղս աղջկանց զարմանալոյ արժանի»¹, կամ նման են Գագիկի թագադրության հանդեսին. «... Եւ բազմութիւնք զօրացն սպառազինեալ յաջմէ և յահեկէ՝ թնդմունք ճալթմանց և փայլատակմունք սուսերաց, գոշմունք փողոց և հնչմունք եղջերաց, վանգինք սրնգաց և հեշտալուր քնարացն, տաւիդ հանդերձ զրօշիւք նշանաց առաջի և զվնի, և ի ձայնն ահեղ զհետ զղրղեալ բանակն արքունական զօրուն»²:

Հետագա նկարագրությունը կապվում է գլուղական աշխատանքի պրոցեսի հետ: Մեր առաջ պարզ պատկերացվում է գլուղական սալլն իր հոյակապ կերտվածքով և մանրամասնությամբ: Լուծը ոսկի է, սամիները արծաթյա են, «սամոտիքն ապրիշիմի», փոկերը հյուսված են կերպասից և բանված հույլ մարգարիտներով, իսկ եզները սաթ են ու սպիտակ:

Մաղկախայտուցք, առագախալլք, ընրացականք,

եղջիւրն ամլն խաշանման,

եկ մազն ամլն հույլ մարգարիտ:

Վերածննդի Լպտիսյում կյանքի կոչվեցին աշխատավոր մասնաների ստեղծագործական ուժերը: Արվեստագետները արտահայտում էին այդ ուժերի առաջավոր ձգտումները, ահա թե ինչո՞ւ բուրժուական կուլտուրան այդ էպոխայում բուրժուականորեն սահմանափակ չէր: Վերածնությունը իրենց հանդիսացավ ամենակարող մարդը, որը, ինչպես Լուսիսյում, թեև դեռևս բիրիական կերպար էր, բայց հանդես էր գալիս նոր բովանդակությամբ: Այդպիսին է Նարեկացու այս բանաստեղծության մեջ Հովհաննես Մկրտիչը, որը հովիվ է, ճորտ և նրանից է սկսվում կյանքի շարժումը, նա շարժում է կյանքի սալլը, կյանքը մղում է առաջ: Նարեկացին հիացմունքով է պատկերել նրան որպես ուժի, առողջության և գեղեցկության մարմնացում:

Այն նուրմն նոն էր և ճապուկ,

Ուռամիջակ, հաստարագուկ,

Խայնաթիկունք, խարտիշագեղ, աճեղագոչ...

¹ Թովմա Արծրունի, «Պատմություն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 482:

² Նույն տեղ, էջ 467:

Նա բշում է եզները և սայլը սկսում է գլորվել Մասիսի աչ կողմից համաչափ, բայց արագ ընթացքով, ինչպես կյանքն է զվարթորեն շարժվում առաջ:

Ի գիլ գայր ի գիլ, սայլիկն ի գիլ

Ի Մասեաց յաչ կողմանէն՝

Սայլիկն ի գիլ գայր ի գիլ

Եւ ճռնչալով գայր մտանէր յերուսաղէմ:

Այս տաղի մեջ մեծ տեղ են բռնում այլաբանութիւնները: Քրիստոսը գնում է Երուսաղէմ Մասիս լանջերից: Սա զուտ կրոնական մտահոգացում չէ, այլ արտահայտված է նոր կյանքի զարթոնքի իրեայլը, հայրենիքի ապագայի հույսը, նրա հարութիւնը:

Նարեկացին աշխատանքի երգին զուգակցեց շինարարութեան և արվեստի նկարագիրը:

10-րդ դարում ուժեղ զարգանում էին ճարտարապետութիւնը, շինութիւնն ու արվեստը, որմանակարչութիւնն ու քանդակագործութիւնը: Արվեստի զարգացումը մի կողմ էր նետում ասիկա հայացքը մարդու պահանջների ու նրան շրջապատող բնութեան նկատմամբ: Նկարչութիւնը ավելի աշխարհիկ էր, քան այդ դարի գրականութիւնը: Մնուսդ առնող մանրանկարչութիւնը իր երանգներով և բազմազան ձևերով արտահայտում էր մարդու հոգու պայծառութիւնը, արվեստը ձգտում էր նմանվել կյանքին և բնութեանը:

Նարեկացին պատկերեց ճարտարապետական կոթողները, դարձավ ոչ թե լոկ երևութի պատկերողը, այլև շինութեան հետ միասին ավելց արվեստի նկարագիրը, իր ժամանակվա նկարչութեան նկարագրի մեջ մտցրեց շարժում և թռիչք: Նա մի շարք գծերով արտահայտեց մեր անցյալի ճարտարապետութեան և նկարչութեան ոճը:

Մաղկոզ, ներքին համաչափութիւն ունեցող ճարտարապետութեանը, այդ քարեղեն պոեզիային ձգտում էր ներդաշնակել լիրիկան, և մի խորունկ ներքին կապ էր ստեղծվում նրանց միջև ճարտարապետութիւնը չէր մնում անշունչ, նա ձգտում էր լեզու առնել, համր պատկերները վերածել շարժվող ուժի, հենց այդ ուժը սկսում էր դառնալ քնարերգութիւնը: Պոեզիան և ճարտարապետութիւնը, որպես հարազատ քույրեր, ձգտում էին իրար, ահա թե ինչու ճարտարապետութիւնը և նկարչութիւնը նկարագրվող սիրելի թեմա են սկսում դառնալ ոչ միայն պոեզիայի, այլև պատմագրութեան մեջ՝ նրան հաղորդելով պոետիկ շունչ և հուզականութիւն:

Նարեկացին վերարտադրում է Սողոմոնի կառուցած տաճարի պատկերը, սակայն այս հեռավոր նյութի մեջ նա դրել է իր ժամանակի կենդանի փաստերը, շնչալից որոշ նմանութիւններ կան նրա և Աստվածաշնչի նկարագրութիւնների միջև¹:

¹ Ավելի մանրամասն տե՛ս «Աստուածաշունչ», Պոլիս, 1895 թ., էջ 470:

Նարեկացու նկարագրության առաջին աղբյուրը ոչ թե եղել է Աստվածաշունչը, այլ Աղթամարի տաճարը և պալատը, որոնք 10-րդ դարի ճարտարապետական կառուցումների գլուխգործոցներից էին:

Աղթամարի տաճարի պատերի վրա թե՛ ներսից և թե՛ դրսից կան բազմաթիվ քանդակներ, կիսարձաններ, որոնց բովանդակությունը վերցված է մասամբ Աստվածաշնչից և մեծ մասամբ՝ կյանքից: Քանդակված են զանազան թռչուններ (արծիվ, սիրամարգ, աղավնի), կենդանիներ (այծյամ, եղնիկ, ոչխար, հոջերու), ծաղիկներ, ծաղկեփնջեր, պտուղներ, ծառեր: Այս քանդակները տրված են և ամբողջական տեսարաններով՝ մարդիկ կապված իրենց աշխատանքի պրոցեսի հետ՝ որսորդություն, հողագործություն, այգեկույտ, թռչունները կտացահարում են մրգերը, կենդանիները կուլում են միմյանց դեմ, վարձակներ, գուսաններ և այլն:

Անանուն Արծրունին եկեղեցու ներքին զարդարանքների մասին գրում է. «Իսկ ի ներքուստ կողմանէ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապատճոճ դեղովք դրամբք արծաթապատօք և լի ոսկեհոտն զարդիւք, ոսկեպատ պատկերօք և ակամբք պատուականօք և մարգարտահիւս զարդիւք և պէս-պէս երեւիլի և պայծառ սպասիք»¹:

Նույնպիսի շքեղ նկարագիր ունի և կառուցված պալատը. «Եւ շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին ի թուիչ կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արդարև արժանի զարմանալոյ ի վերքան զմիտու: Ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անզննելի աշաց. ունի և գումբէթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս...» իսկ պատերի վրա եղել են բազմաթիվ նկարներ, որոնցից մեկը վերաբերում է թռչուններին. «...Եւ անդ երամբ հաւուց զարդարեալք և պէս-պէս պաճուճանս»²:

Գր. Նարեկացին նույնպես նկարագրում է եթերանման կամարները, որոնք բանված են թանկագին ակներով, խորանի պսակները, տաճարում նկարված «պերճաբարոյ ցոպինաճեմ սէգ» սիրամարգը, որ կարծես թե թռչում է վերև, հրաշագարդ սեղանը, որպես զարմանաթանջ հրաշք:

Նարեկացու նկարագրությունների մեջ կա ավելին, քան Աստվածաշնչում և Արծրունու պատմության մեջ: Նա ավելի ճոխ երանգներով է վերարտադրել կյանքը: Տաճարը երկնքի և երկրի միասնությունն է, երկինքը իջել է ներքև, երկիրը բարձրացել վերև: Պատերին նկարված են հոյակերտ պատկերներ—հրեշտակները որպես հողմ արծվային թռիչքով եթեր են բարձրանում, շորս դետերը հոսում են դեպի ծով, նրանց հոսանքից ծաղկում են բուրաստանները, այնտեղ մակաղում են ոչխարի հոտերը, ծովը ծավալվում է ժպտալով ու մակերևույթի ստատանումներով քաղցր օդի շնչից, նրա վրա ճախրում են աղավնիների երամները, ամպերը շողում են շափյուղա փայլով Կեդրոնի մեծ այգու վրա:

¹ Թովմա Արծրունի, նույն տեղ, էջ 487:

² Նույն տեղ, էջ 481, 482:

Նարեկացին իր նկարագրութիւնների մեջ մտցնում է շարժում, պոռթկում ներքեկից դեպի վերև: Կարծես թև գործ շունի անշունչ առարկաների հետ, այլ նրա առաջից շարժվում է կենդանի, ավելի հարուստ և բազմազան կյանքը: Նա վերստեղծում է պատկերը կրկնակի փայլով և զվարթութեամբ, արտահայտում է մարդկային մտքի կորովը և խաղաղ հոգին, որ խաղում է ծաղիկների մեջ, արբում կնդրուկի բուրմունքով, ծիծաղում արևի շլացնող լույսի, ծիծղուն ծովի ծփանքների ու բաղբրիկ հովի հետ: Այստեղ մեր առաջ պատկերանում է բանաստեղծի հոգին մերթ խոտվահույզ, մերթ անգորր, ինչպես աստղի մեղմ ցուրը:

5

Նարեկացին մեր գրականութիւնն պատմութեան մեջ մեծ լեզվաշինարար էր: Նոր թեման և նոր գաղափարախոսութիւնը չէին կարող բավարարվել նախկին գրական ձևերով, գրական լեզվի նախկին «կլասիկ» կանոններով: Նարեկացու լեզուն թեև բավական խրթին է, բայց այն իր վրա արդեն կրում է անցման շրջանի ոճի կնիքը, որ այնքան բնորոշ էր ոչ միայն նրա, այլև 10—11-րդ դարերի գրականութեան համար:

Որո՞նք են Նարեկացու լեզվի, ոճի և արվեստի առանձնահատկութիւնները:

Առաջին՝ Նարեկացին կլասիկ գրաբարին անհամատեղելի չէր համարում նոր այնպիսի բառերի կիրառութիւնները, որոնց ծագումը մենք ոչ թե որոնում ենք մատենագրական հարուստ երկերում, այլ ժողովրդական լեզվի մեջ: Կան բառեր, որ միայն Նարեկացին է գործածել և միայն նրա մոտ (տվյալ դեպքում տաղերում) ենք պատահում: Այդպիսի բառերի աղբյուրը եղել է ժողովրդական լեզուն, ժողովրդի խոսվածքը, օրինակ՝ ամբողջ, ամուլ, ապրեշում, առեղ, եղիշ, ժմին, խորձան, կորնկան, հղևոր, հով, ճար, մին, քաղցրիկ, ապճիտ, ատիճաղ, պատիճաղ, սողի, վակասիր և այլն:

Երկրորդ՝ Նարեկացին գրաբար և ժողովրդական հարուստ լեզվի հիման վրա կատարում էր ստեղծագործական աշխատանք՝ հորինելով այնպիսի բարդութիւններ, որոնք թեև կազմված են սովորական ձևերով, բայց ամբողջութեամբ հատուկ են նրա ոճին, օրինակներ՝ լրումնօրին, արդինւալուր, սիրաբողբոջ, սիրամայր, անծերունի, թիկնէթեկին, ոստազուարճ, արփազարդարեալ, լեռնաթափեան, սաթբերունի, ճոխճեմ, բոսորաբերինազարդեալ և այլն: Այդ բառաբարդումների մեջ շատ են և այնպիսիները, որոնք կազմվել են անսովոր ձևերով—տաղերում, տեղիարան, կողմնապատիր, պտղինաւտ, մաքրինաճեմ, ցոփինաճեմ, ելինագոյ և այլն: Այս բառաձևերի մեծ մասը Նարեկացին հորինել է բառերի իմաստը է՛լ ավելի սաստկացնելու, ուժգին դարձնելու համար, օրինակ՝ բամբերգային, զօրեղինին, թևատրոհաթև, ծիծաղախիտ, մահինաբողբոջ և այլն: Չափազանց անսովոր են նաև այն ձևերը, որ հորինել է Նարեկացին՝ առարկաների տեսակը ցույց տվող վերջածանցները դնելով գոյականների վրա—անծայրենի, գծագրենի, երգենի,

ծոցածագննի և ալն, ինչպես այժմ մեր լիզվում կարող ենք ասել՝ ձիթենի, հացենի:

Երբորդ՝ Նարեկացին միշտ գտնում է արտահայտությունների, պատկերավորման նոր ձևեր, որով առանձին երանգ է հաղորդվում նրա ոճին: Նրա մտածումները ընդհանրապես հախուռն են, նա կրքի մեծ ուժի տեր բանաստեղծ է, ավելացրած հզոր երեակայությունը: Բնական է, այսպիսի խառնվածքը չէր կարող բավարարվել լեզվական սովորական «առօրյայով», այլ մեծ հակում ուներ շքեղ ու փարթամ արտահայտվելու, բայց բանաստեղծի երևակայությունը, գոնե տաղերում, չի կտրվում իրականությունից, միայն թե այդ իրականությունը արտահայտվում է ընդհանրացման մեծ ուժով: Նարեկացին իր պատկերները կերտում է բնության նյութից, սակայն այն սերտորեն կապում է իր անձնական հույզերի և ապրումների հետ: Նարեկացու պատկերները, էպիտետները, մետաֆորները նուրբ են և ուժեղ, պոետը իր համեմատությունների մեջ շքեղացնում է սովորականը, բայց պահում է բնականությունն ու ներդաշնակությունը: Տաղերում Նարեկացին ավելի գուսպ է և չունի կպիտեսների այն անսպառ հորդությունը, ինչ որ բնորոշ է «Մատեան ողբերգութեան» համար: Նա էպիտետները կերտում է բառաբարդումներով, պատկերները իրենց գեղեցկության հետ միասին իրական են, և դա նրա արվեստի ամենաուժեղ կողմերից մեկն է, անգամ վերացական հատկանիշները դառնում են շոշափելի, օրինակներ՝ «բոսոր-երուսդեան վայելչութիւն», «լուսաշաւիղ գնացք», «արբայաճեմ ուհ», «փայլք փաղփինասաբ», «բոսորայնոյ գոյն», «կենսաբեր մահ», «տրոմական հովիտ» և այլն: Գեղեցիկ են նաև մետանոմիաներով և մետաֆորներով ստեղծած պատկերները, որոնց ընդգրկած բովանդակությունը ավելի լայն է, քան այն, ինչ արտահայտվում է մակդիրների միջոցով, օրինակ՝ «բերան երկթերթի, վարգն ի շրթաց կաթէր», «ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ», «խնձորով զիս պատեցէք, տարեալ մուծէք ի տուն զինւոյ», «իմ վարսս անձրևով քաղցրիկ ցողով լի», «Աչրն ծով ի ծով ծիծաղախիս ծաւալանայր յառաւօտուն» և այլն:

Չորրորդ՝ պոետը հաճախ է սիմվոլացնում իրականությունը այլաբանությունների միջոցով: Ալեգորիաների արտահայտությունը իր ժամանակի աստվածաբանական սխալատիկ գիտությունների և փիլիսոփայության ազդեցության հետևանք էր: Սակայն Նարեկացու երգերում այդ այլաբանությունների բովանդակությունը իրականությունն է, որին պոետը ըստ միջնադարյան ոգով հարկադրված էր առաջ աստվածաբանական մեկնություններ: Այսպես՝ օրինակ՝ «Յարութեան» տաղում սայլը համարվում է Մովսեսի երկրորդ օրհնքը, հարյուր բարդ խոլմանը՝ մարգարեներ, վեց բարդ կորնկանը՝ աստու վեցօրյա գործերը, մի բարդ մանուշակը՝ «միաուրեալ երրորդութիւն» և այլն: Այլաբանությունների այդ զոգմատիվը թեև պարտադիր էր աստվածաբանական արվեստին, բայց Նարեկացու երգերում այլևս բովանդակություն չէր, այլ ձև, իր հետ բերելով առանձին խրթնաբանու-

թյուն, որովհետև նոր սկսվող բովանդակությունը դեռևս արտահայտվում էր հին ձևով, սակայն սիմվոլիկ բնույթ ունեցող այլ այլաբանությունները բնորոշ չեն Նարեկացու բոլոր բանաստեղծությունների համար: Այնգործա- ների մեջ չնայած պահպանվում է միջնադարյան կրոնական ոգին, բայց կյանքի նկարագրությամբ այն (ոգին) արդեն կազմալուծվում է և քաչքայվում:

Հինգերորդ՝ Նարեկացին բացեց արվեստի դռները կյանքի առաջ, և կյանքն սկսեց ներխուժել նրա մեջ: Նա օգտագործեց մեր հոգևոր երգերի դարավոր մոտիվները, սակայն միաժամանակ նրա և հոգևոր հեղինակների միջև կա մեծ տարբերություն. ոչ բոլոր շարականների մեջ է երևում Ռթմի ուժեղ զգացում, իսկ Նարեկացու տաղերում այն դարձավ օրինաչափ երևույթ, Նարեկացին բովանդակությունը արտահայտեց ավելի սեղմ և պո- ետական մշակված լեզվով, պրոզան նրա երգերի մեջ իշխող չէ, ինչպես շա- րականներում: Նա ավելի կուռ դարձրեց բանաստեղծության կոմպոզիցիան, մշակեց տեխնիկան, միասնություն ստեղծեց ոտանավորի ձևի և բովանդա- կության միջև, մինչդեռ շարականների կոմպոզիցիան ընդհանրապես թույլ է, ամբողջականությամբ պակաս, պոեզիան և պրոզան զուգակցում են մի- մյանց: Նարեկացին մշակեց բանաստեղծության բովանդակությունը, կապի, միասնության և օրինաչափ հաջորդության վերածեց բովանդակության մա- սերը: Նա կիրառեց բանաստեղծության բազմազան տեսակներ, չափեր և արտահայտության ձևեր¹: Նարեկացին երգն անշատեց ծեսից և բանաս- տեղծությունը տվեց անկախ լինելու ուժ և իրավունք, բացեց մի նոր ուղի մեր միջնադարյան պոեզիայի զարգացման համար, դարձավ նախակարա- պետը միջնադարյան հայ պոետների:

Վեցերորդ՝ Նարեկացու ոճին բնորոշ է երկու հատկանիշ՝ մերթ նա խրթնաբան է, երբեմն նույնիսկ անհասկանալի, ուժեղ են այլգործիաները, մտածողությունը վերացական է, իսկ թեման աստվածաբանական, մերթ (գերակշռողը տաղերի մեջ) լեզուն ազատվում է արտասովոր խրթնաբանու- թյունից, մտածողությունը դառնում է հստակ, այլաբանությունները կամ իսպառ բացակայում են կամ թե կան, ապա դոզմատիկ ձև են, քան թե բովանդակություն: Այս դեպքում Նարեկացու թեման ևս արդեն կոնկրետ է, նրա բովանդակությունը, դառնում է կյանքն ու բնությունը Նարեկացին որոշ երգերում նույնիսկ դառնում է երկրային երգիչ՝ արտահայտելով վե- րածնության աշխարհայեցողության մի քանի բնորոշ կողմերը:

Նարեկացու մտածողության և արվեստի այս երկտիկ բնույթը հետևանք էր 10-րդ դարի Հայաստանի անտեսական և քաղաքական հարբերություն- ների, երբ մի կողմից ուժեղ էր վանական կյանքն ու աշխարհայայցքը, մյուս կողմից հասարակական կյանքն իր բոլոր ուղղություններով ապրում

¹ Այդ մասին ունենք մի այլ ուսումնասիրություն — Նարեկացու սա- ղերի տաղաչափությունը (անտիպ):

էր մեծ գարթոնքը շրջանը: Այդ բեկումը լեզվի մեջ սկսվել էր դեռևս 9-րդ դարից:

Հովհաննես Գրասխանակերտցի կաթողիկոսը վկայում է երկու տարբեր ոճերի գոյություն մասին, որ մեր հեղինակները արդեն գրում էին և ըստ «քերթողացն արուեստի», այսինքն՝ քերթողական, հետտորական ոճով, ավելի շատ նմանվելով մեր նախորդ պատմագիրներին և միաժամանակ՝ «ըստ գեղջկաց անարուեստից», այսինքն՝ գեղջկական, ժողովրդական խոսվածքով, կամ այդ խոսվածքին մոտ լեզվով: Երկրորդ ոճի առաջին նմուշը մեր գրականության մեջ տվեց Շապուհ Բագրատունին իր պատմական զրույցներով՝ ուժեղ շափով արտահայտելով վերածնության շունչը: Պայքարը այդ երկու ոճերի միջև շարունակվում էր և հետագայում: Ներսես Շնորհալին այդ ոճերը հորջորջում է արդեն նոր պոետական անվամբ՝ «ժամուկ ճառ» (խրթնարան ոճ) և «մեկին բան» (պարզ ժողովրդական ոճ): Գրականության պատմությունից հայտնի է, որ 12-րդ դարից ժողովրդական լեզուն սկսում է հաղթանակ տանել՝ հիմք դնելով մեր գրական նոր լեզվին՝ միջին հայերենին:

6

Վաղ վերածնունդը Հայաստանում սկսվեց 10-րդ դարում, և նրա առաջին խոշոր դեմքը դարձավ Գրիգոր Նարեկացին: Հայաստանում սկսվող հասարակական նոր ուժերի շարժումը և նոր գաղափարախոսությունն աճը հին ընդերքում մեկուսացած երևույթ չէր հարևան ժողովուրդների տնտեսական և կուլտուրական աճից: Հայաստանը, շփման մեջ գտնվելով քրիստոնյա և մահմեդական երկրների հետ, չէր կարող չընդունել «հարևան ժողովուրդների ստեղծագործության հարուստ արդյունքները» (Ի. Օրբելի):

Հայաստանում պարսկական տիրապետության անկումից հետո նանգևեկավ մի նոր պետություն՝ արաբական խալիֆայի տիրապետությունը: Հայարաբական երեք դար տևող շփումը չէր կարող կուլտուրայի մեջ իր հետքը չթողնել: Սակայն այդ արդեցությունը գրականության մեջ ոչ թե արտահայտվում էր բովանդակության, այլ գրական ձևերի մեջ: 8—10-րդ դարի արաբական պոեզիայի ոճը պահուստով էր ճոխ և ճոռոմ սեփեկթանքով, զարգանում էր հանգը պոեզիայի և պրոզայի մեջ, բարդանում էին շափերը, կիրառվում էին տներ, սկսում էր մոդա դառնալ հնչյունների և բառերի խաղը: Նոր ոճի ամենախոշոր ներկայացուցիչներն էին Աբու Նուվասը (մեռ. 813 թ.), որին Եվրոպայում հաճախ համարել են արաբական Անակրեոն կամ Հայնե, Մուտանաբբին (մեռ. 965 թ.)՝ հնչյունների, երաժըշտականության և գրավիչ պատկերների նշանավոր վարպետներից մեկը և այլն: Սակայն այս նոր ոճը մահմեդական աշխարհի երկրներում՝ Արաբիայում, Պարսկաստանում և Աղբբեջանում իր ծաղկումն սկսեց ապրել հետագա 11—12-րդ դարերում, արաբական խալիֆայի քայքայումից և անկումից հետո, իսկ Նարեկացին դեռևս իր դարում եզակի դեմք էր: Ինչպես

գրում է Վալերի Բրյուսովը «Գրիգոր Նարեկացին բարձր կատարելության հասցրեց բանաստեղծությունների ձևը, սիրով մշակելով «բարեհնչունությունը» ավելի առաջ, քան այն ծաղկեց պարսկական և արաբական պոեզիայի մեջ: Այս առնչությամբ էլ Գր. Նարեկացու բանաստեղծությունները հանդիսանում են միջնագարի «աշխարհիկ» պոեզիայի ազգաբարրումը»¹:

Հայկական վերածննդի հույժ առաջին հերթին գտնվում էր բուն երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ, որը կյանքի կոչեց նոր ուժեր, ինչպես և հարուստն տվեց հին որոշ ձևերին, հայ հին հեթանոսական կուլտուրայի բուն աշխարհիկ ոգուն: Գրականության մեջ մշակվում են նոր ժանրեր — էպոս, առակ, նովել, զրույց և այլն: Ֆոլկլորում մեր վերածննդի ամենախոշոր հուշարձանը դարձավ «Սասունցի Դավիթ» էպոսը: Բացի գրականության նոր տեսակներից զարգանալ են սկսում դրական գիտությունները, հայտնության անպտուղ գաղափարը այլևս չի բավարարում ամեն ինչ որոնող մարդկային մտքին, բնությունը, հասարակական կյանքը ոչ միայն հրապուրիչ են դառնում արվեստի համար, այլև գիտությունը սկսում է դուրս գալ իր ծայրահեղ հայեցողական-աստվածաբանական խնդրից, զարմանալ ու հիանալ անկեղծական վիժվաբան տաճարում՝ որոնելով այն կապը, որ կա մարդու և բնության միջև: Գիտության և արվեստի կողմից այս հետաքրքրությունը հասարակական կյանքի և բնության նկատմամբ փոփոխություն է առաջ բերում նաև դպրոցական-լուսավորական և կուլտուրական այլ հիմնարկների (թատրոն, կրկես, զանազան մարզարաններ) գործունեության մեջ: Պատահական չէ, որ առանձնապես այս շրջանում ստեղծվում են մեծ զբաղարաններ հազարավոր ձևազիր մատյաններով ոչ միայն վանքերին կից, այլև քաղաքներում՝ խոշոր ֆեոդալների և հարուստ քաղաքացիների պալատներում: Բուռն զարգացում է ապրում գրչության արվեստը: Իսկ դպրոցական կյանքում փոփոխվում են ուսումնական դասընթացներն ու նրանց ծրագրերը, հիմնվում են այնպիսի դպրոցներ, որոնք վանքերին կից չէին:

Հայկական վերածննդի մասին խոսելիս չի կարելի անտես առնել մի կարևոր հանգամանք—առանձին սեր և հետաքրքրություն դեպի անտիկ հունական կուլտուրան: Ինչպես հայտնի է, կովկասյան ժողովուրդները ավելի վաղ են զբաղվել անտիկ արվեստով և փիլիսոփայությամբ, քան Արևմուտքը: Հելլենիստական արվեստի տրադիցիաները ոչ թե խամրել, այլ շարունակել են հարատևել Բագրատունիների և Արծրունիների թագավորության ժամանակ: Եթե եվրոպական վերածնության շրջանում «ուսմանական ժողովուրդների մեջ գնալով ավելի ու ավելի արմատանում էր արաբներից անցած և նոր հայտնագործված հունական փիլիսոփայությամբ սնված կենսուրախ տրամադրությունը, որը նախապատրաստեց 18-րդ դարի մատերիալիզմը², ապա հայկական կյանքը առանց այդպիսի միջնորդության դա-

¹ В. Брюсов. «Поэзия Армении», Москва, 1916 г. ст. 44.

² «Մարբրը և էնգելսը արվեստի մասին», Նրևան, 1934 թ., էջ 123:

րեր շարունակ անմիջական հաղորդ է եղել անտիկ կուլտուրայի արվեստին և փիլիսոփայությանը: Մինչև 10-րդ դարը հունարենից հսկայական քանակով երկեր են թարգմանվել և ուսումնասիրվել, իսկ վերածնության շրջանում ոչ թե բավարարվում են անցյալում եղածով, այլ շարունակվում են թարգմանվել և մանավանդ մեկնաբանվել անտիկ աշխարհի գիտական, դրական և փիլիսոփայական խոշոր աշխատությունները: Ակադ. Մ. Աբեղյանը թեև պայմանական ընդունում է վերածնության տերմինը, սակայն այդ շրջանի գրականությունը դարձյալ դերազանցապես համարում է եկեղեցաֆետոլայական. «Բայց 10-րդ դարում դժվար է տեսնել մեզնում անտիկ գիտության, արվեստի ու գրականության այնպիսի մեծ ծանոթություն և սզգեցություն, որի հետևանքով կերպարանափոխվեր մեր եկեղեցաֆետոլայական գրականությունը»¹:

Հայ վերածնության շրջանում աշխույժ հետաքրքրություն է առաջ գալիս նաև հայ այն հեղինակների նկատմամբ, որոնք հանդիսացել են հելլենիստական կուլտուրայի ուժեղ գրողները—Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի և այլն: Մովսես Խորենացին դառնում է գրական տիպար, մեր անցյալի կուլտուրայի խոշոր ներկայացուցիչ: Նրա երկերում գտնում ենք ոչ միայն գրական փայլուն ոճ, այլև պայծառ միտք:

Գրիգոր Նարեկացին այս միջավայրի և հասարակական մտայնության արդյունք էր, գրական մի այնպիսի վիթխարի դեմք, որ իր ժամանակ չէր սովել ոչ Արևելքը և ոչ Արևմուտքը: Նարեկացու տեղը համաշխարհային գրականության մեջ կամ հասարակական մեծ շարժումը Հայաստանում նույն ոգով գնահատել են Վալերի Բրյուսովը, ակադեմիկներ Ն. Մառը, Մ. Աբեղյանը և Հ. Մանանդյանը: Մանանդյանը գրում է. «Բազրատունյաց Հայաստանի տնտեսական զարգացումը 10—11-րդ դարերում մեզ հիշեցնում է Արևմտյան Եվրոպայի զարգացումը ռեֆորմացիայից առաջ 14—15-րդ դարերում: Արդյունագործական արտադրության և ապրանքային ու դրամական տնտեսության զարգացմանը դուզընթաց, ինչպես հայտնի է, Եվրոպայում սկսվել էին հեղափոխվել ֆեոդալական հին կարգերը և այդ հեղափոխումը կատարվում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում: Նույնը նկատելի է ըստ իս գերմանական ռեֆորմացիայից մոտ չորս դար առաջ՝ Բազրատունյանց Հայաստանում»²:

Սակայն վերածննդի առաջընթաց շարժումը, որ սկսվել էր Հայաստանում 10—11-րդ դարերում, չունեցավ իր այնպիսի զարգացումը, ինչպես այն ապրեց արևմտա-եվրոպական երկրներում, որովհետև Բազրատունիներին երբևէ չհաջողվեց ստեղծել քաղաքական մի միասնական պետություն: Բազրատունիների միասնական պետություն ստեղծելու փորձին ուժեղ չափով

¹ «Հայոց հին գրականություն պատմություն», Երևան, 1946 թ., հատ. 2, էջ 3:

² Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940 թ., էջ 40:

դիմադրում էին թե՛ ներքին կենտրոնախույս ֆեոդալական երկպառակտիչ ուժերը և թե արտաքին ճնշող ուժերը՝ սահմանակից մահմեդական պետությունները և Բյուզանդիան, որ ձգտում էր աստիճանաբար նվաճել Հայաստանը: Շուտով վրա հասան նաև թուրք-թաթարական ցեղերի աշխարհավեր արշավանքները և հայկական թագավորությունները անկումն ապրեցին: Քաղաքական այս անբարենպաստ պայմանների հետևանքով Հայաստանում այդ վերընթաց շարժումը հո շարտվեց, բայց չկասեցվեց: Այն, ինչ սկսվում էր՝ իր զարգացումն ապրեց Ջաբարյանների և Կիրիկյան թագավորության դարերում, սակայն հայ կյանքի մասնատվածության և կենտրոնացված սլետականության բացակայության պայմաններում մեր վերածնունդն ապրեց իր դանդաղ և տևական պրոցեսը: Այն, ինչ կար, շխարհացան ոչնչացնել ո՛չ «քաղաքակրթված» Բյուզանդիան և ոչ էլ բարբարոսական ցեղերը: 10-րդ դարից սկսված մեր կուլտուրայի բեկումը շարունակում է իր տրեաջան վերելքը և ժողովրդական ազատախոհ ոգին տոնում է իր հալթանակը միջնադարյան հայ քնարերգության մեջ, ժողովուրդն ասլրում ու զգացվում է հերոսական վիպերգներով, աշխարհիկ բովանդակությամբ նովելներով, սիրո, կենցաղի ու աշխատանքի քնարերգությամբ:

ՏԱԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ը, ինչպես նաև մյուս երկերը («Մեկնութիւն երգոց երգոյն», գանձերը, ներբողները և այլն) ունեցել են տպագրական երկարամյա պատմութիւն, սկսած 1673 թվից (Մարտիրոս) մինչև 1926 թիվը (Վենետիկ)։ Որքան մեզ հայտնի է, «Ողբերգութիւնը» հրատարակվել է 51 անգամ, որից՝ 27 անգամ Կ. Պոլսում, 14 անգամ Վենետիկում, 4 անգամ Երուսաղեմում, 3 անգամ Զմյուռնիայում, 1 անգամ Մարսելիայում, 1 անգամ Քբիլիսիում և 1 անգամ Փարիզում։ Հայ տպագրութեան պատմութեան մեջ չի եղել մի գիրք այսքան հրատարակութիւն ունեցող։

Բացի այս հրատարակութիւններից, կան «Ողբերգութեան» գրաբարից աշխարհաբար թարգմանութիւններ։ Որքան հայտնի է մեզ՝ առաջին անգամ երեք պատառ (մի հատված ժԲ գլխից և ին, ԶԳ գլուխները) թարգմանաբար հրատարակվեց 1895 թ. «Ծաղիկ» հանդեսում (№ 4), առանց թարգմանչի անվան հիշատակութեան։ Երկրորդ, բայց լրիվ թարգմանութիւնը կատարել է Միսաք Գոշունյանը (Քասիմ)։ Սկզբում տպվեց «Մանգումե» թերթի 1899 թ. համարներում, բայց շարունակվեց և առանձին գրքով հրատարակվեց 1902 թվականին Պոլսում։

1909 թ. «Տաճար» հանդեսը (№ 1, 2—3) հայտնում է մի այլ թարգմանութեան մասին, որ ավարտված չէ և որպես նմուշ մեջ է բերում երկու հատված ժԲ և ԼԳ գլուխներից (թարգմանիչ՝ Հ. Մրմրյան)։ Իսկ 1912 թ. «Տաճար»-ը (№ 7, 9) տպում է Գարեգին ծածկանվամբ մեկի, որին համարում է ժամանակակից գրականութեան նշանավոր մի դեմք, բայց ով լինելը չի հայտնում, «Ողբերգութեան» երկու հատվածների թարգմանութիւնը (Գլ. է. և Ը)։ Երկրորդ լրիվ թարգմանութիւնը կատարել է Թորգոմ Գուշակյան եպիսկոպոսը, հրատարակված Կահիրեում, 1926 թվականին։

Մխիթարյանների Թորոսյանը «Ողբերգութիւն»-ից մի քանի հատվածներ թարգմանել է ֆրանսերեն, իսկ Աթանաս Տիրոսյանը՝ «Ճառ ներբողական ի սուրբ կոյսն Մարիամ»-ը թարգմանել է իտալերեն (Վենետիկ, 1904 թ.), որին կից կա Նարեկացու համառոտ կենսագրութիւնը։

Իտալացի հայագետ Ուպալտոս Յալտաթին 1922 թ. «Ուղբերգութիւն»-ից երեք գլուխներ թարգմանել է իտալերեն: Իր առաջաբանում նա գրում է. «Հայ դասական լեզվին բոլոր գեղեցկութիւնները, բոլոր գանձերը, բոլոր դարձվածքները, վառվառն երևակայության մը բոլոր պատկերները, սիրարժարժ սրտի մը բոլոր արցունքները կան հոս, այս ողբերգութիւնց մեջ»¹:

Հսկայական է նարեկացուն վերարերող ձեռագրերի ընդհանուր թիվը (շուրջ 300): Դրանց մեծագույն մասը վերաբերում է «Ուղբերգութեան»-ը: Այդ ձեռագրերից մեկը կոչվել է «Նատուշկաց Նարեկ», գտնվել է Կոնստանստանուպոլիսում և ենթադրվել է որպէս Նարեկացու ձեռագիրը:

Կա մի ձեռագիր՝ «Ուղբերգութեան» արաբերեն թարգմանությունը: Թարգմանել է Հալեպցի տեր Խաչատուր քահանա Սապպադյանը: Գտնվում է Հալեպում մասնավոր մարդու մոտ:

Սակայն այդպէս չի եղել բանաստեղծութիւնների վիճակը: Այս մեծաթիվ ձեռագրերից միայն Վենետիկի մի ձեռագրի մեջ (1678 թ., № 892) են նշվում տաղերը: Բայց դրա փոխարեն նրանք գտնվում են ձեռագիր տաղաբաններում:

Մեզ հայտնի միայն երեք հրատարակությունների մեջ կան Նարեկացու տաղերը, «Ուղբերգութեան» և այլ գործերի հետ միասին:

Վենետիկ, 1804 թ.— «Նարեկ և տաղ»:

Այս ժողովածուն ունի միայն 8 տաղ.— «Մեղեդի ծննդեան» («էին աշոյ...»), «Մեղեդի յարութեան», («Ես ձայն...»), «Մեղեդի յարութեան և խաչի», («Հաւուն հաւուն...»), «Տաղ արքայ յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ» («Աւետիս մեծ...»), «Նորին ի նոյն խորհուրդ» («Աչքն ծով...»), «Յարդոսակ նորին...», («Մեա Էս...»), «Տաղ վարդավառին», («Գոհար վարդ...») և «Տաղ արքայ Բաբաւիցն» («Գունդ սուր...»): Տողերը տողատված չեն և հրատարակված են որպէս արձակ բանաստեղծություն:

Վենետիկ, 1827 թ.— «Ճառք, գանձք և տաղք», 1-ին հատոր:

Հրատարակված է 12 բանաստեղծություն: Նախորդից բացի կա 4 նոր տաղ.— «Երգ զարմանալի...», «Յարութեան», «Գալստեան հոգւոյն» և «Նեղեցւոյ»:

Վենետիկ, 1840 թ.— «Մատենագրութիւնք»:

Այս ժողովածուն համեմատաբար լրիվ և ամբողջական է: Բացի վերոհիշյալ 12 տաղերից, ավելացած են 7 նոր բանաստեղծություններ.— «Ի յարութիւն Ղազարու» (2 տաղ), «Ի նոյն նորոյ...», «Անուն անեղին...», «Համբարձման», «էն է ինքն էին...» և «Յառաջ Բան...»:

ԱՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արարատի» 1874 թ. № 3-րդ համարում տպվել են 7 տաղեր, որոնցից 4-ը մեզ ծանոթ են— «Այլ տաղ զալստեան տեառն առ Ղազար, ի

¹ «Բարգմանվէպ», 1923 թ., № 6:

ձայն կենդանատուին մնացն, ի Գրիգոր Նարեկացոյ» (Ղազարի հարուստի տաղի մի փոփոխակը), «Այլ տաղ յարութեան ի Նարեկացոյ» («Անուն անդէլին...»), «Սեաւ եմ...» և «Էնէ ինքն էին...», իսկ երեքը— «Տաղ բառասնօրեայ գալստեան տեսն, ի Գրիգորէ Նարեկացոյ», «Ջայնն այն...» (Ղազարի հարուստի տաղերից մեկը) և «Այն փոփոխակ հօտին...» բոլորովին նոր տաղեր են:

Այս երեք տաղերից մեկը (Ղազարի հարուստի վերաբերյալ), մտտեղիտուկեան անգամ ավելի մեծ է Նարեկացու նույնանուն տաղից, վերագրվել է Նարեկացուն և ըստ խմբագրութեան հայտարարութեան, արտագրվել է հին ընտրի մի ձեռագրից: Նկատի ունենալով տաղի վիճակը՝ անհնար է Նարեկացուն վերագրել. ա) Նարեկացին Ղազարի հարուստի վերաբերյալ ունի 2 տաղեր, որոնք իրենց բովանդակութեամբ միմյանցից տարբեր են, իսկ այս տաղը նրանց սոսկական կրկնութեանն է, ավելի ընդարձակ ձևով. բ) Նարեկացին ավանդութեամբ վեր է ածել պոեզիայի, այս երգի մեջ շարագրանքը պարզ է, պարզունակ լեզվով, միջնդեռ Նարեկացու զուտ կրօնական տաղերի բովանդակութեամբ և լեզուն չափազանց խրթին են առանց բացատրութեանների. գ) Նարեկացին չունի այսպիսի բառեր ու բառաձևեր այդր, յադին, յամէր, դազարէ:

Այս բանաստեղծութեանը հորինվել է հետո, Նարեկացու տաղերի հիման վրա, որոնցից հորինողը վերցրել է մի-մի շարք բառեր ու ոճեր: Արտաբնի ալը նմանութեան, ինչպես և բովանդակութեան նույնութեան պատճառով հետագա մեր տաղարանների դրիչները, եթէ ինքը հրատարակիչը չի արել այդ, ձևագրել են Նարեկացուն: Ձեռագրերում ևս շատ կան այնպիսի տաղեր, որոնք մեծապես կրել են Նարեկացու բանաստեղծութեանների ազդեցությունը և հաճախ վերագրվել են նրան:

«Անահիտ»-ում (1907 թ., № 3—4—5) հրատարակված են Նարեկացու երկու բոլորովին նոր բանաստեղծութեաններ— «Տաղ եկեղեցոյ և տանարն սուրբ» («Ջօրէ ի վերուստ...») և «Հալիկ մի պայծառ...»:

Գ. Սրվանձտյանի «Մանանա»-ում (Կ. Պոլիս, 1876 թ.) տպվել են Նարեկացու արդեն մեզ հայտնի տաղերից երեքը— «Յրգ զարմանալի...», «Աչքն ծով...» և «Յարութեան»:

Ար. վարդ. Տեկանցի «Հայերգ»-ում (Քիֆլիս, 1883 թ.) հրատարակվել է «Սէր յառաւօտէ» տաղը, և վերագրվել է Մկրտիչ անունով մի երգչի:

ՁԵՌԱԳՐԵՐ

Քե՛՛ ձեռագրերում և թե՛՛ հրատարակութեաններում Նարեկացու տաղերի վերնագրերը տարբեր են միմյանցից: Նույն տաղը հայտնի է մի քանի անվամբ և անհնարին է դառնում հետքն անգամ գտնել Նարեկացու հորինած վերնագրերի: Ձեռագրերում վերնագրեր ունեն 17 բանաստեղծութեաններ: Տաղերը իրար հետ չփոթելու համար անունը վերցնում ենք նրանց առաջին տողերից: Մեկական վերնագիր ունեն չորս տող.— «Ջայն կենդա-

նատուն...», «Ի յարուրիմն Ղազարու», «Անուն անեղին...», «Յարութեան», «էինն էին ելին...», «Քառասնօրեայ գալստեան տեսան», «Զօրք ի վերուստ...», «Տաղ եկեղեցոյ ի տանարն սուրբ»:

Երկու վերնագիր ունեն շինգ տաղ.— «Սլբ յառուտակ...», «Մեղեղի նարեկեցի», «Մեղեղի յարութեան», «Սայլն այն իշանկ...», «Յարութեան», «Սուրբ Էջմիածնայ տաղ», «Երգ զարմանալի...», «Մեղեղի Աստուածածնի», «Առ անապական ծնունդ Քրիստոսի», «Երկինքն ի յերկիրս», «Եկեղեցոյ», «Առ հարսանեաց սուրբ եկեղեցի», «Յանկարծանհեշեաց...», «Գալստեան հոգւոյն», «Առ հարծոտան, գալուստին հոգւոյն սրբոյ»:

Երեք վերնագիր ունեն շորս տաղ, «Աշխն ծով ի ծով...», «Մեղեղի ծննդի», «Առ ծնունդն Քրիստոսի», «Նորին ի նոյն խորհուրդ», «Հատուն...», «Մեղեղի յարութեան», «Առ հրաշափառ սուրբ յարուրիմ Քրիստոսի», «Մեղեղի յարութեան և խաչի», «էին աշոյ...», «Մննդեան», «Մեղեղի ծննդեան», «Առ հրաշագարդ ծնունդ Քրիստոսի», «Գունդ սուրբ...», «Քառասնիցն», «Սրբոյ քառասնից», «Տաղ սրբոյ քառասնիցն»:

Չորս վերնագիր ունեն երկու տաղ.— «Սեա եմ...», «Տաղ ծննդեան», «Տաղ քաղցրիկ», «Տաղ սուրբ Աստուածածնայ», «Յորդորակ», «Գոհար վարդն...», «Տաղ վարդավառին», «Տաղ Գրիգօր Նարեկացայ», «Գոհար վարդն», «Առ գերազանց պայծառակերպութիւն, որ և անվանի վարդավառ»:

Հինգ վերնագիր ունեն երկու տաղ.— «Ես ձայն...», «Տաղ սուրբ յարութեան», «Մեղեղի յարութեան», «Առ սուրբ խաչն աստուածընկալ», «Տաղ վերացման խաչին», «Տաղ սրբոյ խաչին», «Աւետիս մեծ...», «Տաղ ծննդեան», «Տաղ սրբոյ յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ», Յայտնութեան», «Նորին նարեկացոյն», «Առ հրաշագարդ մարդեղութեան Քրիստոսի»:

Այս տաղերը իրենց ամբողջականութեամբ և լրիւ վիճակով շին հասել մեզ: Նույն երգը մի ձեռագրում լրիւ է, մի այլ ձեռագրում՝ թերի, կիսատ կամ հատվածաբար: Կան բանաստեղծություններ, որոնք ավելի շատ են տարածված տաղարաններում: Օրինակ՝ «Յարութեան» տաղը գտնվում է յոթ, իսկ «Տաղ քաղցրիկ»-ը տաս տաղարաններում:

Տաղերը, որքան մեզ հայտնի է, շին արժանացել թարգմանվելու բախտին, նրանցից միայն երկուսը՝ «Վարդավառին» և «Յարութեան»-ը Վ. Բրյուսովը թարգմանել է ռուսերեն, հրատարակված «Пoesия Армения»-ում:

Հայագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր մասնագետի հայտնի են այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն ծառանում են նրա առաջ, եթե փորձ է անում աշխարհաբար լեզվի վերածել նարեկացու զբարբրը, հատկապես մի քանի տաղերը, որոնք ոչ թե շին զիջում «Ողբերգութեան մատենի» որևէ խրթին հատվածին, այլ գերազանցում են իրենց մովթ, նույնիսկ գրեթե անվերծանելի ոճով:

Նարեկացու բոլոր տաղերը չէ, որ ունեն միատեսակ դժվարություն: Կան այնպիսիները, որոնք համեմատաբար մատչելի են, սակայն կան և

այնպիսիները, և մեծ մասը, ինչպես և մատչելի թվացող երգերի առանձին հատվածները, որոնք մեծ դժվարությամբ հարուցեցին մեր առաջ թարգմանական աշխատանքը կատարելիս: Մենք երբեմն ստիպված էինք լինում շեղվել քերականական որևէ կանոնից, նույնիսկ հենց բնագրից՝ նպատակ ունենալով միայն վերարտադրել տաղի բովանդակությունը այնպես, ինչպես մեզ թվում էր հասկանալի: Թարգմանություն դժվարությամբ առաջանում էր ոչ միայն այն պատճառով, որ ընդհանրապես դժվար են նարեկացու ոճի առանձնահատկությունները, այլև այն պատճառով, որ այդ տաղերը, կամ նրանց որոշ հատվածները, աղավաղվել են հետագա գրիչների կողմից և աղարտված ձևով էլ հասել են մեզ:

Նարեկացու տաղերի ժողովածուն կազմելիս հիմք ենք ընդունել 1840 թ. Վենետիկի հրատարակության բոլոր տաղերը (19 հատ), ավելացնելով չորս նոր տաղեր, երկուսը հրատարակված «Արարատ»-ում, մեկը «Անահիտ»-ում և մեկը՝ ձեռագրից՝ «Սէր յառաւօտէ» (№ 8188, 15-րդ դար):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- A = Գրիգոր Նարեկացի, «Նարեկ և տաղը», Վենետիկ, 1804 թ.:
 B = Գրիգոր Նարեկացի, «Ճառք, դանձք և տաղը», հատ. 1, Վենետիկ:
 C = Գրիգոր Նարեկացի, «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840 թ.:
 D = «Արարատ», 1874 թ., № 3:
 E = «Անահիտ», 1907 թ., № 3—4—5:
 F = Գ. Սրվանձտյան, «Մանանա», 1876 թ., Կ. Պոլիս:
 H = Ար. Տեկանց, «Հայերգ», 1883 թ., Թիֆլիս:

ՁԵՌԱԳՐԵՐ

- a = 3386 (17-րդ դար), Պետական Մատենադարան, Երևան:
 b = 3498 (17-րդ դար), » » »
 c = 3504 (17-րդ դար), » » »
 d = 3637 (17-րդ դար), » » »
 e = 4328 (18-րդ դար), » » »
 f = 5128 (17-րդ դար), » » »
 g = 6174 (19-րդ դար), » » »
 h = 6998 (18-րդ դար), » » »
 i = 7039 (17-րդ դար), » » »
 k = 7051 (18-րդ դար), » » »
 l = 7129 (17-րդ դար), » » »



Տարեր

1. ՄՆՆԴԵԱՆ

էին աջոյ աջոյ ձեռին,
աջոյն իւր աջ ընդ աջմէ հօր,
հօր ընդ աջմէ լուսոյն փաստաց:
Ի ծոց ծնողին ծագումն անուն,
յարբուսոյն ծագումն եկեալ ի սէր,
Կուսին ծնեալ ծոցոյն ծաղիկ:
Ծաղիկ ծոցոյ, ծոց հայրենի,
ամպոյ նման իջեալ յերկինից,
զսէր իւր ի մեզ քաղցրիկ ցօղեալ.
Սէր ի յամպոյ ամպ սիրաշարժ,
օդոյն ցօղեալ ի նոյն դեղման,
վայր իջուցեալ կաթս անձրևաց:
Ի սիրոյ սէր ծանուցեալ,
սիրաբողբոջ տարփամամբ լցեալ,
սիրով ընդ սէր միաբանեալ
Լուսինն ի լոյս ի լրումն եկեալ,
ճոխ ճեմելով՝ գիշերավարն
ըզկնի ճեմէր բարկ աստեղօք:
Առաւօտուն ցօղիկն իջեալ,
ի նոր Սիոն զծայրսն տուեալ,
քաղցր արևով արուսեկին:
Գարունարեւ, գարնանաշարժ
գեղգեղելով երփնազարդեալ,
նոր հարսանեաց միաբանեալ:
Եկանք նոր մեք զուարճացեալ,
վառ ի վառեալ ախպ ծալ ի ծալ
թփոյն տերև յօրինեսցուք:

1. ՄՆՆՒՅԱՆ

Կարող աջ էր նոր աջ ձեռք,
հոր աջից էր աջը նրա,
հոր աջ կողմից փառքի լույսի:
Ծնողի ծոցում ծաղում է նա՝
կույսից ծնվում ծոցի ծաղիկ,
հանց արևից սիրո համար:
Ծոցի ծաղիկը հայրական
ամպի նման իջնում երկնից,
յուր սերը մեզ ցողում քաղցրիկ:
Նման գեղմի՝ այդ սիրաշարժ
ամպից սերը ցողում է օդն,
ինչպես շիթերը անձրևի:
Սիրուց է սերը ճանաչվում,
սիրաբողբոջ տենչով լցվում,
սերը սիրով միաբանվում:
Ամբողջ փայլով լի լուսինը
պերճ ճեմում է, արուսյակը
ճեմում հետքից՝ վառ աստղերով:
Առավոտյան ցողն է իջնում,
արուսյակը այդն է բացում
քաղցր արևով նոր Սիրնի:
Գարունարևը օրերն ահա
գեղգեղում են վայելչացած,
կարձես լինի նոր հարսանիք:
Եկեք, մենք էլ զվարճանանք,
թփի փայլուն տերևներից
հյուսենք դալար. նուրբ պսակներ:

2. ՄԵՂԵԴԻ ՆԱՐԵԿՅՑԻ

Սէր յառաւօտէ, սէր յառաւօտէ
ճեմեալ իւր անձուկ (ծագմամբ),
ծագմանն արեւելք, ծագմանն արեւելք
անուն այն արուսեկին:
Միթէ այն ի վայր, միթէ այն ի վայր
իվայր տաւիղ տարածեալ,
կամ սիրոյ շրջան, կամ սիրոյ շրջան
առեալ աստեղք բոլորեալ:

2. ՄԵՂԵԴԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ

Արևելքից վեր, արևելքից վեր
ճեմում է բաղձալի ծագմամբ
սերն առաւոտից, սերն առաւոտից՝
արուսյակը այն շքեղ:
Եվ այն երկինքը և այն երկինքը ...
Նման է մեծ տավղի,
կամ սիրո շրջանի, սիրո շրջանի՝
աստղերով բոլորված:

3. ՄԵՂԵԳԻ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Երգ զարմանալի, երգ շարժվար ժենի
տեղի եղեր բարեկերտին,
խորհուրդ խորհուրդ համերամ
զարգ երամից զարգ:

Նոճ ի նոճ յեռից

սափոր եղեգնաշէն տնկոյն,

մասն օրինօրէն նշդարենի ուսն:

Յօնիցն նրբենից ի մի կից կամար,

նէճեմ թէ նէճեմ մէջօրէի ժամն:

3. ՄԵՂԵԳԻ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Հիանալի ու թրթռուն
երգ է հյուսվել կույսի մասին,
որպես մի վեհ խորհուրդ մարդկանց:
Նոճի է նա բողբոջուն,
սավիտր եղեգնյա,
մատներն ինչպես յուզ դալարուն:
Նուրբ հոնքերը կից կամարներ,
աչքերն փռո են որպես աստղեր
ու տաք ինչպես արևը բարկ:

4. ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԻ

Աչքն ծով ի ծով ծիծաղախիս
ծաւալանայր յառաւօտուն,
երկու փայլակնաձև արեգական նման,
շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:

Յայտէն նոնենի սարգիտտունկ
գեղաշխտակ ծայրից ծաղկանց,
որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն
կարկաջայր սաթրերունի սէր:

Ձեռացն եզիշոյ կամարակապ կապէր,
ատիճաղ պատիճաղ, սողի խտղի երգով:

Հիւսէր զելևելսն ընդ միմեանս,
հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր:
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:

Ի ծամին խեղեփին հազրէ զի նոյն սէր
հոգիազգեստեալ գեղն ի գինւոյն գոյն:

Վարսիցն երամից զարդ, երամից զարդ,
որորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք:

Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք:

Խնկեալ ի կնդրիէ բուրվառ հրով աստուածայնով լցեալ,
ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:

Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր,
ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ,
ոսկեշողէր գոյնն:

4. ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ

Աչքերը ծով ծավալվել են

ծիծաղախիտ ծովի վրա առավոտյան՝
երկու փայլահնածե արեգակի նման,
ինչպես շողն է իջնում լույս առավոտից:

Նոնենի այտերն նման են ծաղիկներին
գեղաշիտակ սարգի տունկի,
որի ցողունով գեպի սիրտը ծաղկի
կարկաչում է սերը ծաղկուն:

Ողորկ թևերը կապում էր կամարակապ,
ներդաշնակ, գեղգեղուն, հեշտալի երգով:

Միմյանց էր հյուսում ելևէջները,
հանդարտիկ շարժվում էր, թիկնեթեկին ճեմում:

Բերանն երկթերթի, վարդն էր շրթներից կաթում,
լեղուն նման էր քաղցրանվազ տավղի:

Հազրեով զարդարուն ծամի հյուսքերի
գեղը կենսատու ունի գինու գուն:

Գեղեցիկ վարսերը, գեղեցիկ վարսերը
եռահյուս բոլորել են այտերը:

Ծոցն լուսավալը, կարմիր վարդով լցված,
գաստակներն՝ ծիրանի մանուշակի փնջեր:

Խնկում էր կնդրուկից բուրվառն հրով աստվածային լցված,
քաղցրանվազ ձայն էր նրանից հնչում:

Գեղեցիկ, կապույտ, ծիրանի, բեհեզա
և որդան-կարմիր ոսկեշող գուններով
փայլուն պատմու ճանով զարդարված էր:

Պօտին արծաթափայլ ոսկէտառն,
կամարակազ յականց, յականց շախիւզոյ,
մանրամասին յօրինուածով սլճնեալ:
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղտով,
տախցն ի դնալ շողն ի կաթել առնոյլ:
Այն թագաւորին, այն նորածին վերկշին,
գրեզ սլտակողին փառք յաւիտեանս. ամէն:

Գոտին արձաթագայլը, սակեատուէն,
շափեյտեղա ակներով, ակներով կամար
մանրամասն հարինվածով պճնված էր:
Երբ նա շարժվում էր մարգարտափայլ գեղով.
սաքերից գնալիս շող էր կաթկթում:
Այն թագաւորին, այն նորածին փրկչին,
քեզ զարգարողին փառք հովիտյանս. ամեն:

5. ՏԱՂ ՔԱՂՅՐԻԿ

Սեաւ եմ, գեղեցիկ,
դուստր Եւայի Երուսաղէմ,
անա նա հարսն իմ ցանկալի,
սիրով կապեալ ընդ փեսային:
Նման է եղբորորդին իմ
այծեմանց որթուց եղանց.
անա նա ձայն եղբորորդոյն
խանդաղատեալ սիրով լցեալ:
Ե՛կ, իմ սիրելի, եկ մերձաւոր
հարսն ի մայրեաց Լիբանանէ.
անա նա խայտար, խնձորով զիս պատեցէք
տարեալ մուծէք ի տուն գինւոյ:
Աչք իւր աղաւնոյ,
թե՛ լար կարմիր՝ մանեակ սսկւոյ.
անա նա լեառն կնդրիկի,
հոտ նարգոսի և զմուսսի:
Գեղ էր գովելի,
մանուկ անհաս անժամանակ.
անա նա լեառն գիտարան,
շուշան հովտաց, ծաղիկ դաշտաց:
Դասք մարգարէիցն
երգեն ի յայն բլրին վերայ.
անա նա լեառն շուշանի,
հոտն իւր վարդի կինամոռնի:
Որդիք նոր Սիովնի
ելէ՛ք, տեսէ՛ք ի Բեթղահէմ.

5. ՏԱՂ ՔԱՂՅՐԻԿ

Սև եմ, գեղեցիկ,
ես Եվայի դուստր Երուսաղեմ.
ահա նա հարսն իմ ցանկալի,
սիրով կապված փեսայի հետ:
Նման է եզրորորդին իմ
այծյամի եղնիկ հորթին,
ահա ձայնն իմ եզրորորդու՝
խանդաղատված սիրով լցված:
Ե՛կ, իմ սիրելի, եկ, մերձավոր
հարսն մայրուց Լիբանանի.
նա խայտում է, խնձորով ինձ պատեցեք,
տարեք, մացրեք ինձ տուն գինու:

Աչք յուր աղավնու,
թեին կարմիր մանյակ ոսկի.
ահա նա լեռը կնդրուկի,
հոտ նարդոսի և զմուռսի:

Վեզ էր գովելի,
մանուկ անհաս ու դեռատի.
ահա նա լեռը դիտարան,
դաշտի ծաղիկ, հովտի շուշան:

Խումբն մարգարեների
երգում են այն բլրի վրա.
ահա նա լեռը շուշանի,
հոտն յուր վարդի, կինամոնի:

Որդիք նոր Սիոնի,
ելեք, նայեք դեպ Բեթղահեմ,

անա ելէք գուք ի յայրին,
երկիր պագէք թագաւորին:
Ընդ հովիտն երգեցէք,
և ընդ մոզուցն երկրպագէք.
անա գոսկին թագաւորին,
զխունկն Աստուծոյ հօր մ'իայնոյ
Որում փառք և գոհութիւն
և հանաւազ փառատրութիւն.
յաւիտեանս յաւիտենից
Քրիստոս օրհնեալ ի համայնից:

հիմա ելեք դուք դուրս այրից,
երկրպագեք թագավորին:
Հովիվների հետ երգեցեք,
և մոզերի՝ երկրպագեք.
անա ոսկին թագավորի՝
խունկը մեր հայր մեկ աստծու,
Որին փառք և գոհություն
և հանապազ փառատրություն.
հովիտյանս հովիտենից
Քրիստոս օրհնված է բոլորից:

6. ՄԵՂԵԴԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հաւուսն հաւուսն արթնացեալ,
գիտելով զհեթանոսս՝
Ձայնէր ձայնէր տատրակին՝
սիրասնունդ սիրելոյն:
Դարձիր, դարձիր սոմնացիդ
ընդ վիմին հովանեաւ:
Ե՛կ, հարսնուհիդ ի լերանց ընծուց
ի գաշտաց այծեմանց:
Եկեալ եկեալ տաւաղին
յեփրայիմ Բեթելին:
Եկեալ եկեալ յասպարէզս
ի յայգին Կեզրոնի:
Հնձան կոխելով
գոյն ի գոյն բոսորի:
Արկեալ փայտ ի հաց,
ըզգենլիս իւր զենեալ:
Խառնել ի գինի
զխառնելիս անուշից:
Բաժակ մատուցաւ
ի հրաւէր հարսանեաց,
Հրաւէր հարսանեաց,
եկայք նոր ժողովուրդք,
Կերայք յիմ հացէս
և արբէք զիմ գինիս:
Ձի կեցջիք յանսպառ,
յանվախձան յաւիտեանս:

6. ՄԵՂԵԳԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Աքաղաղը արթնացած
հեթանոսներին գիտելով՝
Ձայն էր տալիս տատրակին՝
սիրասնունդ սիրելվուն:
Դարձիր, դարձիր սոփնացիդ
գեպի վեժը հով անոդ:
Ե՛կ, հարսնուհիդ ինձերից լեռների,
այծեֆներից գաշտերի:
Ու գալիս են տավաղում
Եփրաթիմում, Բեթելում:
Դուրս են գալիսով ասարեզ
այգու մեջ Կեդրոնի:
Հնձան են կոխում
կարմրագույն ու բոսոր:
Հաց է մատուցում,
իր դոհերն է զոհում:
Խառնում գինու հետ
քաղցրահամ խառնելիք:
Բաժակ մատուցում
ի հրավեր հարսանքի:
Հրավեր հարսանքի,
եկեք նոր ժողովուրդ:
Կերեք իմ հացես
և արբեք իմ գինով,
Որ ապրեք անսպառ,
անվախճան, հավիտյան:

7. ՎԱՐԳԱՎԱՌԻՆ

Գոհար վարդն վառ առեալ
 | ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
 ձաւալէր ծաղիկ ծովային:
Ի համտարած ծովէն
 պղպղէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
 շողշողէր պտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն
 սնանէր խոսն տերևով,
Տերևն տաւիգ տուողին
 զոր երգէր Գաւթ հրաշալին:
Ի փունջ խոսներամ վարդից
 գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան,
Այդ սօս ու տօսախ ծառերգ
 վարդագոյն ոստա արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արօսպ
 զարդ առեալ վարդն շուշանին,
Շուշանն շողէր հովտին,
 շողշողէր դէմ արեգակրանն,
Այն հիւսիսային հովէն
 հով հարեալ գոհար շուշանին,
Յայն հարաւային լեռնէն
 քաղցր օդով ցօղէր շուշանին:
Շուշանն շաղով լցեալ,
 շող-շաղով և շար մարգարտով:

7. ՎԱՐԳԱՎԱՌԻՆ

Գոհար վարդն էր քոզ առել
արեգակի վե՛ն շողերից:
Վերն շողերի վրա
ծովային ծաղիկն էր ծաղալվում:
Այդ համաատարած ծովից
փայլում էր գույնը այն ծաղկի,
Գույնով վայելուչ ծաղկի
պտտոյն էր ճյուղին շողշողում:
Հասուն սակեգույն պտուղն
ոնվում էր խուռն սաղարթով.
Սաղարթ՝ տավղի հման,
որ երգում էր Գավիթ հրաշալին:
Վարդի խուռներամ վնջից
գույնզգույն ծաղկունք ծաղկեցին:
Այդ սոս և շիմշառ ծառերդ
վարդագույն սասեր արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արտոզ
վարդով են շուշան գարգարվում.
Շուշանն շողում էր հովտում,
շողշողում դեմն արեգակի,
Այն հյուսիսային հովից
շուշանն էր գոհար հովհարվում.
Այն հարավային սարից
քաղցր օդն էր ցոլում շուշանին:
Լի է շուշանը շաղով,
շող-շաղով և շար մարգարտով:

Ծաղկունքդ ամէն շաղ առին,
շաղն յամպէն, ամպն յարեգակնէն.
Աստեղքդ ամէն շուրջ առին,
դէմ լուսնին գունդ-գունդ բոլորին:
Գունդ-գունդ խաչաձև գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ:
Փառք հօր և սրբւոյն յաւէտ,
սուրբ հոգւոյն այժմ և յաւիտեանս:

Ծաղկունքդ բոլոր շաղ առան՝
 շաղն՝ ամպից, ամպն՝ արեգակից.
Աստղերդ բոլոր շուրջ առան,
 դեմ լուսնին գունդ-գունդ բոլորան:
Գունդ-գունդ՝ խաչածե գնդակ,
 շուրջանակ երկնից հորինված:
Փառք հոր և որդուն հավետ,
 սուրբ հոգուն այժմ և հավիտյան:

8. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Մայլն այն իջանէր ի լեռնէն ի Մատեաց,
և ի վերայ նորա աթոռք են կարդեալ,
և ի վերայ նորա գանոյք սփեղէնք,
և ի վերայ նորա բեհեզք ծիրանիք,
և ի վերայ նորա որդի արքայի,
և յաջմէ նորա վեցի՞նեան սերովբէքն,
յանեկէ նորա բազմաշեալ քերովբէքն,
առաջի նորա մանկունք գեղեցիկ,
ի գիրկն նոցա խաչն տէրունական,
ի ձեռին նոցա սաղմոսարան և քնար,
արք երգէին և ասէին՝

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Աձեալ են աձեալ զասյլիկն,

աձեալ են կայուցեալ.

և անա շշարժէր սայլիկն այն,

և անա շխաղայր անիւն այն:

Եթէ հարիւր բարդ խալըձան, վեց կըրնկան,

մին մանուշակ խրձողիղեալ.

ի Մատեաց յաջ կողմանէն

սայլիկն աձեալ են կայուցեալ,

և անա շշարժէր սայլիկն այն,

և անա շխաղայր անիւն այն:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր սսկի,

և սամաիքն ապրիշիմի.

փոկեր շարած շարանման հոյլ մարդաբխ.

8. ՀԱՐՈՒԹՅԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր հարսւթյան:
Սայլն այն իջնում էր սարից Մասիսի,
և նրա վրա աթոռներ շարված,
և նրա վրա դահույճ սակեղեն,
և նրա վրա բնեց ծիրանի,
և նրա վրա սրգին արքայի,
և աջից նրա վեցթեյան սերովբեք,
ձախ կողմից նրա բազմաչաք քերովբեք,
առջևում նրա մանկունք գեղեցիկ,
գրկերում նրանց խաչն տերունական,
ձեռներին նրանց սազմոս և քնար,
երգում էին նրանք և լիսաարանում՝
Փառք Քրիստոսի ամենազօր հարսւթյան:
Բերեւ էն, բերեւ սայլիկը,
բերեւ են կանգնեցրել:
և ահա չէր շարժվում սայլիկն այն,
և ահա չէր դառնում անխփն այն:
Սայլին հարյուր բարդ խալըձան, վեց կորնկան,
մին մանուշակ խրձողիզված,
Մասիա սարի աջակողմից
սայլիկն բերեւ են կանգնեցրել:
և ահա չէր շարժվում սայլիկն այն,
և ահա չէր դառնում անխփն այն:
Սայլի սամիքն են արծաթե, լուծն էր սակի,
և սամոտիքն ապրշուսի,
փոկեր՝ շարված շարանման հույլ մարգարտով:

և անա շարժէր սայլիկն այն,

և անա չխաղայր անիւն այն:

Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,

ուռամիջակ, հաստաքագուկ,

լայնաթիկունք, խարտիշագեղ, անեղագոչ,

նա ճայն ածէր եզն ամոլին՝

կանչիւն առնէր աթոռակին:

Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,

ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,

եղջիւրն ամէն խաչանման,

և մազն ամէն հոյլ մարգարիտ.

և անա շարժէր սայլիկն այն,

և անա խաղայր անիւն այն:

Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին,

նա ճայն ածէր եզն ամոլին:

Սայլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի.

Եւ այն հարիւր բարդ խորձանն՝

այն նահապետքն են՝ մարգարէք.

Եւ այն վեց բարդ կորնկանն՝

վեցօրեայ գործքն Աստուծոյ.

Եւ այն մին մանուշակ՝

միաւորեալ երրորդութիւնն:

Եւ այն մանուկ խարտիշագեղն՝

այն Յովնաննէսն էր Մկրտիչն.

Եւ այն չորս կուրծն սայլին՝

աւետարանն էր Քրիստոսին:

Ի գիւ գայր ի գիւ, սայլիկն ի գիւ

ի Մասեաց յաջ կողմանէն՝

սայլիկն ի գիւ գայր ի գիւ

և ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ,

և որդիք նօր Սիովնի նոր երգէին

գայս ասելով.

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

և ահա չէր շարժվում սայլիկն այն,
 և ահա չէր դառնում անիվն այն:
 Ճորտն այն դալար էր և ճարպիկ,
 ճկուն էր նա, հաստարագուկ,
 խարտիշագեղ, անեղագոչ, լայնաթիկունք,
 նա ձայնում էր ամոլ եզան
 և գոչում էր աթոռակիրն:

Եթե եզներն են սաթ ու սպիրտակ,
 ծաղկանիշով, արագաքայլ, արագավազ,
 եղջյուրները խաչանման,
 և մազերը հույլ մարգարիտ.
 և ահա շարժվում էր սայլիկն այն,
 և ահա դառնում էր անիվն այն:

Առեղից է շարժումն առնում կուրծք սայլի,
 նա ձայնում էր ամոլ եզան:

Սայլը Սինայի երկրորդ օրենքն էր Մովսեսի,
 Եվ այն հարյուր բարդ խորձանն՝
 նահապետներ, մարգարեներ,
 Եվ այն վեց բարդ կորնկանն՝
 վեցօրյա գործերն աստծու.

Եվ այն մեկը մանուշակի՝
 միավորյալ երրորդություն:

Եվ այն մանուկ խարտիշագեղն՝
 այն Հովհաննեսն էր Մկրտիչն.

Եվ այն չորս կուրծքերը սայլին՝
 ավետարանն էր Քրիստոսի:

Գիլ-գիլ գալիս էր, սայլիկն գիլ-գիլ,
 Մասիս սարի աջակողմից
 սայլիկն գիլ գալիս էր գիլ
 և ճոնչալով գալիս մտնում Երուսաղեմ,
 և որդիք նոր Սիոնի երգում էին այս ասելով.
 Փառք Քրիստոսի ամենազոր հարության:

9. ՔԱՌԱՍՆՈՐՅԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ

Էինն էին ելին, մինն ի յերկուց
մի երկակի հանգոյն էից զըւարճ միշտ:
Միշտ անբաւ այսր հրաշունակ բան,
բան խորհրդաբեր եւթներգին աղի չափ:
Չափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի տարրայնոյ,
տարփ տարփ ի վեր արփային,
տարփ տարփ ի վեր նուսխայօրէն ճեմ:
Ճեմ կուսինածոց ծաղիկ, վարդ փթթեալ ի գիրկս մօր.
հօր սահման և կնիք կամի ասէր ժամ:
Ժամ եհաս, Պտղէմէոս հանդիսաւոր խումբ,
խումբ բարունէից եւթանասնից ուամ:
Ռամ մատենօրեայ երագագրի տառ,
տառ գծագրենի մինն ընդ երրագրեալ,
անձ կոյս յղասցի, երբ լինիցի այդ:
Այդ իսկ են զարմանք, զարմանալեաց բան,
մինչև լինիցի, երբ տեսանի հրաշ:
Հրաշ հրաման առեալ, մի տեսանել զման,
մինչև լինիցի քեզ կատարումն գրոյդ:
Գրով հոգիապատում զգուշակի բան,
բան խորհրդաբեր, աւետարեր օր:
Օր աուր բղխեալ, ժամանեցոց երբ,
երբ նոր երանեալ, երբին սկիզբն առեալ,
հրաման առաքի առ ծերունին զգօն:
Չգօն շնորհաւորի, անձառ շնորհի մնայ,
արի եկ ի տաճարն, անա հասեալ կամ,
զգիրկսդ ինձ յօրինե՛ս քրոյբէական կառք:

9. ՏԻՐՈՋ ՔԱՌԱՍՆՈՐՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ

Աստվածն աստծուց է ծագում, մեկը՝ մյուսից,
մեկ երկակի են նման պայծառ մի էակի միշտ:
Միշտ անհուն է նրա միտքն հրաշունակ,
միտքն խոկումն բերող յոթներդ լարի չափ:
Մի սասպարեզի չափ տարրեղեն տեղում իջած
տենչանքով դեպի արևը,
դեպի արևը գեղեցիկ ճեմում:
Ճեմում ծաղիկը կույսի ծոցի, փթթած վարդ մոր գրկում
կամենում էր ասել հոր վճռի ժամն է:
Ժամն հասավ, Պտղեմեյան հռչակավոր խումբն,
խումբն ռաբբիների յոթանասնից խումբն,
Խումբն մատենագիրը գրում է արագ
տառերն գծագրելով մեկը մյուսին.
կույսը պիտ հղանա, երբ որ լինի այդ:
Եվ այդ զարմանք է, զարմանալի խորհուրդ,
մինչև որ լինի, երբ տեսնվի հրաշք:
Հրաշք պատգամն առած, չես տեսնի դու մահ,
մինչև որ լինի ավարտումն գրքիդ:
Գիրք հագեպարար, խորհուրդ գուշակոյ,
խորհուրդ խորհրդաբեր, ավետաբեր օր:
Օրն օրից բխելով՝ ժամանեցրու այն ժամը,
երբ նոր երանյալ մշտնջենականն է սկիզբ առնում,
պատգամ է ուղարկվում ձերունուն զգոն,
Եվ շնորհավորվում՝ բարձր շնորհում մնա.
շուտ արի տաճար, ահա հասել եմ,
գիրկդ ինձ արտ հրեշտակային կառք:

Կառք համբարձայնոյ վերնակառոյց բազուկ,
փոյթ ի փոյթ ճեպեաց. զոյդս աղաւնեաց ընծայ:
Ընծայարերիմ ես հօր, որ զիս ընծայեցոյց,
վաղ ի վաղ զարթիր արագ:

Արագ յարուցեալ ձերունւոյն հիւրասլաց ոտիւք,
եկեալ մտանէր ի տաճարն, ի գիրկ իւր ընկալեալ
զՅիսուս:

Յիսուս տղայ մանուկ, որդի անծերունի հօր,
հօր հաշտ կամարար, մատամբս աղաչեմ,
չըթամբքս պաղատիմ, զիս արձակեան, Տէր:

Տէր իմ, տէր Յիսուս, զոր կապեցերս, այժմ արձակեան,
նոյն անա տեսի զհեթանոսաց զլոյսդ:

Լոյսն ի լուսոյ, գիր թողութեան մեզ ծագեցար,
որ ընդ ձերունւոյն հայցմամբ թնգ մեզ, Տէր,
զգիր պարտեաց,
հայցմամբ ծնողի քո, որ լրմամբ եղեր մեզ
թողութեան ամպ:

Ամպ յամարայնոյ ցօղ ձիւնանման մեզ ծագեցար,
տղայ քառասնօրեայ յայտնեալ մանուկ դու:

Դու ի սրբութեան սրբարան սուրբ,
սուրբ և սրբութեան սիրող, սրբեան զմեզ ի մեղաց,
կենդանարար քո գալստեամբդ,
ընդ մեզ Աստուած յայտնեալ, փառք Իսրայէլի
ժողովրդեան քում:

Բազուկները վեր, դեպ վեր կարկառած
շտապեց նա գույգ աղամինի ընծա բերած:

Ընծա բերեմ ես հորն, որ ինձ ընծա տվեց.

շուա և շուա վարթիլը արագ:

Արագ վեր կացած ձերունին արագավազ ոտքերով
գալիս մտնում է տաճարը, իր գիրկն ընդունում
Հիսուսին:

Հիսուս՝ մանուկ տղա, որդի չձերացած հոր,
հոր գոհ հնազանդ, ձեռքերով աղաչում եմ,
շուրթով պաղատում, ինձ արձակիր, տեր:

Տեր իմ, տեր Հիսուս, որ կապել էիր, այժմ արձակիր,
ահա տեսա քո՝ հեթանոսների վրա ծագած լույսը:

Լույսը լույսից, որպես մի գիրք ազատություն մեզ
ծագեցիր,
ձերունու հետ աղերսում ենք, թողություն տուր մեզ,
տեր, մեր մեղքերի պարտքից՝
քո ծնողական գթով, որ լրիվ եղար մեզ
թողություն ամպ:

Ամպ՝ ամրան շոգին որպես ձյունանման ցող մեզ
ծագեցիր,

տղա քառասնորյա՝ հայտնված դու մանուկ:

Դու սրբություն մեջ սրբություն սուրբ,
սուրբ և սրբության սիրող, մաքրիլ մեզ մեղքերից
քո կենդանարար գալստով,

մեզ աստված է հայտնվել, փառք Իսրայելի
ժողովրդին քո:

10. ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ

Յանկարծանչեաց հայրաշարժ բղխումն
հրահոսավտակ, բոցաշաւիզ եռանդն,
որոյ զբանդն ի յերկնից հողմանչեաց
բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուաց:
Ի ձայն բիւրակերպ օգինատիպ լրումն
աւետաքարոզ տրտմականաց դասուց
Պետրոսեան երամ հրաւիրողակ բարեաց:
Հրով մաքրողին վեր առաքեմք
իննարար երգ ի նա մէտ.
Էւթնազի շնորհաց հողւոյն սրբոյ՝
հոգի հօր, ելումն նոյնատիպ դիմաց:
Հոգի Աստուծոյ, հոգի զօրութեան,
հոգի հեզութեան, հոգի գիտութեան,
խմաստութեան, հոգի խորհրդոյ և հանճարոյ:
Մի իմոյ և զիս մի գատապարտեր
զքո՞ ձեռին շինեալ տաճարս.
յիս օթեանեան, քո կամելզ գործ է կատարեալ:
Կամեցող բարեաց, բարեգործեան յիս ի բազմամեղս.
Երգել երգենից պատիւ միշտ էականիդ
կամաւ քո և զիս վերանորոգեան ի փառս:

10. ՀՈԳՈՒ ԳԱԼՍՅԱՆ

Հանկարծահնչեց բխումը հորից,

որպես հրահոսավտակ, բոցաշավիղ վառումն,
որի դռնից երկնային, հողմահնչեց
բոցը բոցատեսք միահյուսված լեզուների:

Ուժգնահունչ հոգին ձայնով բյուրակերպ
ավետաքարոզ է Պետրոսյան խմբին,
բարիքի հրավիրող տրտում դասերին:

Հրով մաքրողին վեր առաքենք երգ,
ինչպես հրեշտակների դասերը ինն՝ հոժար սիրով,
յոթնալար քնարով փառարանենք շնորհները
սուրբ հոգու,

հոգի հոր՝ ելած նույնատեսք դեմքից:

Հոգի աստծու, հոգի զորության,

հոգի հեղուկյան, հոգի գիտության,
իմաստության, հոգի մտքի և հանձարի:

Ինձ, տեր, քո ձեռքով շինված տաճարին՝

մի դատապարտիր, ինձ օթեանիբ,
քո կամենալը գործ է կատարյալ:

Բարիք կամեցող, բարեգործիր ինձ, բազմամեղիս,
պատիվ է միշտ երգեր երգել աստվածությանդ,
կամքով քո և՛ ինձ վերանորոգիր փառքում:

11. ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

1

Աւետիս մեծ խորհրդոյ,
խորհուրդ ծածկեալ մեղ յայտնեցաւ:
Աւետիս, լոյս հօր ծագեալ
ի ծոցածին յէութենէ.
Աւետիս, յայտնեալ Աստուած
ի հողեղէն գոյացութիւնս:
Աւետիս, առաքեցաւ
հրեշտակապետն Գարրիէլ,
Աւետիս տայր սրբունւոյն,
դստեր Դաւթի թագաւորին.
Աւետիս քեզ, տիրամայր,
բերկրեալդ ուրախ լեր, տէր ընդ քեզ.
Աւետիս քեզ, տիրամայր,
սրովբէանման քրովբէաթոռ
հուպ երբակին լոյս գերազանց,
լուսոյն արփի վեհինաճեմ.
եռիցն ընթաց բիւրուցն իջեալ,
շողշողենի վողվողենէջ,
մանրահեղեղ զազանի շաւիղ
անձանօթի ճանապարհին:
Աւետիս քեզ, տիրամայր,
կոյս Մարիամ, տաճար բանին:
Աւետիս տուր Աղամայ,
այսօր լուծան անէծք մեղացն.

11. ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

1

- Ալեախա մեծ խորհրդի,
դադանի խորհուրդն մեզ հայտնակց:*
- Ալեախա, հօր լույսն ծագեց
խակ ծոցածին էությունից:*
- Ալեախա, հայտնվեց աստված
մեջն հոգեղեն էակներս:*
- Ալեախա, որ ուղարկվեց
հրեշտակապետն Գաբրիել,*
- Ալեախա տուր սրբուհուն՝
դստեր Գավիթ թագավորի:*
- Ալեախա քեզ, տիրամայր,
բերկրյալ եղիր, տերը քեզ հետ:*
- Ալեախա քեզ, տիրամայր,
սրովբեանման, քրտովբեանման,
մերձ գերագանց լույս եռյակին,
լույսի արվի դու փառավոր,
որ Քրիստոսը, աստված որդին
իջավ ներքե բյուր մարդկանց մօտ
որպես լույսի շող-շամանգաղ՝
խարխափողի ճանապարհին:*
- Ալեախա քեզ, տիրամայր,
կույս Մարիամ, տաճար մտքի:*
- Ալեախա տուր Ազամին,
լուծվեցին անեծքն մեզքերի:*

Աւետիս նահապետացն,
 անա տեսին ում ցանկային:
 Աւետիս մարգարէիցն,
 այսօր եղև լրումն օրինացն:
 Աւետիս քեզ, Բեթղահէմ:
 երկիրդ Յուդայ, տունդ Եփրաթայ:
 Աւետիս ծառոց ծաղկանց՝
 բողբոջախիտ, խիտասաղարթ,
 դոյն գեղեցիկ պտղինաւէտ,
 ակնհաճոյ համ քաղցրունակ,
 հոտ բուրազուարթ, փունջ խուռներամ
 ծայրից վարդից փթթինազարդ,
 թերթ տարածեալ ոսկեճաճանչ,
 տերևախիտ կանաչացեալ:
 Աւետիս, երկրպագէր
 մեծ Կարապետն Յովհաննէս,
 Աւետիս, օրհնաբանէր
 Եղիսարէթ մայրն Յովհաննու,
 Աւետիս տայր Յովհաննէս
 յորդ աղբերաց, հոյլ վտակաց,
 ջուր մանուածոյ ծիծաղ ծաւալ,
 կարկաչահոս, ուղխինահոս,
 ծայթինասէր մանուածաւալ,
 շրջանապտոյտ մանր աւազին,
 հոլով խորոց մէտ զուգին,
 վայր վեր անէջ, վեր վայր ի վեր՝
 փութման ի ջուրսն Յորդանանու:
 Աւետիս քեզ, Յորդանան,
 Քրիստոս ի քեզ դայ մկրտիլ:
 Աւետիս քեզ, Կարապետ,
 ձայն բարբառոյ յանապատէ:
 Աւետիս ինձ, Յովհաննու՝
 ձեռն իմ ըղճէրըն մկրտէ:
 Աւետիս հրաւիրողիս
 զհարսըն մաքուր սուրբ փեսային:

Ավետիս նահապետներին,
 տնա տեսան սւմ ցանկացան,
 Ավետիս մարգարէներին,
 այսօր եղավ լրումն օրենքի:

Ավետիս՝ քեզ, Բեթղզահ՛ւմ՝
 երկիր Հուգայի, տուն Եփրաթի:

Ավետիս ծագիլներին՝
 բողբոջագարգ, սաղարթախիտ,
 գեղեցկագույն այն ծառերի,
 որոնք լի են ակնահաճո
 պտուղներով քաղցրունակ համ,
 բուրազվարթ խուսներամ փունջ
 զարդով փթթած այն վարդերին,
 որոնց թերթերն ոսկեճաճանջ
 տարածվել են կանաչի մեջ:

Ավետիս, երկրպագեր
 մեծ Կարապետն Հովհաննէս,

Ավետիս, օրհնաբաներ
 Եղիսաբեթ՝ մայրն Հովհաննու:

Ավետիս տար Հովհաննէս
 աղբյուրներին, վտակներին
 և ծավալվող ծիծղուն ջրին՝
 կարկաչահոս որպէս հեղեղ
 ալիքներով իր ծավալուն,
 խսկ հորձանքի մանր ավազը
 խորքն է ջրի պէս-պէս զուգում,
 և ջրերը վեր վայր ու վեր
 շտապում են դեպ Հորդանան:

Ավետիս քեզ, Հորդանան՝
 Քրիստոս քո մեջն է մկրտում:

Ավետիս քեզ, Կարապետ,
 ձայն է լսվում անապատից:

Ավետիս ինձ, Հովհանին՝
 իմ ձեռքն աիրոջն է մկրտում:

Ավետիս ինձ՝ որ հարսն մաքուր
 կոչում են սուրբ փեսայի մօտ:

Աւետեաց եմ կոչնատէրս՝

մի հրաժարիք ի հարսանեացս:

Աւետիա Յորդանանու

Ահերմոնի և Սանիրայ,

լերինաթինդ խոր վէմ ի վեր

ծրփին ի նոյն շտապ յորձանից,

հրակոծ լերանց անձկին ի տապ

բոցն ի ծաւալ ծով խոր հերձաւ,

ճապաղ ճեպով դարձ նոյն ի դարձ,

խաղայր փութով ի տեսաներ:

Աւետիա տիեզերաց,

այսօր հնչեաց ձայն ի բարձանց.

Աւետիա որդւոց մարդկան,

այսօր որդին գայ մկրտիլ.

Աւետիա հողեղինաց,

տեսին զհոգին աղաւակերպ.

Աւետիս, յայտնեալ այսօր

խորհուրդ սրբոյ երբօրդութեան.

Աւետիս միշտ երգեսցուք՝

Քրիստոս օրհնեալ է յաւիտեան:

2

Էն էին անէին եզանի եղակ եղելի՝

անեղիցն աներբից յաւիտեանս,

Անհաս իմանի անկէտ այժմուս հասու,

ծոցածագենի ծագումն ծիր մշտածաւալ անփոխ:

Մինն յէից զարմից յերազգայից,

համագոյ շաւիղ ոտիցընթաց:

Ես էին նման աննմանին իմոյ զիմն առեալ

առից պատճառ բերեալ վերամբարձ երկնից օգոց,

Մատինայօրին պատկեր ի նոյն տիպ զարդարեալ

վեհ երազընթաց շաւիղ կամ ելինագոյ,

Ավետիքի կոչողն եմ ես՝
 մի հրաժարվեք իմ հարսանքից:
 Ավետիս Ահերմոնի,
 Սանիրայի, Հորգանանին,
 որի ջրերն անդունդն ի վեր
 հորձանքներով վեր ծփալով՝
 թնդացնում են լեռներն ամբողջ.
 Հորգանանի ջրերը այդ
 դառնում են բոց, երբ հրակոծ
 լերանց միջով անցնում են ծով
 և ընթացքով հորձանք-հորձանք
 շտապում են նրան տեսներ:
 Ավետիս տիեզերքին,
 այսօր հնչեց ձայնը վերից.
 Ավետիս մարդկանց ցեղին,
 այսօր որդին է մկրտվում.
 Ավետիս մեզ հողածին՝
 տեսանք հոգին աղավնակերպ.
 Ավետիս, հայտնի դարձավ
 խորհուրդը սուրբ երրորդության.
 Ավետիս միշտ պիտի երգենք՝
 Քրիստոս օրհնյալ է հավիտյան:

2

Աստվածն ինքն ինքնաստեղծ է եղել արարիչ եղած՝
 չգոյից անժամանակից հավիտյան,
 Անհաս իմանալու, անվախճան, այժմ մեզ հասած
 ծոցածին ծագումն շրջան է մշտածավալ, անփոփոխ:
 Միակն ստեղծվածը զարմից է սրբազան,
 միասնական շավիղ մարդկանց ընթացքի:
 Ես, աստծու նման, իմ աննմանին իմ մեջ առած,
 պիտի տիրեմ երկնային վերևից իջածի նման:
 Ձեռակերտ պատկեր որպես կերպ գեղեցիկ
 իջավ արագրնթաց վեհ շավղով աստծուց բխող,

Տագաւար եղև առ կոյսն առաքողին կամք պտրտեաց,
 քնդունակ ժամու եհաս, ահա ժամ կատարման:
 Ի խաչ բարձրանալ գիտին առ հայր համբարձունն,
 ամբարձ յերամից յերազայից վերասլացիկ
 սա զայրացմամբ.

Թևատրոհաթև շառաչմամբ բոյլ հիւթ
 ճոխարան գասուց՝ մի առ մի հրաւէր՝
 փոյթ յասպարէզ մատիք:

Ո՞վ է սա սաստկաշունչ բոսորաերփնազարգեալ,
 սա այն թագաւորն է քաջ կորովարար
 ի պատերազմէ եկեայ:

Ի վեր համբարձէք իշխանք ըզդրունս՝ առ հայր
 զաւետիս պատմեալ, ահա սիրելի քո
 սիրեցելոյ սրտիդ,
 զոր վկայեցեր դա սիրելի սրբի:

Ի գիրկս հայրենի նստեալ ի համբոյր սրբութեան
 սուրբ հոգին սիրով պատուեալ,
 զիմ գնդին զհետ
 պարգևս քեզ պարտ է լնուլ անսուտ խոստմանց
 պարտիս. քնդ ձեզ եմ յախտեանս:

3

Ի նոյն նորոյ նորին ք նոյն ք նիւթ,
 նիւթականին էնն յանէից գոյ:

Գոյքն յոչէից եղաւորեալ տիպ,
 Տիպ երանութեան ներքնդունակ ներ:
 Ներ ներբողական նըւստատիպ կերպ,
 Կերպ երամաղին և ցուցանի շուք:

Շուք տարրաշըշոյ զեզ մէջ ասոյ զկէտ,
 Կէտ կատարելոց կցորդակցեալ է էակցեալ մէտ:
 Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ
 երբայական տղայք,

Տղայք գովասանական համանգամայն
 ձիթաստանեան ոստազըւարձ երգ:

Տաղավար եղավ կույսի մեջ, առաքողի կամքն հազթեց,
ընդունելի ժամին հասավ, ահա ժամ կատարման:
Խաչ բարձրանալիս գիտում են համբարձումն հոր մոտ,
վեր սրացողի վերացումն սրբազանների խմբից
դայրույթով:

Շատ թևերի շառաչյունով մեծ գորուծյամբ
գրախտի դասերին մի առ մի հրավեր կանչում.
— Շուտ հրապարակ մտեք:

Ո՞վ է սա սաստկաշունչ, բոսոր գույնով զարգարված.
— Սա այն թագավորն է քաջ՝ արիությամբ
պատերազմից եկած:

Վեր բարձրացրեք, իշխաններ, դռները, հորը
ավետիս պատմեք, — ահա սիրելին քո,
սիրեցյալը սրտիդ,
որին նահատակեցիր, դա է քո սիրելի որդին:

Հայրենի գիրկն է նստած համբուրելի սրբության
սուրբ հոգին սիրով պատված, — իմ գնդի մարդկանց
պարգևներ դու պարտք ես տալ անսուտ խոս-
տումների,
պարտավոր ես, — ձեզ հետ եմ հավիտյան:

3

Նա՛ նորինը նույն նյութից էր,
նյութական աստված ծնվեց անգոյից:
Անգոյից ծնվեց դարձավ իրական,
Իրական պատկեր սուրբ երանության:
Սուրբ երանության մի համեստ պատկեր,
Պատկեր մարդկային, որ ցույց է տալիս ստվերը նրա:
Իսկ նա մարդու մեջ լցնում է հորդառատ իր էությունը,
էությամբ իրենց՝ մկրտվածներին դարձնելով նույնը:
Նույն և բազմաթիվ երգեր են հորինում
երբայեցի տղաներ,

Տղաները խմբովին գովասանելով՝
ձիթենու ոստեր ձեռներին երգում են:

Յրգք ովսաննայարեր արքայաճեմ ուն,
Ռահ արքայաճեմ ձորձաձածուկ ծիածանին գնացք:
Գնացք լուսաշաւիղ յաւանտիաւ եկք,
Եկըք հրէակոյտ ձերաժողով առերեւոյ
արմաւենեաց ոստ:
Ոստս արմաւենեաց վերատուելում
պարգևողին փառք,
Փառք բազմելոյն վերայ իշոյ
շնորհազարգեալ դերափառեալ մտրուկ:
Մտրուկ հանդերձ իշովն ի սարաւօթ
գօրելոյին բան,
Բանն շնորհաւէտ կտաւարեան
լեոնաթափեան յԵրուսաղէմ գայր:
Գայր նախաշաւիղ տեառն քնդունակ Բեթանիա եղև.
եղև խանդագորով սրտաձմլիկ
մարիամանց եղբայրական դութ:
Գութն մեռելոյն չափ արտասուաց
մեսիատես ազերսաւոր քորք.
Քորք նորախնդիր արտաշնչեալ
արտաբերեալ դերիզապարգև:
Պարգև զանբանողին դարձուցանէր զգին,
Դին դիապատեալ հոգեզգեստեալ կեանս կոչողին
նորատուելում կնիք:
Կնիք մահու լուծան դժոխայնոց կիրք:
Կիրք չնչին տուողին ի հոյակապ ժողովն:
Ժողովք երբայական հոյք բիւրուց
երգարանեն փառք.
Փառք լուսատուին այժմ և յաւիտեանս. ամէն:

Երգեր օրհնեցող ճամփին արքայի,
 Ճամփին արքայի, որով անցնում է ծրածնագույն երթ:
 Երթ լուսաշավիղ՝ էջով եկողի,
 Եկողին խումբը ծեր հրեաների սիրով մատուցում է
 արմավենու ոստ:
 Ոստ արմավենու որպես մի նվեր՝
 պարգևողին փառք,
 Փառք, որ բազմել է ավանակի վրա
 և փառավորել այն ավանակին:
 Ավանակի վրա է զորությունը՝
 ամենագոր միտքը,
 Միտքն ընդունակ ամեն ինչի իշխող,
 գեպի Երուսաղեմ սարից իջնում էր:
 Իջնում էր շավղով և Բեթանիայում հյուրընկալ եղավ.
 եղավ խանդաղատ և սրտաճմլիկ
 գեպի մարիամները եղբայրական գթով:
 Գթով մեռածին արցունք թափած
 մեսիատես աղերսավոր քույրեր,
 Քույրեր, որ խնդրում են, ննջեցյալին
 արգեն պատանքված՝ տալ կենդանություն:
 Կենդանություն տալ անխոս դիակին՝
 գիականացած դիակին կյանքի կոչել, տալ
 նոր կյանքի դրոշմ:
 Դրոշմ մահու լուծվեց՝ կիրքը դժոխքի,
 Դժոխքն անգոր է ի դեմս հոյակապ բազմության
 մարդկանց,
 Մարդկանց երբայական ժողովրդի,
 որ երգում են փառք.
 Փառք լուսատուին այժմ և հավիտյան. ամեն:

12. Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՒ

Ձայնն կենդանատուն ձայնէր, Ղազար, եկ արտաքս-
արտաքս ելանէր մեռեալն, տայր նոր զաւետիս
սքանչեւահրաշ խմբիցն:

Սուսմբս երամ տղայոցն երփնաթերթից ծաղկանց
ոտտինակոտոր արմաւենեաց նոճի:

Փունջ սօսին սաղարթ ստեղնաշիտակ տնկոցն
խուռն հազրէվարդին մանուշկաբեր բլւրին:

Բիւր սիրողայնոց ածէր գոյն ծրածանին խառնեալ
խառն ի խուռն աշին հոյլ ծերունեաց պերճից:

Տերև ձիթենեաց տարածանեն ընդ ոտիւք,
ընդ ոտիւք մաքրողին մաքրինաճեմ հրարփին:

Տաւիղ եռաստոթչ բամբերգայնոյ տաւիղ,
տաւիղ ապրճիռ երգ լիազուարճից:

Ձուարճ դարնանարոյս նոր Միովնի ընծայ,
ընծայ երկնայնոյն խիտ սիրամայր պարտգամ:

Ծարաւ բաւենոյ ցօղ փոխանակ նոճից,
որ զիմս ունելով վերամբառնայ ի վառս:

Մեղոյ նմանոյ աննմանին բոպ,
բոպ մասնաւորեալ մերունական կերպի:

Էն է ինքնէէն ի միշտ էէն է.

փանօք փառատուողին, փառք և պարգև միշտ
այժմ և հանապազ փառք յաւիտեանս. ամէն:

12. ՂԱԶԱՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Կյանք պարզեողը ձայնեց, Դազար, արբի դուրս.
մեռյալն դուրս ելավ շիրմից, տվեց ավետիս
սքանչեւահրաշ խմբերին:
Խմբերին մանկանց՝ ծաղիկփնջեր բռնած՝
իլարված դալար արմավենուց, նոճուց:
Ուղղաբերձ սոսու տունիի սազարթի փնջեր,
խառն հազրեվարդին, մանուշակին խառն:
Խառն ծիածնագույնին՝ բերում էին սիրողները բյուր,
բյուր սիրողները՝ խառն, պերճ ծերուկներին:
Տերև ձիթենու տարածում են ստքի տակ,
ոտքի տակ մաքրողի՝ մաքրափայլ զերդ արփին:
Տավիղ եռալար, բամբաձայն տավիղ,
տավիղն երգում է երգ ուրախության:
Ուրախ գարնան պես, նոր Սիրինին ընծա,
ընծա երկնայինին մերձ սիրող մոր, պատգամ:
Ծարավ բավենու խեժն, փոխանակ նոճու,
որ ունեմ, ի վառս խնկարկումով ելնի:
Թեզ նման դարձավ աննմանն իսկույն
և իսկույն հաղորդ՝ մեր կերպարանքին:
Աստվածն ինքնին է, միշտ էությունն է.
փանոք, փառք տվողին, փառք և պարզև միշտ
այժմ և հանապազ փառք հավիտյան. ամեն:

13. Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՒ

Սկզբնագարդ գոյիւ անայր
 Երբեմն ի նոյն վայրին,
Վայր ճոխճեմին տաւիդ,
 ամին բերելոյ օրհասս.
Օրհաս վաղաւէտ վճիռ,
 սէր համբերասպատ մահին.
Մահինարողրոջ ժամին,
 ժամին ժամանեալ աւուր,
Աւուրք ակնաքթիթ հրաւէր
 ճարակող ի նոյն ի լրոյն.
Լրոյն անդրէն այժմ միշտ նորոգ
 սէր սիրեցելոյ սրտին,
Սէր դիտին ի նոյն դիտին.
 տօն յՆրուսաղէմ երթամք:
Երթամ զարթուցանել զՂազար,
 զայն զչորեքօրեայ դմեռեալն:
Մեռեալ կենսաբեր մահին.
 մեզ նոր աւետիք նորանորին գալուստ:
Գալուստ անեղին աւուր,
 աւուրք հեղինաւորեալ,
Գայ ի Բեթանիա՝ չարչարանացն տուն,
 բերեալ զօրեղին փառօք
Զաւետիս Մարիամու,
 զնոյն և Մարթայի այն սիրելի քերցն:
Քորք քաջահաւատ յուսով
 ընդ առաջ ելանեն փրկչին,

13. ՂԱԶԱՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Գոյութեան սկզբից,
ժամանակով նույն վայրում
Նվագում է տավրիզը՝
աստված բերում է օրհաս.
Օրհաս՝ վաղավետ վճիռ,
սեր՝ ժամանող օրվա
Մահաբեր ժամին,
մահին համբերողին.
Օրերն ակնթարթ հրավեր են,
Օրհասի ծավալվում է լուրն.
Լուրը կրկին միշտ է, նորոգ,
սեր է սրտին սիրեցյալի,
Եվ սիրով են այն սպասում.
տոն է, դնանք Երուսաղեմ:
Գնամ դարթեցնելու Ղազարին՝
այն չորսօրյա մեռածին:
Մեռած կենսաբեր մահով.
մեզ նոր ավետիք անսովորի գալստյան:
Գալուստն անեզ օրերի,
օրեր սահմանված վաղուց,
Կգա Բեթանիա՝ չարչարանքի տուն,
բերելով հզորի փառքով
Ավետիս Մարիամին,
նույնպես Մարթայի՝ այն սիրելի քույրերին:
Քույրեր, քաջահավատ հույսով
ընդառաջ ելան փրկչին,

Երկիր պագանենն ոտից,
 շրթամբք համբուրեալ հեղուն,
Հեղուն զարտասուս յորդանհեղուս վտակ,
 վտակ ի վտակ խառնեալ
 յայտաթորելոյ այտից:
Փրկիչ, տէր Յիսուս Քրիստոս,
 եթէ աստ էիր դիպեալ,
 եզրայրն իմ ոչ էր մեռեալ.
 եկ և տես զաղէտ աղէտակոծ սրտի:
Սրտից ճանապարհ ձայն աղերսագոչ ողբոց.
 ճեմ ցոփինընթաց գերեզմանի դուռն:
Դուք բնց արարէք ըզվէմդ,
 վէմ վիմակասոյց ընդ վիմափոր խմբին:

Նրկրպագում են ոտներին,
շրթներով համբուրում, հեղում,
Հեղում արտասուք՝ հորդահոս վտակ,
վտակ վտակի խառնված՝
արցունք է հոսում այտերից:
Փրկիչ, տեր Հիսուս Քրիստոս,
եթե այստեղ լինեիր,
իմ եղբայրը չէր մեռնի.
եկ և տես աղետ աղետակոծ սրտի:
Սրտից աղերսագոչ ողբերի ճամփան
արագ տանում է գերեզմանի դուռը:
Դուք բաց արեք վեմն այդ,
վեմ վիմակերտ, վիմատաշ քարով:

14. ՏԱՂ ՎԵՐԱՅՄԱՆ ԽԱՉԻՆ

Ես ձայն դառիւծուն տսեմ,
որ գոչէր ի քառաթեխին,
Ի քառաթեխին գոչէր,
ձայն առնէր ի սանդարամեան:
Սանդարամեան այն ի դող եղեալ
սասանէր ի ձայնէն անեղ:
Ահեղ ձայնս, որ ես լուսյ,
սա քակէ գամուրս որ ունիմ:
Զամուրս իմ քակել կամի,
գերելոցն առնել գերէզարձ:
Գերեացն երանի տսեմ՝
որ եղեն ի յառն առիւծուն:
Ի յառն առիւծուն եղեն՝
այլ չունին ակն տանջելոյ,
Ակն տանջելոյ չունին՝
Ակն ունին անանց պսակին,
Պսակ բոլորեալ առնուն
յԱռիւծէն, յանմահ արքայէն.
Փառս փրկողին տացուք,
որ փրկեաց զգերեալսն ի բանտէն:

14. ՏԱՂ ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ

Ձայնն եմ առյուծի առում,
որ գոչում էր քառաթևին,
Քառաթևին էր գոչում,
և տիրում էր ձայնն դժոխքին:
Եվ դժոխքն այն դողում էր,
ահեղ ձայնիցն էր սասանում:
Ահեղ ձայնը, որ լսեցի,
քանգում է ամուրն, որ ունեմ:
Մարմիններն քանդել է ուզում,
գերվածներն անել գերեզարձ:
Նրանց երանի եմ առում,
որ տեսան նրանք առյուծին,
Որ առյուծին նրանք տեսան,
էլ չեն ակնկալում տանջանքի,
Տանջանքից չեն ակնկալում,
ակնկալում են անանց պսակին,
Պսակ բոլորված առնում
Առյուծից, անմահ արքայից:
Կտանք փրկողին մենք փառք,
որ փրկեց բանտից գերիներին:

15. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Անունն անեղին էին Աստուած է.

է միշտ յէութեան յանհասութեան նոյն:

Նոյն ինքն է նման, նոյն մի և նոյն մի.

մի ոմն ի յէից անդրէն ի նոյն թիւ:

Թիւ միշտ եզակի եղեռակի փառք.

փառք իմ դիմառից էից գոյէից դունդ:

Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր.

վայր համբից բիւրից օր սահմանեալ գետ:

Գետ քառնիւթեայք պաղպաջ երկնի փայլ փայլ.

փայլք փաղփինտտար Աստուած անծայրենի լոյս:

Լոյս գերազանցիկ երկնաշաւիղ ռահ.

ռահ արքունաճեմ վերայ ծովու քայլ:

Քայլ վէմ շարժելով տեղլտարան նիստ.

նիստ արքունաճեմ անապատի տօթ:

Տօթ ի ծարաւուտ երկրի երկին կոյս.

կոյս արդիւնալուր սիրասնունդ սէր:

Սէր հարկաւորեալ կամից կատար կամ.

կամ ժամին հասեալ պատերազմի օր:

Օր պարզ և թերի օր մի յայտնի Տեառն.

տեառնագիր հրամանն ևս բարձրանամ դէտ:

Գիտեմ գիտանոց դէմ հարաւոյ ճեմ.

ճեմ պատմուճանի բոսորայնոյ գոյն:

Գոյն ներկեալ արեամբ աղբիւր բղխեալ կող.

կողիմնապատիր պարտեաց յառաջ ձայն:

Ձայն տուք գստերացդ Սիոնի, զի՛ լայք,

զի՛ լայք ու աւաղէք, պըսակ ի գլուխ իմ:

15. ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ինքնագո էի անունն աստված է,
որ էության մեջ անհաս միշտ նույն է:
Նույն է նա իր հետ, նույն է և միակ.
մեկն էությունից, նորից նույն թվում:
Թիվ որ եզակի՝ եռակի է փառք.
փառք ինձ վկայիս մարգկային խմբի:
Խումբ սերտ բազմության բոլոր վայրերի.
վայրեր բյուր մարգկանց, որ վերջանում է
սահմանով գետի:
Գետեր, որոնց մեջ սպաղաջում է փայլը երկնքի:
փայլն այդ պայծառ աստվածն է՝ անհատնելի լույս:
Լույս գերազանցիկ շավիղն է երկնի.
շավիղ արքայական երկնային ծովի վրա քայլողի:
Արքան իջնում է, նստում է վեմին.
վեմն որպես աթոռ անապատում տոթ:
Տոթ ծարավ երկրում իջնում է երկնից.
երկնային կողմից ավետում է սեր:
Սեր որպես լրիվ կատարումն կամքի.
կամք հասած ժամին պտերազմի օրվա:
Օր պարզ և թերի հայտնի է տիրոջ.
տիրոջ հրամանով բարձրանում եմ դետ:
Դիտում գիտոցից տիրոջ քայլքը հարավից,
հագած պատմուճան բոսորագույնի:
Գույն ներկված արյամբ, որ աղբյուրի պես
բխում էր մարգեղեն կողից:
Միտնի դստեր, ինչ՞ու եք լալիս,
ինչ՞ու եք ողբում ու ավազում գլխիս պտակը:

Իմ վարսս անձրևով, քաղցրիկ ցօղով լի,
լի ու լրու՛մնօրէն զիս պսակեաց մայր իմ:
Մայր իմ հետևող ժամագրողին օր.
օր երիցօրեայ ես տապանի դնիմ:
Դնիմ դէմ գըժոխոց աւարողին բունն.
բունըն զօրութեամբ զօրեղինին զօր:
Զօր զօրեղինին զօրինահաս գունդ.
գունդ նըլաստախումբ աւետարեր յոյս:
Յոյս յուսարերին ժամայն հասէք լեառն,
լեառն Գալիլեա, անդ տեսանէք զՏէր:
Տէր յարեաւ, կանայք գան ի հանդէս փոյթ,
փոյթ պատուէր տուք իմոյ Պետրոսեան երամիւն:
Երամք երամից ձեզ երանեն միշտ,
միշտ ձեզ երանեն, զի Տէր յարեաւ այսօր:
Այսօր Տէր յարեաւ, փառք յարութեանն Տեառն,
Տեառն գոհութիւն, փառք և պատիւ միշտ յաւիտեան:

Վարսերս անձրևով, քաղցրիկ ցողով են լի,
որ լիուլի ինձ պսակեց մայրն իմ:
Մայրն իմ հետևող ժամագիր օրվան,
երբ երեք օր ես շիրիմ մնացի:
Կմարտնչեմ գծսխքի իշխանության դեմ
գորավոր ուժի բուռն զորությամբ:
Ուժ ունեմ ամենագոր՝ ուժեղահաս գունդ,
գունդն այդ փոքրաթիվ հույս է բարերեր:
Հուտաբեր ժամին գնացեք լեռը,
լեռը Գալիլյա, անդ կտեսնեք տերը:
Տերն հարյավ, կանայք հանդեսին գալիս են շտապ,
չուտ լուր տվեք իմ Պեարոսյան խմբին:
Խմբերը մարդկանց ձեզ են երանում,
երանում են միշտ, որ տերն հարյավ այսօր:
Այսօր տերն հարյավ, փառք աիրոջ հարության,
տիրոջ գոհություն, փառք և պատիվ միշտ հավիտյան:

16. ՀԱՄԲԱՐՉՄԱՆ

1

էն ի միշտ էէն անեղապէս ծնունդ
ծածկեալն յանքննին ծոցոյ,
ծագեալ ի հօրէ լուսոյ աշխարհի լոյս:
Լոյսըն գիւրական ստեղծեալըն տիպ
պատկեր տպաւորեալ լուսոյն
ծածկոյթ հողանիւթ արփիական կերպին:
Կերպարանըն հօր առեալ ըզմերս,
ծնեալն տնօրինարար մարմնով՝
խաչիւ և արեամբ ազատելով զընութիւնս:
Զընութիւնս վայրանկեալ նորոգ յարութեամբն իւրով
ընդ իւր վերյարուցեալ փառօք
վեհից գերագոյն նստոյց յաթոս փառաց:
Փառաց թագաւորն հարեալ զպատերազմ,
զգերողին առեալ զաւար,
ի բարձունս ելեալ բաշխեաց պարգևս մարդկան:
Մարդկային մարմնով ի գոյն արեան զՏէր
անմարմնական տեսեալ զուարթնոց,
ընկեր առ ընկեր հարցեալ, թէ Թի իցէ.
Ո՞վ է սա, գիմեալ գայ յՆվովմայ
կարմրածորձ ի բոսորայ,
գեղեցիկ պըճնեալ աստուածազարդ լուսով:
Լոյսըն հրեղինացն ծանուցեալ բանիս՝
բուռն իմոյ զօրութեամբ վանեալ
զհրզօրն կարծեալ արգարութեամբ յերկրի:

16. ՀԱՄԲԱՐՉՄԱՆ

1

Աստվածն միշտ աստված է և անծնունդ՝
պահված անքնին ծոցում,
ծագած լույս հորից՝ աշխարհի լույս:
Լույսից ստեղծված պատկերը նրա,
պատկերը արփիական, լուսե
ընդունեց հողանյութ ծածկույթ:
Հոր կերպարանքն առավ մեր մարմինը.
տնօրինաբար մարմնով ծնվելով՝
խաչով և արյամբ փրկեց մեր բնությունը:
Բնությունն ընկած նորոգեց հարությամբն յուր,
իր հետ բարձրացրեց փառքով,
նստեցրեց փառքի գերագույն աթոռին:
Փառքի թագավորն մզեց պատերազմ,
գերողին նա ավարեց,
և բարձունք էլած՝ բաշխեց պարգևներ մարդկանց:
Մարդկային մարմնով արնաներկ տիրոջ՝
անմարմիններն երկնում տեսնելով,
ընկերն առ ընկեր հարցնում՝ ի՞նչ է սա արդյոք.
Ո՞վ է սա, որ գալիս է Նդեմից
բոսորակարմրագգեստ,
գեղեցիկ պճնված աստվածագարդ լույսով:
Լույսն հրեղեններին հայտնում է խոսքով,
թե իմ զորությամբ հաղթեցի նրան,
ով հզոր էր կարծված երկրի օրենքով:

Ձերկրային գունոյ պատմուճանին զտարակոյս
 դարձեալ լուծանել հարցեալ՝
 զի՞ կարմիր հանդերձ քո ըստ լի կոխեալ հնձան:
 Հնձան ի խաչին յարեալ ասէ,
 կոխեցի զթըշնամին կենաց,
 յերկիր ըզմեղաց հեղեալ զմազձ նորա:
 Նոր անդրէն ի նոյն հարցարանեալ վեհիցն՝
 զի՞ այդ վէրք ի ձեռս քո,
 որով ի հողոյ ստեղծէր զպատկեր քո Տէր:
 Տէրըն զիւրականս ազդեալ բարեկամացն զկիրս
 գոր վիրաւորեալ եղէ
 ի տան սիրելոյ Իսրայէլեան դասուն:
 Դասուց հրեշտակացն ծանուծեալ թէ ո՞վ
 առ դերագոյն կայիցն հոյլըս՝
 ազադակելով գոչեն՝ բացէ՛ք զքրունըս.
 Դրունք յաւիտենից փակեալ յերկինս
 այսօր վերհամբարձեցին հիմամբք,
 և մտցէ ի փառս փառօք եկեալ արքայ:
 Արքայ երկնաւոր մտեալ յերկինս երկնից,
 յորում էր ի սկզբան նոյն միշտ
 ի գիրկս հայրենի հողոյն սիրով պատիւ:
 Պատիւ ի հօրէ նստեալ յաջմէ իւրմէ,
 մինչև զթշնամին ի սպառ
 յապագայցն աւուր ներքոյ զիցէ սոխից:
 Ոտից թշնամւոյն բնութիւնս եղեալ ներքոյ՝
 նստի քրովբէից յաթոռ,
 ի յերկնաւորացն երկրպագի յաւէտ:
 Յաւէտ ցնծութիւն հողեղինացս այսօր
 անձառ փառաց գոլով հաղորդ,
 ընդ հօր նստելով առեալն ի մէնջ որդւոյ:
 Որդւոյդ միածնի երկրպագեմք և մեք
 ընդ մետասան ընտրեալ դասուն,
 հայցելով ի քէն զաւետարեր հօգիդ:
 Հօգի քո բարի առաջնորդեսցէ մեզ
 առ քեզ վերերերիլ հողւով,

Երկրագունն պատմուճանն հարուցում է տարակույս՝
 դարձյալ մեկնելով հարցնում են. ինչո՞ւ
 կարմիր է զգեստ քո, կարծես հնձան է կոխված:
 Հնձանը խաչ դարձալ, ասում է.
 տրորեցի կյանքի թշնամուն,
 երկիրն հեղեղվեց մեղքերի մաղձից նրա:
 Նորից են հարցնում վե՛հ վեհագույնին՝
 ինչո՞ւ են վերքերն այդ քո ձեռներին, տեր,
 որով հողից ստեղծեցիր պատկերը քո:
 Տերը հայտնում է յուրայիններին հուզմունքն իր,
 որ ստացել է վերք
 իսրայելյան սիրելի ժողովրդի երկրում:
 Դասերն հրեշտակների հայտնում են ո՞վ է գալիս,
 գերագույնին շրջապատող խմբերին
 աղաղակելով դոչում են.—բացե՛ք դռները:
 Դռներն երկնքում հավիտյան փակված
 այսօր վեր բարձրացան հիմքով,
 և մտնում է փառքի մեջ փառքով եկած արքան:
 Արքան երկնավոր՝ մտնում է վերին երկինք,
 որտեղ էր նա և սկզբից,
 գրկում հայրենի՝ հոգուն սիրով պատիվ:
 Որպես հորից պատիվ՝ նստում է աջ կողմում,
 մինչև թշնամուն իսպառ
 ապագա օրերի՝ դնում է ոտքի ներքո:
 Թշնամու գոյությունն ոտքերի տակ՝
 նստում է քրովրենների աթոռ,
 երկնավորներից երկրպագվում հավետ:
 Հավետ ցնծություն հողեղեններիս՝ այսօր
 անձառ փառքին եզանք հաղորդ,
 հոր հետ նստում է մեզանից վերացած որդին:
 Որդուդ միածին երկրպագում ենք և մենք
 հետ տասնևմեկ ընտրյալ դասի,
 հայցելով քեզնից ավետարեր հոգիդ:
 Հոգին քո բարի թող առաջնորդի մեզ
 քո մոտ վերանալ հոգով,

վերելս ի սրտի դնել տրտմական հովտէս:
Հովտէս լուծանել կենաց,
յահեղ քում գայտեանդ աւուր
առ հայր վերացո զմեզ լրմամբ սիրոյ:
Սիրելի սիրոյդ աջ ընդ աջմէ բազմեալ,
հայցեա ընդ անդամոցս գլուխ՝
միանալ ընդ քեզ քե ընդ սիրոյ հօր և հոգւոյդ:
Ջհոգիդ կենարար առ ի հօրէ բղխու՞ն,
շնորհեա քո բանաւոր հօտիս
ըստ փոքուն հօտի ի վերնատունն սուրբ:
Ի սրբարանիդ վերհամբարձեալ սուրբ
իձայն փողոյ երգեմք քեզ զերգս
ընդ սերովբէիցն երեքսրբեանդ սուրբ:
Սուրբ երրորդութեանդ արժանասցուք լինել
քնար միշտ հոգևոր հնչմանց
յայժմուս յաւէտ երգել ըզփառս յաւիտենից:

2

Սյն փոքրիկ հօտին տրտմեալ,
վտակս արտասուաց բղխեալ,
այն սակաւ գնդին ողորմ աւազիկ ազէտ,
զաչս ի վեր համբարձեալ յերկինս:
Որ ես հայր որբոց յուսով,
ու՛մ յանձն արարեր զմեզ,
տարակոյս բաժին է մեր:
Յիշե՛ս, յիշե՛ս, մի՛ մոռանար,
սէր խոստացար անսուտ բանիւ,
ընդ մեզ լինել զաւուրս կենաց
մինչ ի կատարած երկրին:

վերելքի հույսն ունենանք այս տրտում հովտից:
Այս կյանքի հովտից արձակիր,
քո անեղ գալստյան օրվան
հոր մոտ վերացրու մեզ լի սիրով:
Միրելիդ քո, բազմել է քո աջ կողմում,
խնդրեցի բանականությամբ
միանալ քեզ հետ, քեզնով՝ սիրո հոր և հոգուդ:
Հոգիդ կենարար, բխած հայր աստծուց,
շնորհիր բանավոր քո այս փոքր հոտին՝
վերանալու վերնատունը սուրբ:
Քո վեր համբարձած սրբարանում սուրբ
փողի ձայնով երգենք քեզ երգեր,
սերովրեների հետ, երեքսրբյան սուրբ:
Սուրբ երրորդությանդ արժանանանք,
լինենք քնարը հոգևոր հնչմունքների
այժմ և հավետ երգելով փառքերդ հավիտենական:

2

Այն փոքրիկ հոտն է տրտմել,
վտակներ արցունքի թափել,
այն սակավ ողորմ գնդին ողբալի աղետ,
աչքերս վեր բարձրացրած երկինք
Որպես հայր դիմում եմ որբերի հույսով,
որ հանձնել ես մեզ՝
հոգսի բաժինը մեր:
Հիշիր, հիշիր, մի՛ մոռացիր,
սեր խոստացար անսուտ խոսքով՝
մեզ հետ լինել կյանքի օրերին,
մինչև վախճանը երկրի:

17. ՔԱՌԱՍՆԻՑՆ

Գունդք սուրբ վկայիցն ի սոսկալի պատերազմին,
հանդիսաւորեալ հասին ի գլուխ ասպարիզին:
Թոպէից պաշտօն ըրանշան երանութեամբ,
բանաւոր զենմունք ողջակիզեալք
աստուածութեան:
Ի կատարածին անտխրական յօժարութեամբ
ասագնակոշկոճ ի չարչարանսն համբերեալք:
Գուն մահու գործեալ սաստկակսկիժ քրտնակայրակն
խառնեն զարտասուս ընդ վարդագոյն արեանն իւրեանց:
Ողորմ աղէտիւ կողկողագին պաղատանօք
մաղթանօք խնդրեն զտանջանացն յաւելուած:
Բարունիք բարիք անհաւասարք երկրաւորաց,
բոսորերանգեան վայելչութեամբ արիացեալք:
Ի կիրքս մարմնոյ ի կենակից մեր բնութենէս,
ելին ի յերկինս խառնեալ ի զօրս երկնաւորացն.
Երեւելապէս յայտնի քարոզք տիեզերաց,
տօնք հրեշտակաց ի մատենի կենաց զրեալք:
Երանաւէտեալք անդ ի վերին Երուսաղէմ,
տեսեամբ զուարճանայք արարողին տիեզերաց:
Բախճանք պերճականք տէրունական մարմնոյ ոսկերք.
աստեղք աշխարհի՛ ի բարձրութիւնս
երկնից տեսեալք.
Գոհաբանութիւն արարողին անմահութեան
նախընթացողին միշտ ի խրախոյս նահատակաց:
Սոքօք հիմնեցան եկեղեցիք ուղղափառաց,
որոց գլուխ անկեան արարողին ներգործութիւն:

17. ՔԱՌԱՍՆԻՑՆ

Գնդերն սուրբ վկաների՝ սոսկալի պատերազմում
հանգիսավորված հասան գլուխն ասպարեզին:
Բոպենների պաշտոն արին բարենշան երանությամբ,
բանական սուրբ սղջակիզված զոհեր դարձան
աստվածության:

Ի մահ գնացին անտխրական հոժարությամբ,
չարչարանքներում անագնածեժ՝ համբերողներն:
Գործ դրին ջանք մահի՝ դառնակսկիծ, քրտնակայլակ,
խառնեցին արցունք հետ վարդագուռյն արյան իրենց:
Ողորմ ազետով, ողորմագին պաղատանքով,
մաղթանքով խնդրում տանջանքներին նոր հավելված:
Բաբունիններ բարի, անհավասարը մարդկանցից,
բոսորաբանդ վայելչությամբ արիացան:
Իսկ կրքերում մարմնի եղան կենակից մեր բնությանը,
երկնավորների զորքին խառնված էլան երկինք:
Երևելարար քարոզ դարձան տիեզերքի
և մատյանում կյանքի գրված հրեշտակների
սուրբ տոների:

Նրուսադեմում այնտեղ վերին, ավետյալներ,
տեսարանով զվարձանում եք տիեզերքը ստեղծողի:
Բախճան պանծալի տիրոջ մարմնի սուրբ ոսկորներ՝
բարձունքում երկնի որպես աստղեր ողջ աշխարհի:
Գոհաբանություն ստեղծողին անմահության,
նահատակներին միշտ խրախույս է նախընթացողն:
Սրանք հիմնեցին եկեղեցի ուղղափառաց,
և անկյունաքարն էր ստեղծողի ներգործությունն:

Ամենապարզև բաշխեալ մասունս աղաչողաց.

Վերնաքաղաքին որդիք նորոգ նոր Սիովնի:

Յետնումն հատուցման անկաւուրն կենաց միջնորդք

յանդիման մեծի հրապարակին թագաւորեալք:

Սոքօք առ ի մէնջ ընկեալ զաղօթս, երկայնամիտ,

զմերս վասն սոցա, ամենագութ Տէր, փառք քեզ:

Ամենապարզե բաշխում մասունք խնդրողներին—
վերնաքաղաքի՝ նոր Սիոնի որդիք դառնում:
Հետին հատուցման անեղ օրվա մեր միջնորդներ,
թագավորողներ դուք սպասվող մեծ ատյանում:
Սրանցով մեզանից ընդունիր մեր աղոթքները,
ամենագութ, երկայնամիտ տեր, փառք քեզ:

18. ՏԱՂ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ Ի ՏԱՀԱՐՆ ՍՈՒՐԲ

1

Զօրք ի վերուստ իջեալ առ Սողոմոն արքայն,
շինէին զտաճարն, տաշէին զփայտն,
քերէին զքարն առ ձեռնադրեալ փայտին.
դղրդեցաւ երկիր, հռչակեցան լերինք,
պատառեցան արձանք ի ձայնէ ուռնադղորդ
ճայթմանց:

Երկոտասան նիւթից, երեքտասան կողմանց,
չորեքտասան մասանց, կապուտակ նիւթիցն
զնոյն քարոզէին, զվարսն հատանէին,
ի ներքնական սերմացն զարծաթապատ բևեռքն
ի լծակէ լծակ:

Մտանէր Քիրիմն արքայն ի տունն տէրունական,
տեսանէր Քիրիմն արքայն ըզզարդ գամենայն
գունիցն,
զշողն և զշուշան, զյորդանն և զրացագոյն սպիտակն,
անդնդահոս վտակ, հաւ թիթղունս արկեալ,
զայն մարգարտով կազմէր, շողանման կապէր
ի կողակէ կողակ:

Քանի՞ թիւ կողակացն, քանի՞ թիւ խորանացն,
քանի՞ թիւ կամարացն, քանի՞ թիւ կանթեղացն.
քանի՞ թիւ վարագուրացն և քանի՞ թիւ զանգակացն.
հազար թիւ կողակացն, հազար թիւ խորանացն,
հազար թիւ կամարացն, հազար թիւ կանթեղացն,
հազար թիւ վարագուրացն և բիւր մի զանգակացն:

18. ՏԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻ

1

Վերեից զորք իջալ Սողոմոնն արքայի մոտ,
շինում էին տաճարը, տաշում էին փայտը,
քերում էին քարը փայտ դնելու համար.
Դզրգաց երկիրը, թնդացին լեռները,
ձեղքվեցին վեմերը մուրճադորդ ճայթուների
ձայնից:

Տասներկու նյութից, տասներեք կողմից,
տասնչորս մասից, կապուտակ նյութից
կառուցում էին,
ձայն էին տալիս, ծայրերը կտրում
ներքին սեմերից, բևեռներով արծաթապատ
միացնում լծակ լծակի:

Մտնում էր Քիրիմ արքան տունը սրբազան,
տեսնում էր Քիրիմ արքան զարդերն ըստ գույների՝
շողի և շուշանի, որդանի և բացագույն սպիտակի,
անդնդահոս վտակ, թոչուն թիթեղից կերտված,
մարգարտով հորինված, շողի պես շինված
կողակից կողակ:

Քանթ թիվ կողակների, քանթ թիվ խորանների,
քանթ թիվ կամարների, քանթ թիվ կանթեղների,
քանթ թիվ վարագույրների, քանթ թիվ զանգակների.
հազար թիվ կողակների, հազար թիվ խորանների,
հազար թիվ կամարների, հազար թիվ կանթեղների,
հազար թիվ վարագույրների և մի բյուր զանգակների:

Տաճարքն այն ուժն նման է տաճարքն այն ուժն նման է,
մարդակքն այն ուժն նման է, գերանքն այն ուժն
նման է,
խոյակքն այն ուժն նման է, սիւներն այն ուժն
նման է,
խարիսխքն այն ուժն նման է, և տաճարն այն ուժն
վայել է:

Աճառքն մարտիրոսացն, մարդակքն մարգարէիցն,
գերանքն քերովրէիցն, խոյակքն առաքելոցն,
սիւներն սերովրէիցն, խարիսխն սրբոյ կուսին,
տաճարն վայել է Փրկչին:

Քարշէին զլարն, հնչէին զանգակքն,
դղրդայր տաճարն, ճոխայր ճախարակքն,
ցնծայր Սողոմոն արքայն,
և երգս ի բարձունս երգէին նուագելով,
և գոչէին ասելով՝ Ալելուիա:

2

Յառաջ քան շարժիչն աներր էիցն կայք
օրէն խորհրդոյ և հրաւիրող բարեաց:
Անճարիցքն ճարն ճարտարապետեալ
եռահիւսակ զարդից խաղացմամբ ի վայր
գայր հասանէր աւուրբք:
Յիւ տ՛ նա հօրէն շառաւիղէն Դաւթի
Սողոմոն արքայն մեծ քերական պերճիւք
զարդարեալ ըզսա վայելայից փառօք:
Վէմս ի սմա կանգնեալ եւթնաղաւնոյ աչօք
թագիւ թագ կապեալ խիտ խորանի ակամբ:
Հաւ պերճաբարոյ ցոփինաճեմ սէգ առեալ ի խաղ
այն սիրամարգն ասէր՝
Ո՞վ է համբարձեալ զպարանոցն իւր յօդս:
Ես հապա ի բաց, ես հապա ի բաց գնամ
յիւմ յաշխատացեալ յըղևորէն եկեալ:

¹ Աղավաղված բառ:

Տաճարն այն թև նման է, օճորքներն այն թև նման են,
մարդակներն այն թև նման են, գերաններն այն թև
նման են,
խոյակներն այն թև նման են, սյուներն այն թև
նման են,
խարիսխներն այն թև նման են և տաճարն էլ թև
վայել է:

Օճորքներն՝ մարտիրոսներին, մարդակներն՝ մարգարեներին,
գերաններն՝ քերովբեներին, խոյակներն՝
առաքյալներին,
սյուներն՝ սերովբեներին, խարիսխն՝ սուրբ կույսին,
տաճարն վայել է փրկչին:

Ձգում էին լարը, հնչում զանգակները,
դղրդում էր տաճարը, շարժվում ճախարակները,
ցնծում էր Սողոմոն արքան,
և երգեր դեպ բարձունք երգում նվագելով,
և գոչում էին ասելով՝ Ալելուիա:

2

Նախ քան էակների գոյության շարժման սկիզբը
կար բարիքի կոչող նախասահմանում:
Անճարների ճարն ճարտարապետոզն
եռսրբյան զարդերի շարժամբ դեպի ցած
գալիս հասնում էր շուտով:
..... նա, հայր Դավթի շառավիղից,
Սողոմոն արքան՝ մեծ քերթողն փառավոր,
զարդարում է սրան վայելուչ փառքով:
Վեմերն սրա մեջ կանգնած են յոթնադավնու աչքերով,
պսակից-պսակ կապված է խորանը կուռ ակներով:
Թռչուն փառավոր շուտ թռչող սեգ խաղ անելով՝
այն սիրամարգն ասում էր՝
Ո՞վ է բարձրացրել իր պարանոցն օդում:
Ես ապա վեր եմ, ես ապա վեր եմ սլանում
ինձ համար հոգնած ուղարկողից եկած:

Արփիատեսիլ ճառագայթիւք վնայլեալ
ծիր ի ծիրանւոյ վառ ի վառեալ զղէմս:
Թեական նման, արեգական նման,
կաթուած գեղեցիկ ի քեզ կաթէ զմուռս:
Գեղեցկապաճոյճ մեզ քաւարան կազմեալ
եթերանման կամարակապ զարդիւք:
Չորիւք հիւսակօք հրաշադարդեալ սեղան
կանգնեալ քառանկիւն զարմանասքանչ հրաշիւք:
Ի քեզ է բազմեալ թագաւորաց արքայն,
որում ոչ բաւեն երկինք անբաւ բանին:
Բաշխէ զփրկաւէտ զկենդանարար զմարմինն
սուրբ զանմահարար զանապական արիւնն:
Ակումբ են առեալ զքե երկնային զօրացն,
անիւ սարսափամբ ծածկեն զղէմս իւրեանց:
Փառս ի վեր երգեն եղանակաւ ձայնիւ
բանիւ հաստողին առ հասարակ էիցս:
Քրիստոսի փրկչին պսակողին ըզքեզ
վայել է պատիւ, փառք յաւիտեանս. ամէն:

Արփիատեսիլ ճառագայթներով փայլող
ծիր ծիրանուց պայծառ է դեմքս:
Թևավորի նման, արեգակի նման
որպես գեղեցիկ կաթումն քո մեջ կաթում է զմուռս:
Գեղեցկապաճուճ մեզ քավարան կերտված՝
եթերանման կամարակապ զարդերով:
Չորս հյուսվածքով հրաշագարգված սեղան
կանգնած է քառանկյուն զարմանասքանչ հրաշքով:
Քո մեջ է բազմած արքայից արքան,
որին չի բավում երկիրն քն անհուն մտքի:
Բաշխում էր փրկավետ կենդանարար մարմինը,
սուրբ անմահարար անապական արյունը:
Չորքերն երկնային քո շուրջն են հավաքվել,
ա՛նի սարսափով ծածկել դեմքերն իրենց:
Փառք են վեր երգում եղանակի ձայնով
բոլոր էակներին հանճարով ստեղծողին:
Քրիստոս փրկչին՝ քեզ պսակողին
վայել է պատիվ, փառք հավիտյան. ամեն:

19. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Երկինքն ի յերկիրս, և երկիրս ի յերկինք,
Վայրէջք ի խոնարհ, և վերելք ի բարձունս.
Երկին նոր երկին լոյս արփազարգեալ,
Վերին աւետիքն ի յերկիր ծաւալին.
Գուշակք ի յէից եւթնատես միակին,
Խորհուրդն եթերեան նոյնի թերս հողմոց.
Ծանոյց տեսանողն ի յերկուց թռուցելոցն,
Հարսինք կանայք արծուաթռիչք, սրբնթացք,
Եւ հողմք ի շորից վեր ի յօլս ամբսունին:
Եւ այն Քառասուցան գետըն վտակ բղխենայր,
Հոսէր իջանէր անդր ի ծովն առաջին,
Խաղայր ծաւալէր անդր ի ծովն որ յետնոյ:
Ծովուն առաջնոյ անդր երամք սղաւնեաց,
Ծովով երկրսրդի ձագք արեամբ թաթաւին:
Ծաւալ ծով ծիծաղ քաղցր օդով շարժենայր,
Շարժէր սարայեան ի կղզիս կնդըրկի.
Ամբակ շափիղայ տեսուն յայգին Կեզրոնի.
Ի խաղըս գետոց հրով վառեալ բուրաստան,
Եւ անդ մակաղին երամակքըն Գերայ,
Նոճիւ սարգենայ փառք պատիւ Կարմեղայ:

19. ԵԿԵՂԵՑՈՒՆ

Երկինքն երկրում և երկիրն երկնքում,
Վայրէջք դեպի ցած և վերելք բարձունքում.
Երկինք նոր երկինք արևով զարգարված,
Վերին ավետիքն տարածում են երկրում
Գուշակներն աստվածային յոթնաչյա միասեա:
Խորհուրդն երկնային հողմերի թևերով
Հայտնեց աստվածը երկու հրեշտակներով՝
Նման հարսների՝ արծվաթռիչ, սրբնթաց,
Եվ հողմերն շորս կողմից դեպի օդն են բարձրանում:
Եվ այն Քսոսագյան գետ վտակն էր բխում,
Հոսում իջնում էր դեպ այն ծովն առաջին,
Շարժվում ծավալվում դեպ այն ծովը հետին:
Ծովի վրա առաջին երաֆներն աղավնու,
Ծովով երկրորդ ծագեր արյամբ են թրջվում:
Ծավալ ծով ծիծաղ քաղցր օգով շարժվում էր,
Շարժվում սաքայան կղզիներում կնդրուկի.
Ամպ կապույտ տիրոջ այգու վրա Կեդրոնի.
Գետերի ջրուտում հրով վառված բուրաստան,
Այնտեղ են մակաղում երամակներն Գերի,
Նոճիով դափնու փառք պատիվ Կարմեղին:

ՕԳՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ՄՆՆԿՅԱՆ

Ունեցել է երեք հրատարակություն (ABC) և երեք վերնագիր՝ «Մենդեան», «Մեղեդի ծննդեան», «Առ հրաշագարդ ծնունդ Քրիստոսի»:

2 ՄԵՂԵԴԻ ՆԱՐԵԿԱՅՈՒ

Առաջին անգամ հրատարակվել է Ար. վրդ. Տեկանցի «Հայերգ» ժողովածուի մեջ և վերագրված է ոչ թե Նարեկացուն, այլ Մկրտիչ անունով մի երգչի: Այս երգը, որ հավանաբար կիսատ է, մեզ պատահել է երեք ձեռագրերում (15, 17 և 18-րդ դարեր): Ավելի արժեք է ներկայացնում 1424 թ. ձեռագիրը (№ 8188), որի մեջ տաղը վերնագրված է այսպես. «Մեղեդի Նարեկացի»: Տեկանցը չի հիշատակում իր աղբյուրը, սակայն կասկածելի է համարել հեղինակին: «Հայերգի» փոփոխակը ավելի մոտ է 17 և 18-րդ դարերի ձեռագրերին, հետևաբար Տեկանցի աղբյուրը այդ դարերից հին չէ: Այս երգը, անկախ իր կիսատ վիճակից, բարձր արվեստի գործ է և իր բովանդակությամբ, լեզվով ու պատկերելու շքեղությամբ շափազանց հարազատ Նարեկացուն: Ունեցել է երկու վերնագիր՝ «Մեղեդի Նարեկեցի» և «Մեղեդի յարութեան»:

3 ՄԵՂԵԴԻ ԱՍՏՎԱԾԱՄՆԻ

Ունեցել է երեք հրատարակություն (BCF) և երկու վերնագիր՝ «Մեղեդի Աստուածածնի», «Առ անապական ծնունդ Քրիստոսի»:

1. Օրինօրէն բառը չկա բառարաններում: Նշանակում է օրինական, օրենքին պատշաճ, ըստ օրինականի: Թարգմանություն մեջ այն մոտավորապես փոխարինեցինք ինչպես բառով, իսկ լի իմաստով կլինի՝ մատներն իրենց օրինակով նման են դալար ճյուղերի, որը ոչ միայն ընդարձակ է, այլև բանաստեղծական չէ:

2. Նէնեմ բառը բառարաններում համարված է բոլորովին շտուգաբանված, անհայտ և անբացատրելի: Գուցե հնարավոր լինի կապել արաբերեն նշմ (հայերենում կարդացվում է ձայնավորներով) բառի հետ, որ նշանակում է աստղ: Բանաստեղծը կույսի աչքերը նմանեցնելով վառ աստղերի, համեմատում է միջօրեի ժամի հետ՝ որպես բարկ, կրակոտ և պուժժառ հայայցը:

4 ՄԵՂԵԳԻ ՄՆՆԴՅԱՆ

Ունեցել է չորս հրատարակություն (ABCF) և երեք վերնագիր՝ «Մեղեգի ծննդի», «Առ ծնունդն Քրիստոսի», «Նորին ի նոյն խորհուրդ»:

1. Ատիճաղ, պատիճաղ բառարաններում բացատրված են ուղրած, գալարապատ փարեի: Մեզ թվում է՝ այս բառերը որպես ածականներ երգի համար՝ նշանակում են ելևէջներ ունեցող, ներգաշնակ:

2. Սողի համարված է անստույգ, անծանոթ, նույնիսկ անհայտ բառ, բայց այս տաղի իմաստից ելնելով՝ կարելի է բառը բացատրել որպես գեղգեղուն, եթե խտղի բառն էլ ըմբռնենք որպես զգացում առաջ բերող:

3. Հազրէ համարվել է անստույգ և անծանոթ բառ, բայց «Արմատական բառարանում» համարված է բայ (հազրել) և որպես թի նշանակում է մազերի մեջ ծաղիկ խրել, անցկացնել: Նարեկացու մոտ այդ իմաստը չունի, այլ ուղղակի ծաղիկ անունն է, սակայն ոչ թե հազրի ծաղիկը, այլ հազրեվարդն է, գրված միայն բարդության առաջին մասը:

5 ՏԱՂ ՔԱՂՅԻՒԿ

Ունեցել է չորս հրատարակություն (ABCD) և չորս վերնագիր՝ «Տաղ ծննդեան», «Տաղ քաղցրիկ», «Տաղ սուրբ Աստուածածնոյ», «Յորդորակ»:

6 ՄԵՂԵԳԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ունեցել է երեք հրատարակություն (ABC) և երեք վերնագիր՝ «Մեղեգի յարութեան», «Առ հրաշափառ սուրբ յարութեան Քրիստոսի», «Մեղեգի յարութեան և խաչի»:

7 ՎԱՐԳԱՎԱՌԻՆ

Ունեցել է երեք հրատարակություն (ABC) և չորս վերնագիր՝ «Տաղ վարգավառին», «Տաղ Գրիգոր Նարեկացոյ», «Գոհար վարդն», «Առ գերագանց պայծառակերպութեան, որ և անվանի վարգավառ»:

Այս երգը Վ. Բրյուսովը թարգմանել է ռուսերեն «Алмазная роза» վերնագրով (տե՛ս «Поэзия Армении»):

1. Ասրօս բառը առօս բառի աղավաղումն է: Բառարաններում համարվել է բոլորովին շատուգաբանված, անհայտ և անբացատրելի, բայց «Արմատական բառարանում» ենթադրված է որպես ռատ: Ձեռագրերում և AB հրատարակությունների մեջ կա բառի ուղիղ ձևը՝ առօս: Ասրօս աղավաղված ձևով բառ կա միայն C ձևագրում, որից հավանաբար տպվել է C հրատարակության մեջ: Այս վերջին հրատարակությունից էլ բառը նույն ձևով ծանոթ է դարձել մեր բանասերներին: Ակադ. Մ. Աբեղյանը, ծանոթ չլինելով ձևագրերին, ինչպես երևում է՝ նաև նշված հրատարակություններին, բայց կռահումով ուղղել է բառի աղավաղված ձևը՝ որպես առօս և տվել է բառի ճիշտ բացատրությունը՝ որպես արոսի ծառ, որպես սին ծառի պտուղն և ինքն ծառը («Հայոց հին գրակ. պատմ.», հատ. 1, էջ 567):

8 ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ունեցել է երեք հրատարակություն (BCF) և երկու վերնագիր՝ «Յարութեան», «Սուրբ էջմիածնայ տաղ»:

Այս երգը Վ. Քրյուստովը թարգմանել է ռուսերեն «Песнь на воскресение Христова» վերնագրով (տե՛ս «Поэзия Армении»):

9 ՏԻՐՁ ՔԱՌԱՍՆՈՐՅԱ ԳԱՂՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ

Ունեցել է մեկ հրատարակություն (D):

Այս տաղի մասին բանասիրության մեջ արտահայտվել է այն տարտամ և շփմնավորված միտքը, որ հավանաբար նարեկացուն չէ:

Բանաստեղծության բովանդակությունը նարեկացուն անհարազատ չէ: Սա նույնիսկ երկրորդական հանդամանք էլ է, իսկ պատկերելու եղանակը, լեզուն, բանաստեղծության տեխնիկական կապվում են նարեկացու մյուս տաղերի հետ: Նարեկացին սիրում է երբեմն կրկնել իր արտահայտությունները, որոնք հաճախ առաջ են բերում ոճի և իմաստի մթաղնում, պատկերները և լեզուն ամբողջականության տեսակետից ունեն «նարեկացիական» որակ: Կան «նարեկացիական» հորինվածք ունեցող մի շարք բառեր—եւթներգ, տարբայնոյ, կուտինանոց, ուսմ կամ բամ, մատենօրեսայ, զծագրենի, հիւրասլաց և այլն: Նարեկացին այս տաղը գրել է իր շատ սիրած «պատասխանի» կոչված ձևով:

1. Այն բանի համար, որ Քրիստոսը ընդունում է մարդկային կերպ և ունենում է ծնողներ, նարեկացին նրան համարում է իր հոր (աստծու) հոժարակամ զոհը:

10 ՀՈԳՈՒ ԳԱՂՍՏՅԱՆ

Ունեցել է երկու հրատարակություն (BC) և երկու վերնագիր՝ «Գալրաստան հոգւոյն», «Ան հարծորան գալուստն հոգւոյն սրբոյ»:

1. Տան իմաստը հասկանալու համար աւետաբարոզ բառը դարձրել ենք դիմալոր բայ, իսկ որպեսզի հասկանալի լինի, թե ի՛նչն է ավետաբարոզ, մենք, հիմնվելով նախորդ տան իմաստի վրա, ավելացրել ենք հոգին, նրա հետ դնելով մի ածական—ուժգեանունչ, որ մեզ թվում է այստեղ արտահայտում է «օգինատիպ լրումն» (լի, լրիվ օղի պես կամ նման) ոճի իմաստը:

11 ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

1

Ունեցել է երեք հրատարակություն (ABC) և հինգ վերնագիր՝ «Տաղ ծննդեան», «Տաղ սրբոյ յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ», «Յայտնութեան», «Նորին նարեկացուն», «Ան հրաշազարդ մարդեղութեան Քրիստոսի»:

Ունեցել է երկու հրատարակութիւն (CD):

1. Ելինազոյ բառը չկա բառարաններում, նշանակում է գոյութիւնից ծագող, բխող: Մենք այստեղ թարգմանեցինք «աստուծուց բխող»:

Ունեցել է մեկ հրատարակութիւն (C):

1. Այս տաղի մեջ Ը գրերը ոչ մի իմաստ չունեն: Տաղի ձևագիրն էլ մեզ չի պատահել, որպեսզի հնարավոր լիներ ստուգել: Ենթադրում ենք, որ Ը գրի փոխարեն կարող է լինել Ի:

2. Երամաղ կամ Երամաղի համարվել է անստույգ և անծանոթ բառ: Միայն ախաղ. Ստ. Մալխասյանի «Բացատրական բառարանում» բացատրված է՝ «Երեկաների բազմութիւն (անստ. նշ.)»: Մեզ թվում է, որ որպէս բարդութիւն կազմված է երամ և աղի բառերից: Երամ նշանակում է խումբ, նույն իմաստն ունի և աղի բառը՝ որպէս հույլ, ջոկ, դաս, երամ, բազմութիւն: Երամաղի բառը երկու հոմանիշների կրկնութիւնն է և վերաբերում է մարդկանց, որպէս բազմութիւն: Մենք հարմար գտանք թարգմանել մառդկային բառով:

3. Տարբաշիչ և ա բառերը համարվել են բոլորովին շատուգաբանւող, անհայտ և անբացատրելի: Մեզ թվում է տարբաշիչ բառը բարդութիւն է, կազմված տաւր և շիչ բառերից: Ըստ Եզնիկ Կողբացու մարդու մարմինը կազմված է չորս տարբերից—խոնավութիւն, ցամաքութիւն, ցրտութիւն և ջերմութիւն: Նարեկացին ունենալով այս տեսակետը մարդու կազմի մասին, միաժամանակ շքեղացնում է նրան, համարելով շիչ՝ լցված տարբերով: Աստուծու կերպարանքը նման է ամբողջ մարդկութիւն պատկերին («կերպ երամաղին»), որը ցույց է տալիս միայն նրա (աստուծու) շուքը, ստվերը, («և ցուցանի շուք»), իսկ էութիւնը, որ հոսում է մարդու (տարբաշիչ) մեջ, նրան դարձնում է կենտրոն, նպատակ որոշիչ, ինչպէս կշեռքի մետր կամ միջին կետը: Այս տողի մեջ բառացիորեն անբացատրելի է մնում առ բառը, բայց մեզ թվում է առ այստեղ գուցէ նշանակում է կշեռք:

4. Տաղեբամ բառը մեզ չի պատահել բառարաններում: Կազմված է տաղ և երամ բառերից և նշանակում է մի շարք տաղեր, երգեր կամ երգերի խումբ:

12 ՂԱԶԱՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ունեցել է մեկ հրատարակութիւն (C):

1. Անին «Արմատական բառարանում» վերցված է բայական ձևով— ահիլ և տրված է հավանական բացատրութիւն՝ հավաքվել, մի բան դիտելու համար չորս կողմը շարվել: Տեքստում բոլորովին էլ այդ իմաստը

չունի: Նարեկացին նկարագրում է, թե ինչպես մանուկներն ու ծերերը դիմա-
վորում են Քրիստոսին: Մեզ թվում է՝ բառի ուղիղ ձևը ոչ թե անիլ-ն է, այլ
անել (արաբ.), որը բայ չէ և կապ չունի վախեցնելու, սաստելու հետ, այլ
ուղղակի, որպես ժողովրդական բառ, նշանակում է հասակն առած, տա-
րիքավոր մարդ: Բովանդակության մեջ հենց այս իմաստն էլ ունի և վերջ-
ված է հոգնակի թվով: Մեր բացատրությունը ավելի հավանական է դաս-
նում, երբ օրինակներ ենք վերցնում նույն թեմայով գրված շարականներից,
որոնց մեջ հիշված են ծերերը մանուկների (տղաների) հետ միասին:

**Մերք ոստովք ձիրենեօփ
և տղայք արմաւենօփ:**

2. Բաւեան համարված է անհայտ և անբացատրելի բառ: Նույն տողի
մեջ խոսքը ծառերի մասին է: Նոճը՝ կիպարիսն է, հետեաբար բավյանը
նույնպես որևէ ծառի անուն պիտի լինի: Յողը նրանց արտադրած խեժն է:
Բավյանը գուցե բեվեկն ծառն է, բայց իր ուղիղ ձևով չի գրված՝ որպես
բեւեկնոյ (սեռ. հոլ.), որը նարեկացու մոտ անսովոր երևույթ չէ: Այս ծառի
խեժը օգտագործվել է որպես դեղ: Մի այլ հանգամանք ևս նպաստում է
մեր բացատրությանը. հավանաբար բեվեկներ կամ բավյանը աճում էր
Վասպուրականում, և Նարեկացին ծանոթ է եղել այդ ծառին, որովհետև
նրա հյուսիսը Հայաստանում հայտնի էր «Վանա խեժ» անվամբ:

3. Նարեկացին իրեն համեմատում է ծարավ բավնու հետ, այդպես է
անում իրեն մեղապարտ ճանաչելու համար, իսկ նոճի հասկացողության
մեջ նա ըմբռնում է մարուր և անարատ հոգի ունեցողին:

13 ՂԱՋԱՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ունեցել է մեկ հրատարակություն (C):

1. Այս բանաստեղծության մինչև 15-րդ տողը գծվար հասկանալի է,
հատկապես առաջին տունը, որ ուղղակի անհասկանալի է, բայց մենք մո-
տավորապես ըմբռնեցինք իմաստը:

2. Հաջորդ հատվածի բովանդակությամբ, որոշ փոփոխություններով կա
մի վարիանտ, որ տպվել է CD-ի մեջ: Համեմատությունը ցույց է տալիս,
որ այս հրատարակությունների ձևագիրը աղբյուրները եղել են ստրբեր:
Մենք մեջ ենք բերում D-ի փոփոխակը:

Աւետիս մատուցանեմ նոյն Մարիամու
և Մարայի այն սիրելի ֆերցն.
Քորֆ քորֆ նորախնդիրֆ
յառաջ եկեալ փրկչիմ:
Փրկիչ տէր Յիսուս Քրիստոս,
բէ աստ էիր դիպեալ
եղբայրն մեր ոչ մեռանէր:

Ե՛կ և տե՛ս զաղէտս աղէտական սրտից,
սրտից ճանապարհ անեղինանեմ,
նեմ ցովիներնրաց գերեզմանին դուռն:
Գուռն վիմակառոյց, հրաման արժունոյն
դուք վեր առէ՛ք զվէ՛մդ:
Վէ՛մ արբնաչեայ մեզ նոր անետիք,
անտատուր տեսիլ:
Տեսիլ զարմանալի զարմանալի զարմանք,
սփանչելիք սփանչելագործ խմբից:

14 ՏԱՂ ԽԱԶԻ ՎԵՐԱՅՄԱՆ

Ունեցել է երեք հրատարակություն (ABC) և հինգ վերնագիր՝ «Տաղ սուրբ յարութեան», «Մեղեղի յարութեան», «Առ սուրբ խաչն աստուածընկալ», «Տաղ վերացման խաչին», «Տաղ սրբոյ խաչին»:

15 ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ունեցել է երկու հրատարակություն (CD) և երկու վերնագիր՝ «Յարութեան», «Այլ տող յարութեան ի նարեկացույ»:

1. Եզեռակի բառը անսովոր բարդություն է որպես թվական արտահայտություն (եզակի և եռակի): Աստվածությունը և՛ եզակի է, և՛ եռակի, որպես երրորդության մի մասը: Այդ բառը կա միայն Քրիստոսական բանաստեղծության մեջ, որպես «մեկ և երրեակ, եռանձնեայ մի աստվածություն»:

2. Գևտ փառանքիբայջ—բառանյութից կազմված գետ, բայց այսպես անիմաստ է: Հավանաբար նարեկացին նկատի ունի Եղեմի (գրախոս) շորս գետերը, որ նա կոչում է նաև փառանքիբայջ (տես «Եկեղեցույ» տաղը): Նարեկացին ցանկանում է ասել՝ երկնքի փայլը պաղպաղում է գետի մեջ և գետն ու երկինքը կազմում են աշխարհի (գրախոսի) սահմանը:

3. Այս տողը ոչ մի այլ կերպ չկարողացանք հասկանալ, քան՝ ինչպես թարգմանեցինք: Տողի միտքն այդպես հասկանալու հիմք է տալիս մեզ «կողմնապատիր պարտեաց» արտահայտությունը, այսինքն՝ կողակից եվալից խաբված, պարտված: Նարեկացին ուղղակի կամենում է ասել, թե այն կողից, որից աստվածը ստեղծել է եվալին, հանելով առաջին մարդու՝ Ադամի կողաշարից, այդ կողից խոցված է Քրիստոսը:

4. Այս պատկերավոր արտահայտությամբ նարեկացին ցանկանում է ցույց տալ աստվածամոր սուզը աստվածորդու վրա, որ նա արցունքներով պսակել է նրա գլուխը:

16 ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

1

Ունեցել է մեկ հրատարակություն (C):

Ռւնեցել է մեկ հրատարակութիւն (D):

Գր. Նարեկացուն պատկանելու իմաստով կասկածելի է համարվել նաև այս երգը: Որովհետև այդ կասկածանքները լուրջ հիմքեր չունեն, ուստի չենք անդրադառնում դրանց քննութեանը: Այս երգը, կարծում ենք, մի հատված է համեմատաբար ընդարձակ տաղի, որը ամբողջութեամբ մեզ չի հասել և Նարեկացու տաղերի հետ ունի հարադատութիւն: Նարեկացին դարձյալ մեղադրում է աստծուն՝ հիշեցնելով նրա խոստումը, որ մարդկութեան հետ կլինի մինչև աշխարհի վախճանը: Այս երգը Նարեկացու տաղերի մեջ հետաքրքիր է իր աշխույժ ուրբի տեսակետից, շեշտադրութեան կանոնավորութեամբ, յամբական, անապետական ոտերի հատու ընթացքով և անդամների մեծ մասամբ կանոնավոր հաջորդականութեամբ:

17 ՔԱՌԱՍՆԻՑՆ

Ռւնեցել է երեք հրատարակութիւն (ABC) և երեք վերնադիր՝ «Քառասնիցն», «Սրբոց քառասնից», «Տաղ սրբոյ քառասնիցն»:

1. Ուրախ, ուրախութիւն: Տեքստում այս, հաջորդ, ինչպես և քառոց բառերը հոգնակի են: Չափի համար ստիպված ենք եղել վերցնել եզակի առումով:

18 ՏԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻ

1

Ռւնեցել է մեկ հրատարակութիւն (E):

Այս բանաստեղծութիւնը ևս չկա Նարեկացու երկերի ժողովածուներէ մեջ՝ հավանաբար այն պատճառով, որ երգի աղբյուրը հրատարակիչներին ծանոթ չի եղել: Յալոք մեզ այդ մասին ոչինչ չի ասում նաև «Անահիտ» հանդեսը: Բայց ժողովածուներում չլինելը հիմք չէ հրաժարվելու այդ և նման բանաստեղծութիւններից որպես ոչ Նարեկացու ստեղծագործութիւններ: Այս բանաստեղծութիւնը Սողոմոն արքայի տաճարի կառուցման և ներքին զարգարանքների գեղեցիկ պատկերացումն է: Նկարագրութիւնները, այլաբանութիւնները, համեմատութիւնները և պատկերելու յուրահատկութիւնը հարադատ կապ ունեն հեղինակի շինութեան և արվեստին վերաբերող երգերի հետ, լեզուն հարուստ է կառուցման և նրա նյութին վերաբերող բառերով, տաղաչափութեամբ շատ մոտ է «Յարութիւն» տաղին, ունի չափի բազմազանութիւն՝ արտահայտված տողերի ամբողջ խմբերով, բարդոտայա, խառն ոտանավոր է: Այլաբանութիւնների սիստեմի կիրառութիւնը այդ երկու բանաստեղծութիւններում նույնն է:

1. Հռչակել բայը կիրառված է այնպիսի կապակցութեամբ, որ դժվար չէր հասկանալ հեղինակի միտքը, ինչպես թարգմանեցինք, թեև հռչակել իսկապես քնդեալ չի նշանակում, բայց հռչակի (ձայնի) և քնդալու միջև իմաստային ընդհանուր կապ կա:

2. Այստեղ Նարեկացին նկարագրում է տաճարի որմնանկարները, զարգարանքները, ինչպես նաև թռչունը (հավանաբար տաճարում նկարված հսկայական մեծությամբ քերովբեներից մեկը, որ պատրաստված է ոսկյա, արծաթյա կամ գուցե և այլ մետաղյա թիթեղներից: Արկանել բայը, տողի իմաստից կլնելով, ստիպված էինք թարգմանել կհրանել բայով, թեև առկանել, կհրանել չի նշանակում:

2

Ունեցել է մեկ հրատարակություն (C):

1. Աւարբ արտահայտությունը հարմար գտանք թարգմանել շուտով: Խոսքն այստեղ եկեղեցու մասին է, որ որպես թե իշնում է երկնքից, ավելի ճիշտ՝ նրա լուսեղեն պատկերը կամ գաղափարը:

2. Հրատարակությունը ծանոթացնում է, որ այսպես խանդարված, եղծված է եղել այն ձևազրում, որտեղից արտագրված է տալը: Այս բանաստեղծությունը մեզ չպատահեց մեր նշած և ո՛չ մի ձևազրում, որպեսզի հնարավոր լիներ աղավաղումն ուղղել:

19 ԵԿԵՂԵՑՈՒՆ

Ունեցել է երկու հրատարակություն (BC) և երկու վերնագիր՝ «եկեղեցու», «Առ հարսանեաց սուրբ եկեղեցի»:

1. Տեքստի մեջ «Գուշակի և յէից երկնատես միակին» տողը (մարգարեներին կամ գուշակողների՝ Նարեկացին նմանեցնում է քերովբեների հետ), գուցե տեքստի կետադրության կամ որևէ այլ պատճառով, մնում է առկախ: Բնչի՝ հետ են կապվում գուշակները (մարգարեները)—երկնային խորհուրդն հայտնելու, թե՞ գուշակելու (այս վերջինը որոշակի ասված չէ): Կետադրությունը խանդարում է դարձյալ կապակցության մեջ հասկանալ «Խորհուրդն եթերեան նոյն ի թերս հողմոց» տողը, իսկ տողի բովանդակությունը հակասում է այդ կետադրությանը, որովհետև «Եթերեան» (երկնային) խորհուրդը աստվածը («տեսանողն») հայտնի է դարձնում երկու հրեշտակների միջոցով («ի յերկուց թուրեկուցն»): Գուշակները ևս այդ խորհուրդը, այսինքն՝ հայտնություն լուրը տարածում են երկրում: Հեղինակի տեքստի վրա նոր տող չավելացնելու համար շորթորդ առկախ տողը («Կերին ավետիքն երկրումն է տարածվում») կապեցինք հինգերորդ տողի հետ, առանց իմաստը խանգարելու, այսինքն՝ ոչ թե ինքը ավետիքն է տարածվում, այլ այն տարածում են գուշակները: Այս երգը ընդհանրապես խրթին, գրեթե անհասկանալի այլաբանություններ շատ ունի:

2. Քառադեան—եղեմի չորս գետերը, թեև ակաղ. Հ. Աճառյանը բացատրում է այլ կերպ: Ըստ Աստվածաշնչի Եղեմը (դրախտը) ունեցել է չորս գետ կամ մի գետ չորս վտակներով—Փիսովն, որ պատում է Եփրատա երկիրը, Գեհովն՝ Եթովպացոց երկիրը, Տիգրիս և Եփրատ:

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ս ՀԵՐՄՈՆ և ՍԱՆԻՎՍ.—Պաղեստինում միևնույն լեռան գազաթմների անուաները:

ԲԵԹԱՆԻԱ.—Քաղաք Պաղեստինում, Ջիթենյաց լեռան մոտ:

ԲԵԹԵԼ.—Այդպես է կոչվել քանանացիների երկիրը, որտեղ բնակվեց չափոր տոհմապետը: Այս անվամբ հայտնի է նաև նույն տեղում գտնվող լեռը և քաղաքը, որ առաջ կոչվել է Լուզա:

ԲԵԹՂԵՆԵՄ կամ **ԲԵԹՂԱՆՆԵՄ.**—Քաղաք Պաղեստինում, գտնվում է Երուսաղեմի հյուսիսային կողմը: Բեթղեհեմը եղել է քրիստոնյաների համար ուխտատեղի և ըստ նոր կտակարանի ավանդական տեղեկություն՝ այնտեղ է ծնվել Քրիստոսը:

ԳԱԼԻԼԵԱ.—Լեռ Պաղեստինում, շրջան Գալիլեական լճի մոտ:

ԳԵՐ.—Այս անունը կրողը հավանաբար Գերազն է. որ մինչև Իսրայելի թագավորությունը եղել է Եզովմայի թագավորներից մեկը Գերազ հիշվում է և որպես լեռան անուն:

ԴԱՎԻԹ.—Հրեաստանի թագավոր՝ մեր էրայից մոտ 1000 տարի առաջ: Նա միաժամանակ համարվել է մարգարե և Աստվածաշնչի Սաղմունքի հեղինակ:

ԵՐՐԱՅԵՑԻ.—Հրեա:

ԵՂԻՍԱԲԵԹ.—Հերովդես թագավորի ժամանակ Սոզոմոնի տաճարի քահանա Զարարիայի կինը:

ԵՓՐԱՅԱ.—Այն շրջանը, որտեղ գտնվում է Բեթղեհեմը, երբ էմն նույնացվում է նույն քաղաքի հետ:

ԵՓՐԱՅԻՄ.—Քաղաք Պաղեստինում, որտեղ ապաստանում է Քրիստոսը հրեաների հետապնդումից իուսափելու համար:

ԻՍՐԱՅԵԼ.—Չափորը և Եսափը Աբրահամի որդի Իսահակի տղաներն էին: Չափորն երկրորդ անունով կոչվել է Իսրայել:

ԼԻԲԱՆԱՆ.—Լեռնաշղթա և դաշտավայր Ասորիքի հյուսիսային կողմը. հարուստ է անտառներով:

ԱՍՐՄԵՂ.—Անտառապատ լեռան և տեղի անուն Պաղեստինում, Հորդանան գետի մոտ:

ԵՆՐՈՆ.—Ձոր Երուսաղեմի արևելյան կողմը, որտեղ եղել է մեծ պարտեզ, զբոսարան և այգի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ.—Եղիսարեթի և Ջաքարիա քահանայի տղան: Նա Քրիստոսի հայտնվելու մարդարեն էր, միամամանակ նրան մկրտողը՝ Հորդանանում: Այս պատճառով էլ հետագայում Կարապետ և Մկրտիչ մականուններն է ստացել:

ՀՈՐԳԱՆԱՆ.—Պաղեստինի զլխավոր դեղը, որ համարվել է սուրբ՝ Քրիստոսի այնտեղ մկրտվելու պատճառով:

ՀՈՒՊԱ.—Հակոբի տղան: Հստ Աստվածաշնչի եղել է հրեաների առնմապետներից մեկը: Այդ առնմբ հետո Պաղեստինում հասել է թաղավորության: Նույն անվամբ հայտնի է Քրիստոսին մատնողը, նրա աշակերտը:

ՄԱՐԹԱ.—Ղազարի մյուս քույրը:

ՄԱՐԻԱՄ.—Աղքատ Ղազարի քույրը, որ լվաց Քրիստոսի ոտքերը և սրբեց իր մաղերով: Նույն անվամբ հայտնի է Քրիստոսի մայրը:

ՄՈՎՍԵՍ.—Հրեաների մարդարեն, որ Մինա լեռան վրա ատածույց ստացավ տասը օրենքներ և իր ժողովրդին Եգիպտոսի փարավոնների դերությունից ազատեց և առաջնորդեց գեպի Հրեաստան:

ՊԵՏՐՈՍ.—Քրիստոսի նշանավոր աշակերտներից և առաքյալներից մեկը:

ՊՈՂՈՄԵՆՈՍ կամ **ՊՈՂԵՄԵՆՈՍ.**—հայտնի է Ֆիլադելֆոս կամ Եղբայրասեր անվամբ, Եգիպտոսի թաղավորը՝ մեր էրայից մոտ 3 դար առաջ: Նա եղել է հելլենական կուլտուրայի ուժեղ տարածողներից մեկը՝ Եգիպտոսում: Նրա նախածնունդովսմբ երբայական լեզվից Աստվածաշունչը թարգմանվել է հունարեն, որը կոչվում է «Եօթանասնից», թարգմանված 72 ռարբիների ձևերով՝ Աղեքսանդրիայում:

ՍԱԲԱ.—Աստվածաշնչում Սարա անունը հիշատակված է մի շարք տարբերությամբ՝ որպես Քուշի որդին, Քամի թուրք, որպես Աբրահամի թուրք, որպես թագուհի, որ լսելով Սողոմոնի իմաստության մասին՝ նվերներով գալիս է նրա մոտ Հիշվում է և որպես երկիր, Աբրախայի հարավ-արևմտյան կողմը՝ Սարա քաղաքով, որտեղ կան կնիքուկի ծառեր: Նարեկացու մոտ այս վերջին իմաստով է:

ՍԻՈՆ կամ **ՍԻՈՎՆ.**—Երուսաղեմի հարավ-արևմտյան կողմի ամենաբարձր բլուրը, որտեղ բնիած է Երուսաղեմի մի արվարձանը: Միտն կոչվել է Դավթի կամ Վերին քաղաք, որտեղ էին միջնարբերը և թագավորի պալատը: Միտնում Սողոմոնը կառուցեց իր տաճարը:

ՍՈՄԱՅՅԻ.—Գեղեցիկ և ջահել մի աղջիկ Աբիսակ անունով, որի հետ իր զառամ հասակում ամուսնանում է Դավթի արքան:

ՍՈՂՈՄՈՆ.—Հրեաստանի թագավոր, Դավթի տղան: Հիմնում է Երուսա-

զեմի տաճարը: Մոզոմոնը համարվում է Աստվածաշնչի առակների և հոչակալուր «Երգ երգոց»-ի հեղինակ:

ՔԱՌԱԳՅԱՆ.—Եղեմի չորս զետերը: Ըստ Աստվածաշնչի Եղեմը (ղբախտը) ունեցել է չորս զետ կամ մի ղետ՝ չորս վտակներով—Փիսովն, որ պատում է Եվիլատա երկիրը, Գեհովն՝ Եթովպեացոց երկիրը, Տիգրիս և Եփրատ:

ՔԻՐԱՄ կամ ՔԻՐԻՄ.—Փյունիկիայի Տյուրոս քաղաքի թագավորը, որ Լիբանանի անտառներից եղևնափայտ, մայրիի փայտ, հյուսներ և որմնագիրներ է ուղարկում Մոզոմոնի տաճարը կառուցելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	էջ 3
Տաղերի հրատարակության առթիվ	36

ՏԱՂԵՐ

Ծննդյան	42—44
Մեղեղի Նարեկացու	44—45
Մեղեղի աստվածածնի	46—47
Մեղեղի ծննդյան	48—49
Տաղ ֆաղցրիկ	52—53
Մեղեղի հարության	56—57
Վարդավառին	58—59
Հարության	62—63
Տիրոջ փառանջօրյա գալստյան առթիվ	66—67
Հոգու գալստյան	70—71
Հայտնության	72—73
Ղազարի հարության առթիվ	82—83
Ղազարի հարության առթիվ	84—85
Տաղ խաչի վերացման	88—89
Հարության	90—91
Համբարձման	94—95
Քառասնիցն	100—101
Տաղ եկեղեցու և սուրբ սանարի	104—105
Եկեղեցի	110—111

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասուկ անունների բառարան	— 123
------------------------------------	-----------------

Նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ
Գեղ. լամբազիբ՝ ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Տեխ. լամբազիբ՝ Ռ. ՔԱՀԱՇՅԱՆ
Վերստուգող սրբազրիչ՝ ՕՆ. ՓԱՆԻԿՅԱՆ

ՎՖ 02488

Պատվեր 1321

Տիրաժ 10000

Հանձնված է արտադրութայն 13|X-1956 թ.

Ստորագրված է տպագրութայն 13|V 1957 թ.:

Թուղթ 84×108¹/₃₂, տպագր. 8,0 մամուլ,=6,56 պայմ. մամ., հրատ. 5,5

մամուլ+1 ներդիր:

Քիչը 3 ու. 70 կ.

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրութայն հրատարակչութայն են հրատարակում և պոլիգրաֆարդյունաբերութայն Գլխավոր վարչութայն 1-ին տպարան, Երևան, Ալավերդյանի վ. № 65:

